

Co-81

Lunc

594

2009

Spec.

Spec.

571

01 JAN 2009

ՀԱՅ
594

Ա Տ Բ Պ Ե Տ

Թ 571

Ք Ա Ռ Յ Ե Լ Ի Կ

Ա Բ Պ

Շիրակեցիների կեանքից (1840-ական թ.):



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպ. Մ. Վարդանյան, Վելյամին. պ. ճ. № 7.

1898

(3362 84)
594-2009

Дозв. Цензурою. 22 Ноября 1897 года, г. Тифлисъ.



ՔԱՌԵՎԱԿԻԿ

Ա. Է. Պ

Շիրակեցիների կեանքից (1840-ական թ.):

Ա.

— Տիգօ, շան ցնդնած, կը զարկեմ մէկ աչքու էլ ևս կը քուացնեմ, Աստծու լսից կը զրկեմ, ասաց գիւղից դուրս գնացող հովհին մղդախ Կիւրեղը, աչքերը կատաղութիւնից չուած: Հովհուր, որ նրան անսիրջ հեգնական շարժումներով էր պատասխանելի, դարձեալ ուսերը թօթւեց և նախիրի ետևից մահակը բարձրացնելով՝ կանչեց—Հա, հա, հա...

Մղդախ Կիւրեղը աւելի կոտրւած կրկին բռուաց չորանի ետևից:

— Մուկ էլ դու Գոյլո քէհենց դռնից անցիր, ահս ոտքդ կը կոտրեմ, թէ չէ:

— Զըրթ, պատասխանեց ետ դառնալով չոքանը, որով բոլորովին կատաղեցրեց ալեոր մղդառն, որ առանց ամաչելու կուացաւ, մի քար առաւ ու շպրտեց չորանի

ևաեից ասելով—այ ոչ ու փուչ, կեցիր, հալբաթ հախ ու զելու կը գաս, թէ քոռ գրոշ ստանաս՝ դու իմ մեռելս լացուր: Հովիւն արդէն վտակն անցել, բաւական հեռացել էր. քարը ոչ միայն չհասաւ, այլ հայհոյանքներն անդամ բողոքովին անլսելի մնացին: Գլուխը շարժելով դարձաւ դէպի տուն մղտմին.

— Տօ, աշխարհը քար ու քանդ եղաւ, կարգն ու օրէնքը վերցաւ, թիզ ու կէս լակոտին էլ չենք կրնալ զըսպել: Ո՞րտեղ գտնեմ Ահմադ փաշան, որն անօքէն տեղովը հասկացաւ սրա ոչ ու փուչ հօրն ու կախել տւեց... Կախաղանն ու ջալաթն (գլուխ կարող-դահիճ) էլ վերցաւ աշխարհից: Ո՞չ մենծի պատիւ մնաց, ոչ պատիի, ոչ համփա, ոչ չորան, ոչ մղտմի, ոչ քէհա, ոչ տէրտէր, քուլի հաւասարւեցին պրծան: Գող Պատիկի տղան իմ որդուս դէմ մէյրան գայ ու Գալօ քէհի աղջկայ վրայ աչք տնկէ: Քաղցած փորը վկլսում է, չոտ արխալուղի մէջ դողում է, կեանքը անցուցել է ուրիշի գրանը ծառայելով, փորը կըշտացուցել է սրա-նրա սեղանի փշրանքով, մէրը հալսի բանն անելով չորցել է. մի բլրիկած տուն ունի, որ մեր հաւի բնիցն էլ պատիկ է, եկել է սոք է զցում մղտմի Վիւրելի որդու հետ: Տօ, մարդու շնորհը էլ է ունենայ, էլի գլուխը քարը, թիզ ու կէս բոյ ունի, կաշու վրայից սոկրները մէկ մէկ կարելի է համրել, աւանդը արարից չի ջոկւիլ, քսան տարին անցուցել է դեռ երեսին տղամարդու շնորհը չըկայ քեօսայ: Աչքի մէկը Զքէի տղերը զարկին փշացուցին, (փարու բռւսնի զրան կուրացնող ձեռքերի վրայ), երեսի չէշերի մէջ բռւսմ լաբլաբու զցես, ոչ մէկը փար չի թափելի, եղ օրին գէշ կաստի ովես էին մէջքին չի դալ ու զիշեր ցերեկ կտրել է խեղճ Ասլիի ճարն ու հանապարհը: Հան, ես քոռ մօրն ինչ ասեմ, շուն ցնդնէր ու անցնէր աւելի լաւ չէր...

Մղդոմի Պիւրեղը պտապտալով փողոցից անցնելիս, նրա զայրոյթը նկատեց հարեան Թորոս աղբերն ու հարցրեց — Էլի ինչ է եղել, մղտմի, ինչի ես նեղացել...

— Էլ ինչ պիտի եղնի, ՚նեռը ծնւել է, աշխարհիս վերջը հասել: Տօ, գեղւորի մի մարդավարի չորան չգտաք, գնացիք եկաք գող Պատիկի տղին բռնեցիք: Իրիկունը նախիրը բերելիս կովին հառից գցել է, ոտքը կոտրել...

— Բան չի ասիլ, մղտմի ջան, ես կը կապեմ. ինչ անենք մեր աղքատն է, մենք պիտի տիրութիւն անենք: Փուրդ որ բերենք՝ գրանից լաւ չորանութիւն անելու խօչէ: Փառք Աստծու, դեռ մինչև օրս դրա ձեռքից մի մողիկ անդամ գողցել չեն: Տնաչէնի գիւլի ձեռքից թարաքեամեքը սեաման-Ալլահ՝ են կանչում:

— Ինքն էլ սատիկ, իրան գիւլէն էլ... Զաթի էդ չէ մեր տունը քանդողը...

Եւ ուղիղ, մղտմի Վիւրեղը վախենում էր Եղիկի գնդակից, թէ չէ վաղ գնացել Գալօ քէհի աղջկայ նշանն օրհնել էր տել Տէր Մէկին: Գալօ քէհին էլ հարուստ մըղդուուն չէ չէր ասիլ, բայց դեռ աղջիկը փոքր էր՝ տասնուշորս տարեկան. շտապելու ինչ ունէր: Եղիկը մի բանի անդամ մղդուու որդու՝ Բարսեղի ականջում ասել էր. «Գիւլա պաղեցնել թէ չես ուզում, հեռու ման արի Ասլիից» — և այդ խօսքը հասել էր մղդուու ականջին:

Բ.

Պիւր-Ղարաբիլիսի գիւղի առւակի ամենաստորին մատում գտնուում էր Քոռ-Եղիկի տունը, որ հօրը թողած միակ ժառանգութիւնն էր: Տուն ասելով պէտք է խական բառի նշանակութեամբ հնասկանալ, այլ աչքի առաջ բերել մի աչքանի բռստանի բալական, հողի մէջ փորւած և կոշտ

ու կոպիտ քարերով երեք կողմը երեք արշինի չափ բարձրացրած, կոռուրն էլ բարդի և ուռի ճղներով մի կերպ ծածկած: Դուռսը, որ իւր հնութեամբ հնագիտական արխիւր մտնելու արժանաւորութիւն ունէր, վարից, վերից մէկ մէկ թիզ բաց էր մնում ծածկելիս, որոնք լուսամուտի և օդանցքի տեղ էին ծառայում: Աչօվա չունէր և պատի մնացրող մասը հինգ վեց ջարակով կապած էր, որոնց միջոցները ներսից դրսից մալի թրբով ծեփել էր Եղիկի մայրը՝ Սօնա-բաշին, ձմեռուայ ցրտի աղատ ներս մտնելը արգելելու մարով: Նահապետական թնդիրը տան մէջն էր թաղած, որի ծուխը հաց եփած ժամանակ գուրս էր դալու գունից: Մի կողմը մի հին խսիր էր փուած, որը չառան խանի աւերածի ժամանակ սարդարի սարւագների ոտքի տակլքը բռելու պատիւ էր ունեցել: Մի կարպետ երեսով բարձ կար, որն այնքան մաշւած էր, որ աւարի նիւթ դառնալու չէր արժանացել Աղա Մահմադ խանի հրոսակների ձեռքը: Թարաքի վրայ մի սահան, մի լանդարի և մի թանջարա երեսում էին ժանդի մէջ կորած: Գուալկալում մի շերեփ, այն էլ կոտրած: Շալքում մութ տեղը կեղաստ անկողնու նման մի բան էր երեսում, որը կարելի էր փաթաթել և մի աքաղաղի վրայ բառնալով երեք օրւայ ճանապահն հեռու տեղափոխել: Վերջապէս դրան ետեղ երեսում էր հայկական տների կահկարասիների տարծանքը՝ բոլորակ խոնչան, որի երկու ոտքը կոտրած էր և հիւրերի տռաջ գրւելու համար Սօնան անկիւն ում երկու միահամափառ քարեր ունէր, որոնք լրացնում էին կարսիների պակասորը:

Այս տունը համարեան միշտ ցերեկը դատարկ էր լինում և գիշերն էլ շատ ուշ ժամանակ գալիս էր հանդստանալու, կազմուրւելու Սօնան և առաւօտները արշալոյսին հեռանում ծառայելու ուրիշ գոները: Ծառայելու

միայն մի փոր հացի և ուրիշի հին ու նորով, պառաւած— ճեղքածով հազնւելու վարձով: Նրա էնթարիից մի թեր բաշելը՝ հագար կարկատան կը թափէր. նրա գլխի չիթը աղտի մէջ կորած էր, միշտ բորժիկ և արմունկներն ու սրունդները մերկ, կուրծքը կիսով չափ բաց և դառնաղի արտասուքով աչքերը միշտ լցւած:

Գալնան ամպամած մութ գլշեր էր: Երկինքը անընդհատ փայլատակում և գուղուում էր: Տանը, քորջերի մէջ փաթաթւած պառկած էր Սօնան: Պառաւը տնքում էր սրտի խորքերից հառաջանքներ բարձրացնելով: Սկսք պառաւ ենք անւանում Սօնային համաձայն նկատողի աչքում նրա թողած տպաւորութեան, այն ինչ թշւառը քառասուուն և հինգ տարին գեռ չէր լրացրել: Սօնայի օջախի մուսիր տարիներով գաղարել էր, իսկ նրագը ամուսնու կախւելուց յետոյ հանգել էր և չէր վառւել: Լոի էլ կարիք չէր զգում, դատարկ տանը փնտրելու բնչ ունէր: Թէ և սովորական անկողնի վրայ տարածել էր իւր կարկատած շորերը, բայց դարձեալ գողում էր: Կուչ էր եկել պառաւը, գլուխն էլ ծածկել և շնչառութիւնը վերմակի տակ էր կատարում քիչ տաքանալու յուսով, բայց իզուր, ցուրտ ու խոնաւ օդը ազատ մտնում էր նրա ծածկոցների անթիւ պատառւածքներից: Մի կատու անդամ չունէր Սօնան, որ անկողնի վրայ պառկէր և թիկունքը մի քիչ տաքացնէր: Մկների մնունդ չգտած տան մէջ կատուն երբ կապրի:

Թէ և խրիսոցի հետ մի տեսակ հեկեկալու ձայն էր լուռում, բայց պառաւը չէր լալիս նա այնքան դառնութիւններ էր կըել, որ լալու և արտասւելու ընդունակութիւնը կորցրել էր: Ո՛չ գուռ ունէր, ոչ գրկից, որոնց կանչեր, և որոնք լսէին, գային իրեն օգնելու: Կարիք էլ չկար. նրա համար սովորական էր, ամեն իրիկուն միենայն տեսարանն էր կատարում, միայն թէ օդի ցրտութեան

և խոնաւութեան պատճառով երբեմն աւելի սաստկանում էր պառաւի տնքոցն ու խրխոցը: Այդ գիշերը սաստկադոյն տեսակիցն էր. պառաւն անկողին մտնելուց երկուերեք ժամ թէն անցել էր, բայց խաղաղացնող քունը գեռ վրան չէր եկել: Յաւի սաստկութիւնը նրան ակամայ խօսեցնում էր. պառաւը դէլին էլ տալիս, տրանջում էր, անիծում էր վիճակը. անիծում էր իւր ծնունդը, անիծում էր իւր բաղդը, իւր թշնամիներին, իւր մարդու դահճճներին, հարստահարիչներին, մինչև անգամ երկնային դատաստանը: Միթէ դեռ բիչ է, միթէ դեռ քաշերու եմ Աստւած, դափթարս դափիր ու ինձի տար, տար տար...

Փ.

Ես զիշերին մօտ գուռը բացւեցաւ, Եղիկը ներս մասաւ, պառաւը ոչինչ չսեց. նա մահակը և իլիկը վայր դնելուց յետոյ ասաց.

— Եզի, մզի:

— Զան, Եղիկ, այ տղայ, ուր թողիր նախիրն ու ելաբ...

— Նախիրն էլ սատկի, նախիրի տիրւտանքն էլ: Բողարն ու Բատարն (գամբու չներ) այստեղ են, իմ անունս էլ վրաներն է, մի վախենալ, մարդ չի անցնիլ Եղիկի նախիրն մօտովը:

— Եց տղայ, ինչի՞ ես եկել, ինչ ունիս մէջ գիշերին:

— Ուզում եմ թողնել ու գնալ Օսմանցու հողը. ինձ ինչ օգուտ նսխիրից. ահա տասնուհինդ տարի է սրանքա դուռը նորութիւն արի, սրանքա մայի համար կուի տի, կեանքս չխնայեցի, տարի չեղաւ, որ հախիս կէսն էլ ձեռքըս անցնէր. վայ էն անցածին էլ. որը ցորնով, որը չորով կառը, վառը... Հային ծառայեցի չեղաւ, թուրքին ծա-

ռայեցի չեղաւ, քաղաքում ծառայեցի չեղաւ, վերջապէս ինչպէս տեսնում եմ, ծառայելով մարդ դաւնալու չեմ:

— Տղայ, խելուար ինչ է, էղ ամենը էս օ՛ միտքդ ընկաւ:

— Զէ, էլ կեցողը չեմ, թէ գեղը մնամ, իմ գլխիս մի փորձանք կը բերեմ: Էս օր մղպսի Կիւրեղը ետևիցս գոռում էր—կեցիր, հալբաթ հախ ուզելու կը գաս, թէ գոռչ հախ ստացար, պարծեցիր: Էս անձրեին, քամուն ես հոգիս բերանս առած նրանց նախիրը ամմենալաւ. տեղերը տանեմ արածեցնեմ, օգուտս ինչ...

— Օսմանցուի մարդիկն էլ հոգից չեն, այնտեղ նորար, այստեղ նորար, քեզ փաշայութիւն խօ չեն տալ:

— Ես նորար էլ չեմ դառնալ...

— Եղ էն Օսմանլին չէ, որ հօրդ կախեց:

— Թէ ձեռքերն ընկնեմ թնդ կախեն, կախւելը չորանութիւնից գիշ խօ չէ, մի անգամ մեռնել պրծնել...

— Լաւ, լաւ, Եղի ի ծանդ եկել են: Եյտեղ թարաքը գաթա եմ դրել, ինձ փայ տւին Մղգսենք, չկերայ, վը առ կեր ու գնա գործիդ:

— Եղ ինչ գաթա է.

— Ես գիտեմ, խնամախօս պիտ երթան, ինչ է.

— Խնամախօս... էղ ինչ խնամախօս է...

— Ես գիտեմ, տսաց Սօնան և հազիւ տաքացրած տեղից գլուխը բարձրացրեց նստաւ: Տղայ, դուռը վրայ դիր, օֆ, ինչ ցուրտ է, գողդողս բռնեց:

— Հալբաթ ինչ խնամախօս է:

— Գիտեմ, ինձ կասեն... Գիտես թէ՝ էդուց միտք ունեն Պալօ քէնի տուն երթալ...

— Գալօ քէնի...

— Հա, օդուլ, Գալօ քէնի... կրկնեց պառաւը խորհրդաւոր ձև չտալով խօսակցութեանը և սրտի խորքից հասա-

Հեց: Բաւական լոռովթիւն տիրեց և երկուսն էլ խոր մտածութեան մէջ ընկան: Վերջապէս հարցրեց Եղիկը.
— Պօնադ խօ չունէր զիշերս մղդսին:

— Զէ:

— Ախարտանքը, տղէըը, ամենը տունն էին:

— Քիւլի: Մի քիչ լոռովթիւնից յետոյ ասաց կրկն Եղիկը.

— Ազի, ես գիշերս կ'երթամ, էգուց թէ քեզ բան հարցնելու կը լինին, ասա՞ խաբար չեմ:

— Տղայ, մւր... ինձ ես թողնում...

— Մի ամիս էլ կեցիր, քեզ այնպէս տեղ տանիմ, որ էլ սրա նրա դուռը չառայեն, ուրիշները քեզ ծառայեն...

— Որդի, ես բան չեմ ուզիր, դու լաւ եղիր, դու ազատւիր էդ անօրէնների ձեռքից, ինձ բան հարկաւոր չէ... մղդսի Կիւրեղի առնը աւերտի, ինչպէս նա աւերել առեց քո հօր տունը, Ահմէդ փաշային կաշառելով, սուսու մուտ, դուր ու մուր բսելով քո հօր վրայ: Տուն էլ ունէի, ծառայ էլ ունէի, տունս բարի էլ, կարողութիւն էլ կար... Է՛հ, որդի, մոռացիր էդ դատարկ բաները, գլուխով քաշ գցի, հախտ կրստանաս, քէհէն խոստացել է, որ քեզ վարուցանքի հող տայ, բարի հօրդ տներն էլ ազատես պարտատիրոջ ձեռքից...

— Թող էդ քարողներդ, ես քեզ ինչ որ ասացի՞ լաւ միտքդ պահիր:

— Տղայ, ես կը խելուիմ, ես կը մեռնիմ առանց քեզ...

— Ես էլ կը խելուիմ, եթէ էլի գլուխս կախած մղդուի Կիւրեղի մալերը արածելու տանեմ տարին տասներկու ամիս առանց հախի սարելում, ձորերում մի չոր հացով փորս կշտացնեմ և թողնեմ որ մղդսու դնդրշած տղէն երթայ նշանածս ձեռքիցս լոլէ...

— Երազներ մի առանի, Գալօ քէհէն քեզ աղջիկ չի

տալ, զուր տեղը դուշմաններդ մի շատացնիլ: Տուն չունիս, տեղ չունիս, երկնքի տակ չոր գլխիցդ ջոկ բան չունիս, կուզես Գալօ քէհի աղջիկը հարս բերել:

— Հա, եթէ իմ տասնեռութ տարւան հախը չուտեն, ինձ հասնելիքը եթէ այսօր բերէին, համբէին, ես էլ կը դասնայի մէկ համփա, մղդսի, ես էլ կունենայի նախիր, իլլսի, լաւ մատակներ... Հօրս վաշայի ձեռքից ազատելու համար Աւագ ամին յիսուն մանէթ է տւել (հազար դուրուշ) տներիս տիրացել է... Քանի քանի յիսուն ուուրի պիտի խարջես, որ այնպէս անել շինես:

— Է՛հ, ինչ անենք, մեր բաղդն է, որդիի...

— Էդ քու խելքի բանը չէ, աշխարքում թէ գլուխըդ կախես, մինչի մահ վզիդ նատողներն անզակաս կըլինին, ասաց ու գուրս եկաւ Եղիկը:

¶

¶ Բ րան առաջ մի քիչ կանդ առաւ, ուշը հաւաքած անշարժ և անշուկ ականջ գրեց: Միայն մեղմ անձրեսի ձայնն էր լսում, ամեն մարդ, ամեն կենդանի խոր քնի և հանդստութեան մէջն էր: Տների պահպան շներն անգամ մտել էին իրենց բները, կրուչարել մնացել: Այդ անշարժութեան մէջ Եղիկի մտքից չէր հեռանում իւր անցեալի զարհուրելի, տխուր պատկերը, և ներկայ սոսկալի կացութեան մէջ բարեյաջող առզադայի մասին յօյսը կրցցը էր:

— Երեսուն մանէթի ամբողջ տարին ծառայիր, կըուկը եսիրի պէս գիշեր ցերեկ, արեի այրող ճառագայթների տակ, քամու զարհուրելի մոնչիւնի դէմ, անձրեսի, կարկտի, ձիւնի, բքի հետ, ամեն ըոսկ պատրաստ կեցիր գայլի, արջի, գիւենդի հետ կոււելու, հոդիդ բերանդ առ,

գլխիդ հետ խաղա, ինչ է, տարեկան երեսուն մանէթ ձեռք-
զցելու յուսով, և այդ աշխատութեանդ վարձը, որ ողջ գիւ-
ղից հաւաքում են արիւնդ ծծող համփաները, առանց
իրենց քիսային դիպչելու, իրենք կուլ տան ու գուն էլի տըկ-
լոր, էլի պատառուստած, էլի դարդակ տրորէ փորդ ու ախքա-
չէ: Ծնածս գիւղումն էլ ինձ զրկեն, քովի գիւղումն էլ, հայն
էլ, թուրքն էլ, ազգականս էլ, դուշմանս էլ... Հայրենա-
կան տներդ ուրիշը նստի, պատենական արտերդ ուրիշը
վարի, մարդերդ դուշմանդ քաղէ, ինչ է, ինչ է... հօրդ կա-
խել են, դու որբ ու խեղճ ես մնացել և մինչև մահդ էլ դու
զնա աշխատիր, որ մղսի Խրեղի, Աւագ ամու, Գալօ
քէհի, Կուրդին աղօրօ տղերքը հանգիստ ուտեն.. Օխտը
տարւայ սիրականդ էլ, Ասլիդ էլ, դնդրոշ Մուքէն ձեռքի-
ցըդ խլէ... Զէ, չէ, դրկիցներ, չէ. Եղիկը էլ չէ, թող ինձ էլ
կախեն, գլոխս կտրեն, գիւղի բռնէն..

Եղիկը կամաց կամաց առաջ գնաց. կարծես կատւէ
նման ճանկերը մօտ էր քաղել. գնում էր առանց քայլերի
ձայնը բարձրացնելու, Մի քանի օճապտոյտ թաղեր անց-
նելուց յետոյ, հասաւ Գալօ քէհի դրան առաջ, քարէ սան-
դուղքներից բարձրացաւ և երդիքի տախտակը վերցնելով
կամաց քիլարն իջաւ: Այնքան վարժ էր կատարում բոլոր
շարժումները, որ կարելի էլ կարծել թէ տան տէրն ինքը
լինէլ և ոչ ոքից երկիւղ չունենար: Երկու քայլ առաջ նրա
քայլերը դիպան խեղճ Ասլիին, որը սպասել, սպասել ու
քնել էր: Ո՞վ է իմանում թշւառ աղջիկը ինչ էր երազում:
Եղիկը մի քանի անդամ քաշեց նրա թեսերից, բարձրացըց,
բայց նա անզգայ կրկին գլորւեց գետին:

— Ասի, Ասի, խեղդւած ձայնով կանչում էր բոր-
բոքւած երիտասարդը, բայց անմեղ կոյսը չէր սթափում:
Ժամանակը սահում էր, Եղիկը դեռ շատ գործ ունէր կա-
տարելու. նա պարտաւորւած էր բուռն միջոցներ գործ

գնելու. Կռացաւ չորանը, երկու ձեռքերով գլկեց սիրեկա-
նին, երկու կողերից ու այնպէս բարձրացրեց, որ կարծես
նորածին գառ գրկած լինի հօտի հետ տուն հասցնելու հա-
մար: Սարսափելի էր Եղիկի կացութիւնը. գողում էր ամ-
րող մարմնով, կարծես ծնկները անձարացել, անկարող
էին դիմանալու և թեսերում ոյժ չեր մնացել կանգնած բըւ-
նելու իւր սրտի հատորին: Սրտաւորոփ նա կակաղում
էր.— Ասլի, Ասլի, և ցնցում հոգեակին: Յանկարծ աշ-
քերը բացեց Գալօ քէհի աղջիկը, զարթնեց, և թեսերը Եղի-
կի վզով տարածելուց և գանգուր մազերը շոյելուց յետոյ
— Եղիկ, դժւ ես հարցրեց— և գեռ պատասխանը չլսած՝
կրկին ոյժը սպասւեց, զլուխը կախեց նրա կլծքին, ուշը
անցաւ, մարեցաւ... Եղիկը ձախ թեսով գրկած Ասլիին,
մօտեցաւ բղուղներին և աջ ձեռքով զոխի ու ժախի աղի,
բայց սառը ջրով այնքան տրորեց թշւառ աղջկայ կուրծքն
ու ճակատը, մինչև նրան բոլորովին սթափեցրեց:

Բաւական երկար վշտակցելուց, երկար տատանւե-
լուց և զանազան առաջարաններ անելուց յետոյ, ասաց
Եղիկը.

— Ասլի, ես այս գիշեր անցնելու եմ Օսմանցու սահ-
մանը:

— Ինչի.

— Պատճառները շատ են, ասաց հաւաչելով Եղիկը:
Չորանութիւն անելով այս դարին մարդ գառնալ անկարե-
լի է, ուրիշ գործի պէտք է ձեռք գարկել:

— Եղ քու գործն է, ամա ..

— „Ամա“, չի ուզիլ, ութն օր, ութն օր ինչ կուզես
արա և մի թողնիր, որ մարդ քու գիշին դիպչի, ես ութն
օրից այստեղ կը լինիմ և քեզ՝ թէ հայրդ շատայ, կը փախ-
ցնեմ...

— Ութն օր... թէ ուշացամբ...

— Թէ սաղ եմ, էս օր ի՞նչ է, լուս կիրակի, մէկէլ
կիրակի գիշեր էլի այստեղ ինձ սպասէ:

— Աստւած քեզ հետ:

Երկու սիրահարները գըկւեցին, և Եղիկը մի կերպ
Ասլիի գըկից պոկ եկաւ, ճանկրտելով պատից վեր ելաւ,
և եկած ճանապահով ետ դարձաւ դէսի մղդսի Կիւրեղի
տունը, որ իրենց քոխից շատ հեռու չէր.

— Ո՛չ, քեզ առանց ոսկու, առանց խաս ու ատլաս
կտորների չեմ թողնիլ: Դու, որ ինձի, որբ և անտէրիս
սիրտ տալով գիւղի ամեն տղելքից բարձրացրիր, ես էլ
քեզ գուքսով ու զարդարանքով Ծէօրագեալի ըիւղի աղ-
ջլիկներից բարձրացնելու եմ, ասում էր Եղիկը մտքումք մղդսի
Կիւրեղի տանը մօտենալիս: Գալօ քէհի տունը մտնելիս էլի
զգուշանում էր, վախենում էր բամբասանքից և պատրաստ
էր զոհւելու Ասլիի պատիւը չ'արատաւորելու համար, իսկ
մղդսի Կիւրեղի տունը մտնելու համար նախագգուշու-
թիւնների չգիմեց. նա այդ տանն էր մեծացել, ամեն մի
մանրամասնութիւնները գիտէր և եթէ դէմը մէկը դուրս
դար, կարող էր մի առիթ դտնել և առանց կասկածանքի
պատճառ տալու հեռանալ:

Ե.

Եղիկը ձախ ձեռքը գցեց դրան ճակատի լուսամուտին,
ողջ մարմնով կախւեցաւ, աջ թելը լուսամուտից
ներս կոխեց և փայտի հաստ մանտալը ետ հրեց ու վար
իջաւ: Խիկը և միակ զէնքը՝ մանակը բակը թողեց և հիւրա-
նոցի սենեակի գունից ներս մտնելով շտկւեցաւ դոմի կող-
մը: Դոմից այնքան հանգարտ անցաւ, որ ոչ մի անսառուն
տեղից չշարժեց: Այդտեղից մտաւ ախոռը, մօտեցաւ մըդ-
դսի Կիւրեղի որդու՝ դնդրոշ Մուքէի միակ պարծանք Փա-

րաշին (Նժոյգ ձի-արաբական ընտիր տեսակից): Քէտհանը
ճանաչում էր Եղիկին, ոչ մի անսովոր նշան չարեց, բայց
Մուքէն Փարաշի ոտքը բխովիլ էր և նրա չւանի կապը դո-
չաղ տղի նման պատը ծակել, անցկացրել էր իւր ննջարա-
նը և գիշերները քնելիս մէջքովն էր կապում, որպէս զի
ձիուն փորձանքը պատահելիս իսկոյն լսի, դուշմանների հա-
խից զայ ու ծաղրի չմատնել ընկերների մէջ: Մուքէի նըն-
ջարանի գուռը տան (խոհանոցի) կողմից էր, որտեղից ան-
ցնելը կարող էր տան մեծ ու պատիկին ոտքի հաենլ: Կամ
պէտք էր մի կերպ բխովը կոտրել ձին դուրս հանելու հա-
մար, կամ պատի ծակը մի քիչ լայնացնել մտնել Մուքէի
բարձի տակից բանալին դուրս բերել: Եղիկը պառկեցաւ
ու փորձեց իւր փոքը մարմնով մի կերպ ներս սողալ այդ
ծակից, բայց հնար չեղաւ. զլուխը չէր մտնում, ճանկերին
ու մատներին գիմեց, մի քար հանեց ծակի մի կողմից և
ներս սողաց:

Մուքէն խորդալով հանդիսաւ քնած էր սենեակի մէջ
տեղը յատակի կրայ: Եղիկը չորս կողմը պայտա արաւ թա-
թերի ծայրին մանգալով. բանալին բարձի տակը չէր, սիսալ-
ւել էր իւր ենթագրութեան մէջ: Եղիկը զգուշութեամբ
ձեռքերը չուռ տւեց գօշակի չորս բոլորը, այնաւել էլ չկար:
Մուքէի արխալուղի, շալւարի չէրերում փնտրեց, չկար,
չգասաւ: Մտածմոնքի հետ քրտինքը պատեց Եղիկին և նա
յոցնածութիւն զգալով, հարբածի նման նոտեց բղուղների
տակի կոնդին: Մի քիչ զովանալու յուսով ձեռքերը հտերը
տարաւ, բղուղները շփելու և յանկարծ մի թել դիպաւ
ձեռքին, որ քաշելուն պէս բխովի բանալին մի դարբակ
կարասի դիպաւ և բաւական բարձր ձայն բարձրացրեց:
Այդ ձայնը սոսկացրեց և սթափեցրեց Եղիկին, որը գանձ
գողցովի նման պատրաստւեց գանձի տիրոջ հետ ցմահ կըռ-
ւելու: Բայց անսեղի էր նրա երկիւղը, Մուքէն խաղաղ

Խորդում էր: Քիչ սպասելուց յետոյ երբ ապահովացաւ Եղիկը, գգուշութեամբ բացեց Մուքեի սնդուկը, նրա նոր շուրերը հագաւ, զանգսալները կապեց, չստերը ոտքը բաշեց և իւր հները նրա մէջ տեղաւորելուց յետոյ դուռը ծածկեց: Պատից վար առաւ շշխանայ թւանքը, դարաբինէն, լաղ-գու փշտոֆը, խանջարը և ֆիշանգլները ու ետ սողաց ախոռը:

Ֆարաշի բիովը բանալուց յետոյ զգուշութեամբ մագեանի ոտքերին կապեց, որպէսզի եթէ Մուքեն զարթ-նի և քաշչ շղթան, բիսովի ձայնը լոէ: Յետոյ թամքեց քէահանը, և խանջարովը չի քէաներից մի քանի կտոր կտրեց կապեց նրա ոտքերին, որպէս զի աղմուկ չբարձրացնէ, Նժոյզը սանձելուց յետոյ նախ գնաց և գոմի միջի ճանապարհ կրկին քննեց, եւս եկաւ—Հայր, Որդի և Հոռ-փի Առը սաց ու քաշեց:

Ընձլեւ գարձեալ բարակ մաղում էր, երկինքը մուլթ, գետինը թաց, տեղ տեղ լճացած: Եղիկը ձին քշեց նախիրի կողմը, Բողարն ու Բասարն սարսափելի հաշոցով վրայ տը-մին և երբ իրենց հովի ձայնն առան՝ ձայները իջեցրին, բայց դարձեալ չըմիսում էին, կարծես ուզում էին ասել—մեղ ինչի թողնում-հեռանում ես:

Եղիկը մտաւ անձրեի տակ թրջաւած մալի մէջ և մըլ-դսի Կիւրեղի, Աւագ ամու, Կուրդին աղբօր ապրանքից տասը գլուխ լաւ կով ջոկեց և առաջը խառնելով դիմեց դէպի Արփաչայ, սահմանը անցաւ թուրքի Դարափիլսի մօ-տով, դիմեց դէպի Մօլլա—Մուսա, Սահմանապահ կաղակ-ներն ու Օսմանլուի սուլվարիները անձրեից ու ցրտից կուչ եկած քննել, մնացել էին, ոչ մի կողմից չնկատեցին նրան, Մօլլա—Մուսայի ծորով անցաւ սարը, կարճ ճանապար-հով դիմեց դէպի Աղբարա, Արշալոյսին նա արդէն անցել էր Շիրակի սահմանը:

այժմայ զանակ այժմացար միքամաթ, մարդ և միջն խանման մմաս գնոյն պարագան մաս Ասքարը այս մարդի

Արեւ բարձրանալուն պէս Աղբարա լեռան փե-շերի վրայ երևան անհամար հովւական շաղիր-ներ ու քիւրդեր և նրանց մօտերքը անթիւ խաչների հօ-տեր, որոնք կամաց կամաց բարձրանում էին արօտները: Հազարաւոր տեղերից ծուխ էր բարձրանում, բարձրունքում մնացած հատ ու կտոր ամպերի հետ միապաղաղում և ծածկում Ուկէ-Գլուխ (Արդ-Թէփէ) դիցուհու հանգստավայրը մահկանացուների աչքերից: Արեգակի անդրանիկ ճառա-գայթներից մի մասը այդ ամպերի վրայ կոտրւելով ետ էին դառնում ցոլալով, միւս մասը կողքերից սահելով ընկնում էին լեռան գագաթին ու լանջերին, որի վրայի մանիշակա-գոյն, դալար խոսերը իրենց վճիտ ցողիկներով պապղում էին թաւեցի նման: Եղիկը հանդարտ քայլերով քշում էր նժոյզը և առաջից գնում էին նախիրից ջոկած տասը կովե-րը: Ինչպէս նժոյզը նոյնպէս և ինքը պարտաւորւել էին կովերի քայլով գնալու և այդ դանդաղկոտ ընթացքը զանազան տիսուր մտքեր էր առաջացնում կլապիտնով զարդարւած հովեին:

— Ո՞քան յիմարութիւն արի, ասում էր Եղիկը մըտ-քումը, չորերս ինչի թողի ես զնդրոշի սնդուկում, այս հա-լաւը կարող է կասկածներ ծնեցնել այս թարաքեամաների մէջ, քանի որ լին ու երկար է ինձ համար:

Քանի առաջ էր զնում, այնքան սաստկանում էին կասկածներն ու երկիւղը, որոնք ստիպում էին նրան լեռ-նային ճանապարհներով, բնակութիւններից հեռու շարու-նակել իւր ընթացքը: Որքան աշխատում էր խոյս տալ այդ մտքերից, ուրիշ բանի մասին մտածել, հնար չէր լինում:

— Ցիմար մեծսրտութիւն, ասում էր ինքն իրան,—Մու-

599 - 2009

(3362-88)

քէին և մղդսի Կիւրեղին արաքեցնելու համար շորերս
թողի նրա սնդուկում, այն չորերը, որոնք ամեն ժամանակ
ինձ հարկաւոր են:

Երբեմն մտածում էր թողնել կովերին սարի գլուխը,
քել ձին, դիմել դէպի Արդահան, Օլթի, բայց ափսոսում
էր, նամանաւանդ որ փողի կարիք էր զգում, Ասլի հա-
մար զարդարանք էր գնելու, տուն էր վարձելու և տեղ էր
պատրաստելու իւր ապագայ ամուսնի համար: Մտատան-
ջութեան մէջ խորասուզւած առաջ էր գնում մեքենարար
և չէր էլ զգում ինչ էր կատարւում շուրջը: Այդ միջոցին
հեռւից երևեցաւ մի ցնցոտիների մէջ փաթաթւած չարչի,
որը վազելով դիմում էր Նղիկին, թեմի տակ մի փոքրիկ
կապոցով: Դրան հալածող երկու յետի թարաքեամա լա-
կոտները, նկատելով զինւորւած ձիւորին փափախը գըր-
իկին, թողին և ետ փախան: Մօտենալով չարչին, ընկաւ
Նղիկի ոտքերն՝ ասելով.

— Աղա, դու գիտես, քու ոտքն եմ ընկել, ազատէ
ինձ, քեզ մատաղ ունեցած-չունեցած:

— Այ տղայ, ասաց Նղիկը զայրացած, դու ո՞րտե-
ղից ես:

— Աղա, ես խարսայ եմ...

— Զայդ կտրէ, ստախօս, լեզուդ թոյց է տալիս, որ
դու դարսեցի չես:

— Աղա, մենք Բիթլիզու ենք (Բաղէշ), եկել ենք Դարս
կու մնանք:

— Հա, լաւ, այդ եղաւ: Հաց ունիս ուտելու:

— Խրամանքա, աղա, ասաց ու գօտին բացեց չար-
չին, Նղիկը վար իջաւ և չարչու և նետ նստաւ հացի: Տիսուր
մտքերը ճաշելիս էլ չիւուացան Նղիկից և նա կցկտուր հար-
ցեր էր տալիս չարչուն, որը նոյնպէս մտածութիւնների
մէջ ընկաւ տարօրինակ մարդու հանդիպումից:

— Ինչի էիր փախում, չէիր կարող այդ լակոտների
հալսից գալ:

— Ի՞նչ էրած, աղա, թուրք են, հիւքիւմաթը (պիտու-
թիւնը) իրանցն է:

— Ահազին մարդ ես, ինչ պիտի անեն նրանք քեզ:
— Բողէս կըթալնէին:

— Դէմ դնէիր, կամ թէ թող տանէին, ինչ մեծ կո-
րուստ կունենայիր:

— Աղա, եղած չեղածս էս է, էս էլ որ տանէին՝ մանր
ու խոշոր քաղցած կը մնային:

— Փանի տղայ ունիս:
— Խինդ քեզ ծառայ...

— Արի քեզ հետ ընկերութիւն անենք, բայց մի պայ-
մանով, որ վախկոտութիւնդ թողնես:

— Դու որ ինձ խետ ընկիս, աղա, էլ չեմ վախենայ:

— Էդ շորերդ հանի, իմ շորերս հագիր, ձիս էլ նըս-
տիր, ես քու շորերդ հագնիմ, դառնամ քեզ նոքար:

— Ինչի.
— Տանենք մալերը ծախենք, քեզ էլ բաժին կըտամ:

— Լաւ, լաւ, խրամանը քոնն է:
Նղիկը չարչու պատուած շորերը հագաւ, թւանքը,
դարարիներն ու ֆիշագլուղը ինքը վերառաւ, մնացեալով
չարչուն զարդարեց, ձին հեծցրուց, ինքն էլ մահակը ձեռ-
քին—հօ, հօ—անելով դիմեցին դէպի թուրքի գիւղերը:

Է.

Գողը, աւազակը կարծում է, որ աշխարհի բոլոր
մարդիկ գողեր են: Զլդրի թարաքեամաները, ո-
րոնց միակ պարծանքն է ճարպիկ գողութիւնը, ամեն անց-
քի, արկածի մէջ գողութեան հետքեր են որոնում և գող-

ծունն անհետացնելը իրանց սրբազն պարտականութիւնն էն համարում, յայտնի բան է յուսալով, որ իրենք էլ իրենց բաժինը, աշխատութեան վարձը կունենան: Երեկոյեան դէմ կամարվան գիւղի յայտնի մի թուրք հանդից տուն էր գիմում ծանր քայլերով: Նա ափսոսում էր առանց մի ճարպիկ գողութեան կրցրած օրը: Թէ յիսուն տարիքն անցկացրած մարդ էր, բայց ոյժն ու ճարպիկութիւնը դեռ չէր կորցրել: Նա պատրաստ էր ձիաւորւելու գիշերները յարձակումներ անելու համար, բայց արդէն այնքան կարողութեան տէր էր, գաւառում այնպէս դիրք էր բանում, որ յայտնի աղաների շարքն էր անցել և ամեն մարդ նրան ճանաչում էր, ծալտիլ չէր կարող: Հէմէդ աղա էին անւանում և որովհետեւ կոյր էր, Քոռ-Հէմէդ էին կանչում նրա ետեից: Այս տիտղոսից ազատւելու և աւելի մեծ հաւատարմութեան արժանանալու դիտմամբ, նա մօս հարիւր յիսուն ոսկի էր ծախսել, Մէքքէ էր գնացել և Հաջի էր դարձել, բայց շատերը դարձեալ երեսին Հաջի աղա և ետեից Քոռ-Հէմէդ էին կանչում: Խնչպէս որ սարդը, այնպէս էլ Քոռ-Հէմէդը ման գալիս միշտ ձախ աշքը պտտեցնում էր հորիզոնի շուրջը մի որս ձեռք ձգելու յուսով: Նա շատ վաղ տեսել էր չարչի ձիաւորին իւր արարական ընտիր նժոյզով և Եղիկին եկները արածացնելիս, որոնք իրեն կասկածանքների մէջ էին գցել: Մի քանի ժամ շալունակ նա անտեսանելի պտոյսներ էր արել և վերջապէս երբ նրանք իւր գիւղը ուղղւելու դիրք էին բոնել ինքը ճանապարհները կարել էր և այնպէս ընթացը էր բոնել, որ իրը թէ անմեղ զնում էր իւր տունը: Մինչև անգամ նա ետեր չնայեց, մինչև որ չարչին և Եղիկը չարենցին նրան:

— Բարոնի եկաք, հազար բարով, ասաց Քոռ-Հէմէդը նահապետական հիւրասէր մեծասահն ձեւրով, որը, կարծես, առանց հիւրի գիշերելը իրեն մեծ ախրութիւն էր համա-

րում: Ո՞ւր առաջ բարի, գիշերս չէք հանիլ հիւր մնալ մեր տանը և մեզ ուրախացնել:

— Ճշմարիտը, ասաց չարչին, Ուրթա ենք գնալու, բայց արդէն ուշ է. ձեզանից խնդրում եմ, որ գիշերս մեզ և մեր ապրանքներին տեղ տաք, առաւօտը կը շարունակենք մեր ճանապարհը:

— Ուրախութեամբ, ուրախութեամբ, ասաց Քոռ-Հէմէդը և աչքի ծայրով աղահարար զննեց Փարաշին: Ո՞ր կողմից է ձեր բարի գալուատը, աւելացրեց հետաքրքրութիւնը չկարողանալով զապել:

— Մենք ուռուսի սահմանից ենք գալիս. իմացանք, որ Ուրթա մէկ երկու չստար մատղաշ մալը մեծ մալի հետ փոխում են, եկանք առուտառը անելու: Մենք որ տանենք քաղաք ծախելու, մեր ապրանքին զին չեն տալ, բայց չըստարը ամեն ապրանք իւր զնովն է առնում—ծախում:

— Այդ միշտ այդպէս է, «լամորը հացթուխին տուր, մի հաց էլ վրէն տուր»:

Զանազան խօսակցութիւններով եկան հասան Քոռ-Հէմէդի տունը և մալը, նժոյզը ներս քաշեցին: Ճանապարհին փարաշը Քոռ-Հէմէդի մուխը մարեց. նա շատ նշանաւոր քէահլաններ էր տեսել, բայց սրանցից ոչ մէկը որա մի սմբակի հետ չէր փոխիլ: Երբ ձին շէմից ներս էին քաշում, Հէմէդը ասաց չարչին.

— Մաշալլա (տէրը պահէ), աննման ձի ունիս, դեռ մեր ախտուը այդպիսի ձի մասձ չէ, Ես պիտի պարծենամ սրանից յետոյ, որ մի գիշեր մի աղա հիւր ունեցայ իմ տանը, այսպիսի ընտիր նժոյզով:

— Քեզ փեշեաշ, Հաջի աղա, ասաց վեհանձնութեամբ չարչին, տուն մտնելով Հէմէդի հետ:

— Տիրոջը փէշքեաշ ինձանից էլ, բարով կայելիս:

Երեկոյեան երկար խօսակցութիւնից և ընթրիքից յետոյ, փողձի համար ասաց Քոռ-Հէմէդը.

— Միրզա աղա, (այսպէս էր կոչում չարչին) արի մեղ ծախիր կովերը, էլ ինչի՞ ևս գնում Ուրթա, կուզես փող կը տանք, կուզես ջահիլ մալ կը տանք:

— Հաջի աղա, դու մեր այնպէս սիրով ընդունեցիր ու պարտաւորեցրիր, որ բոլոր քեզ փէշքեաշ որ անենք, կորուստ չենք ունենալ. բայց ինչպէս ասի, մեղ ջահիլ մալ է պէտք, թէ ունիք, փոխենք:

— Ինչի՞ չէ, առաւոս բարի լուսուն ես խաբար կանեմ տղերքին, որ մեր մալը բերենք գիւղ. ջոկենք, նրանց էլ գին դնենք, սրանց էլ, և ապա առուտուրներս գլուխ բերենք: Եթէ չհամաձայնինք, էլի գնացէք Ուրթա:

— Լաւ, լաւ, ասաց կիսաբերան չարչի Միրզան և խօսքը կտրեց այնպէս, որ լուսութիւնը տիրեց: Եղիկը չէր սխալել չարչին ընկեր վեր առնելով. ինքը ոչ առուտուր արած ունէր, և ոչ էլ մարդու չարք նստած ելած: Միրզան Բիթլիզի սնանկացած բազիրգեաններից էր. նա գիտէր ամեն մարդու դամարը գտնել և նրա համաձայն շարժւել: Ապրանքը թանգ ծախելու համար այնպիսի դիրք բունեց և այնքան ճարպիկ շարժւեց, որ Քոռ-Հէմէդը չարեցաւ. և նա, որ մինչև այդ ժամանակ գողածուն ապրանք էր համարում կովերը, սկսեց տարակուսել: Այն ինչ, Հէմէդը բոլորովին միտք չունէր դրանք գնել. նա փորձեր էր անում ձիու մասին հարց առաջարկելու և եթէ ձին էլ գողացւած ապրանք չինէր, դժւար կը լինէր գնել: Հիւրասիրական օրէնքների դէմ չէր կարող մեղանչել, նամանաւանդ որ կարող էր բոլորովին պատվից ընկնել: Երկար լուս ու մունջ ծխելուց և գիւղական հիւրերը ճանապարհ դնելուց յետոյ, Հէմէդը կըկեն խղեց լուսութիւնը և ասաց.

— Միրզա աղա, չի կարելի, որ մեր արաբական մաղեանի վրայ քաշենք առաւօտ ձեր Փարաշը. ձեզ մի լաւ խալի ձիու դուկ փէշքեաշ կը տամ:

— Հաջի աղա, Փարաշը քեզ փէշքեաշ, բայց եթէ էգուց ճանապարհ չգնայի, իմ կողմից արգելը չէր լինի:

— Ողջ կարողութիւնս կը զոհէի այդպիսի մի ընտիր ձի ունենալու համար, կառաջարկէի ծախել, բայց դա որ կայ մուրագ է, դուք բարով վայելէք:

— Ես առևտրական մարդ եմ, կը ծախէի այդ ձին քեզ, բայց տանը մի փոքր նշանած եղբայր ունիմ, որ ջիրիդ խաղացող է, յետոյ նրա ձեռքից չեմ ազատուիլ:

— Նա ձեր առաջ բան չի կարող խօսել, մէջ մտաւ եղիկը, եթէ դուք կամենաք...

— Բայց այնպէս պիտի գործ բռնէ մեծ եղբայրը, որ իւր փոքրերի սիրաը չցաւեցնէ: Այս ձիու մայրն էլ, հայրն էլ մեր ախուռումն են ամեն տարի մի մի թայ տաղիս են. տանը մի հաս կայ սրանից մի տարի փոքր, բայց սա նրա անունովն է:

— Որ այդպէս է, աղա, ծախիր ինձ այդ քէահլանը. քո շնորհիւ մեր տանն էլ մի այդպիսի զարդ ունենաք:

— Ախար ծախեմ, բայց էգուց ես ինչպէս ետ երթամ...

— Քեզ փէշքեաշ, մեր ախուռում տասներկու ձի կայ, ընտրիր, որը կամենաս: Եղիկը կատաղում էր սրանց երկար ու ձիդ խօսակցութիւններից և իւր միսն էր ուտում, նկատելով, որ Հէմէդը ամեն ջտնք գործ էր գնում մի կերպ իրանց ձին խելու:

Առաւօտեան վաղ վերկացան, և երկար բանակցութիւններից յետոյ նժոյգի և տասը կովի տեղ՝ վեց մողիկ, չորս աշառ, երկու ձի և մէկ էլ մէջիդիկ ոսկի ստացան,

լաւ նախաճաշ արին, մի կարպետ և երկու խալի ձիու չուլ փէշքեաշ թարքները կապեցին ու դիմեցին դէպի Դարս:

— Շան որդին լաւ կապերս քաշեց—ասաց Եղիկը, ճանապարհ ընկնելով:

— Հիւքիւմաթը (պետութիւնը) իրենցն է, պատասխանեց Միրզան:

¶.

Պոռ-Հէմէդի տանից բերած ապրանքը Միրզան աներկիւղ բազարում ծախելուց յետոյ քսան մէջիդիէ ոսկու չափ փող յանձնեց Եղիկին, որը առատութեամբ տասը ոսկի բաժին տւեց չարչի Միրզային: Եղիկը Ասլիի ճակատի համար քառասուն զադի գնեց, թանգադին շորեր առաւ և Միրզին ընտանիքով վեր առնելով Դարսից, դիմեցին դէպի Ծքնի, տանելով իրենց հետ զանազան բազազի ու էթարի ապրանքներ: Դիւզում մի յարմարաւոր տուն վարձելուց յետոյ չարչին սկսեց իւր առուտուրը: Եղիկին տիրել էին մտածմունքները. երկու օր յետոյ նա անապատճառ լինելու էր իւր Ասլիի մօտ, իսկ նա դեռ պատրաստութիւն չէր տեսել:

— Գիտես ինչ կայ, ասաց Եղիկը Միրզային. ես կիւրակի կամ երկուշաբթի գիշեր կը մտնեմ գիւղ. այնպէս պիտի անէք, որ իսկոյն գիշերը դուռը բանաք և գիւղացիք բան չհասկանան: Գիւռ աւելի լաւ է ես գիշերը կը բերեմ նրան մինչեւ եառի տակը, դու Գիւնազի հետ արի, այնտեղից Գիւնազը (Միրզայի կինը) թող նրան տուն տանէ. մենք կերթանք մէկ երկու օր ուրիշ գիւղեր կը պատենք առուտառւի, ու յետոյ օրը ցերեկով կը մըտնենք գիւղ, այնպէս որ մարդ բան չհասկանայ:

— Լաւ, աղբէր, ինչպէս որ կուզես, մենք քո ձառան ենք:

— Ինձ ծառայ պէտք չէ. ես ընկերի կարօտ եմ. Եղիկը միայն խանջարով ու թւանքով զինւած ճանապարհ ընկաւ, անցաւ Շիրակը և ուղղւեց դէպի Աղբարա: Իրիկւան մթանը նա մի որոշ քարափի տակ իշաւ, թւանքը և խանջարը զգուշութեամբ պահեց, ուղղեց քայլերը դարձեալ Կամարզան ու գնաց իջաւ Քոռ-Հէմէդի տանը: Տան տէրը թէի տանը չէր, բայց որդիքը նրան սիրով ընդունեցին, որպէս իրենց բարեկամի ծառային:

— Աղայիս արծաթի մուշտուկը այստեղ խօ չէ մնացել—հարցրեց Եղիկը միամիտ դէմք ընդունելով:

— Ո՞չ, մենք չենք տեսել, ասացին, նրբ իրիկւայ հացը կերան պրծան, ելաւ պատրաստութիւն տեսաւ Եղիկը ճանապարհ ընկնելու:

— Ո՞ւր, ուր ես գնում, ձայն տւին ամեն կողմից, գիշերս կաց, առաւօտ կը գնաս:

— «Նտապով նտ դարձիր», հրամայեց ինձ աղասինամ, թէ չէ, խօսք կը դայ վրաս: Հախով ծառայող մարդու վիճակը խօ զի՞տէք:

— Մենք քեզ չենք թողնիլ, ամեն կողմից մէջ մտան, այս գիշեր ժամանակ հազար ու մի չուն ու գէլ կայ, կարող է փորձանք պատահել, ետոյ մենք չենք ազատւիլ մեր հօր ձեռքից: Մեր հիւրն ես մինչև առաւօտ, լուսուն բարի ճանապարհ, ուր կուզես կնան:

Եյս միջոցով բոլորովին սպահովեցրեց Քոռ-Հէմէդի տանեցւոց, որնք տեղ չինեցին և հանգիստ քննցան: Բայց Եղիկը, թէի սաստիկ յոդնած էր՝ վաթսուն վերսա ճանապարհ ոտքով էր եկել այդ օրը, անկողնում չկարողացաւ հանգստանալ: Նա մտածում էր Ասլիի մասին մտածում իրեն կողոպտողներից վրէժը լուծելու մասին:

Մէջ գիշերին նա վերկացաւ, ներսէ ներս ախոռից զդուշութեամբ դուրս քաշեց ֆարաշը առանց թամէքի, միայն մի համեսով և առանց ուշադրութիւն դարձնելու պացաւ դէպի այն քարափը, որտեղ պահել էր զէնքերը: Նժոյզը գեռ չհասած ապառաժի տակը, յամառեց, կանդնեց և չէր ուզում առաջ դնալ: Եղիկը իջաւ ձիուց, քաշեց իւր ետեից, մի կերպով առաջ գնաց, մօտեցաւ այն քարքարուտին, որտեղ թազցրած էր հրացանն ու խանջարը: Դիշերը սոսկալի կերպով մութն էր, և անդադար Եղիկը զարկւում էր այս ու այն ժայռի կտորներին: Յանկարծ նրան շրջապատեցին երկու կողմից երկք հոգի և փշտոֆները կրակեցին: Նժոյզը կատաղած քաշեց իւր համետը Եղիկի թուլացած ձեռքից, ետ փախաւ: Յարձակողները պինդ կապեցին Եղիկին, ու ընկան նժոյզի ետեից, որն ուղղակի ճանապարհ ընկաւ դէպի Պարաքիլսա, իւր տան տիրոջ մօտ: Մթնումը նրա հետքը կորցրին թուրքերը, վերադառն, քիչ թուլացրին Եղիկի կապերը և առաջները խառնած ճանապարհ ընկան դէպի Հաջի Աէլի Մէդէդ բէդի բնակարանը: Մէդէդ բէդի մարդիկը Շէօրագեալում հեռւից աեսած լինելով օտարական հրացաններով Եղիկին, կասկածել էին և նրա յետրից գնալով ու քարափում զէնքերի պահելը նկատելով, դարան էին մոել, համոզւած լինելով, որ կրկին գիշերը այնտեղ վերադառնալու էր:

Թ.

Աէդէդ-բէզը Շիրակի վերջին վասալական իշխանն էր, որի հօրից սուլթանն գաւառի հոգերը մի կերպ խլել էր, բայց նրա փոխարէն ժառան-

գական թոշակ տալուց յետոյ, դարձեալ իւր վիճակին զայմուղամ (գաւառապետ) էր նշանակել, այնքան որ իւր գլխատւած հօր և պապերի նման էլ Մազմաս բերդում չէր ապրում և սեփական ձիաւոր, հետի և թնդանօթաձիդ զօրք չունէր, բայց Հաջի Վէլիում իւր առանձին սարայն ունէր և առաջւանից աւելի մեծ իշխանութիւն ժողովրդի վրայ: Թէե Ղարս Այալաթի փաշան էր նստում, բայց Նէօրագեալի գաւառից զատ Այալաթի գլխաւոր գործերը տնօրինում էր նոյնպէս Մէդէդ բէդը: Այալաթի ժողովի ամենապատւաւոր անդամն էր և ժողովականները առանց նրա կնիքը տեսնելու ոչ մի թղթի վրայ չէին յանդգնիլ գնել իրենց մատանին: Մէդէդ բէդը գաւառապետի անունով դարձեալ մի իշխան էր. նրա կամքից էր կախւած կախել տալ մէկին, աղատել մի ուրիշին, մէկին զրկել իւր բոլոր կարողութիւնից, միւսին բարձրացնել յայտնի պաշտօնների: Նրա Հաջի-Վէլիում ունեցած բանտում միշտ լինում էին ութ-տասը թէարաքեամա գողեր և պարտատէր հայեր: Դրանց թւում ընկաւ նոյնպէս Եղիկը:

Բանտը առաջ գոմ էր եղել և ձմեռը դարձեալ այդ նսպատակին էր ծաւայում, միայն մասուրքներլ վրայ ամբացրած էր պինդ լալա կոչւած շղթաներ, որոնցով շատ անգամ աւագակներին անասունների հետ միարին էին կապկում, այն տարբերութեամբ, որ անասուններին միայն վզերից էին կապում, իսկ յանցաւորներին վզերից ջոկ ոտքերն ու ձեռքերն էլ էին շղթայում: Եղիկի ոտքերը շղթայած էր. իսկ գիշերները ձեռքերն ու վիզն էլ էին շղթայում: Բանդում մի քանի ընկեր ունէր Եղիկը, որոնց մէջ հայ կար:

Առաւօտից մինչև իրիկուն տիսուր տրտում, բորբոքւած նրան տանջում էր Ասլիի վիճակը. արդէն խօսք տւած-օրը եկել անցել էր: Այնքան տանջում էր նրան այդ միտ-

քը, որ երբեմն խելագարի նման կատաղում կռւում էր ինքն իրեն հետ, երբեմն ցնորածի նման անզգայ ընկնում էր մասուր քի տակ և խորասուղւում մտքերի մէջ: Ախորժակն անզամ կորցրել էր և որպէս ողոմութիւն Մէդէդ բէզի հարձերի օրական մի անգամ ուղարկած թանապուրն անգամ երբեմն չէր կարողանում ուտել: Թարաքեամա անտարբեր աւազակները ցաւում էին թշւառի վրայ և որքան աշխատում էին միխթարել, հնար չէր լինում: Բանտարկելուց արդէն ութ-տասն օր անցել էր, ոչ ոք չէր հարցրել թէ արդեօք ինչ յանցանքի համար էր բանտարկել և ոչ ոքի յայտնի էլ չէր, թէ երբ է ինքն ազատւելու այդ գոմից: Դատի, դատաստանի, մեղքը լսելու նրանցից ոչ ոք չէր արժանանալ: Մէդէդ բէզին եթէ մի որդի ծնէր, կամ ին-քը մի լաւ երազ տեսնէր, կամ, Գիւրջիստանից մի գեղեցիկ փախցրած կոյս նուէր բերէին, կամ մի լաւ արամացիկ փախցրած կոյս նուէր բերէին, կամ մի լաւ արամացիկ դրութեան մէջ լինէր, կը մտնէր և բանտարկեալներից մի քանիսին կ'ազատէր, իբր զոհաբերութիւն Ալլահին իրեն հասած բարիքների փոխարէն, իսկ եթէ զայլացած լինէր, կամ մի դժբախտութիւն պատահած, դուրս կը հանէր մի քանիսին լաւ ծեծել կը տար, ոտքերը փալախսա դրած, մի քանիսին մահամերձ կ'արձակէր, մի քանիսին էլ Պարսկանորը կ'ուղարկէր գործերը քննելու:

Եյս ընթացքը աւելի ձեռնտու էր չարագործներին էլ, Մէդէդ բէզին էլ: Եթէ իսկոյն դատաստանի յանձնէին, կարող էին դատապարտւել կախաղանի, զիստաղութեան, երկար տարիքներ բանտարգելութեան և ուրիշ զանազան տանջանքների, այն ինչ մնալով բէզի ախուռում՝ ազատութեան յոյսը չին կորցնում: Կանցնէր ժամանակ, բէզը կը մոռանար, բարկութիւնը կ'իջնէր, և բանտարկեալների ազգականները, բարեկամները կը հաւաքւէին և մի գումար պականները պատգամաւորութիւն կուղակէին բէզի մօտ պատրաստելով պատգամաւորութիւն կուղակէին բէզի մօտ

և կ'ազատէին իրենց աղգականին, այլ և այլ միջնորդների միջամտութեամբ:

Բայց ո՞վ էր մտածելու Եղիկի համար, ո՞վ կը գար նրա համար բէզից ազատութիւն խնդրելու, ո՞ւմ ունէր: Մինչև անզամ եթէ իւր զիւղի համբաները, նախկին հայ-թուրք տէրերը իմանային նրա բունած լինելը, մի պատգամաւորութիւն կ'ուղարկէին, Մէդէդ բէզին կը կաշառէին և մի կերպ նրան կախել կը տային, Եղիկը քիչ յոյս ունէր չարչի Միրզի վրայ, նա էլ ինչպէս իմանար, որ Եղիկը բանտարկւած էր, կամ թէ, նա էլ իւր ընտանիքը թողած կը մտածէր Եղիկի մասին: Երկնքի և երկրի տակ իրեն օգնելու ու պատրաստ մարդ չէր գտնում իրեն համար տանշւող և մտածող, երկու անզօր արարած կային, որոնք երկուսն էլ իւր պաշտպանութեան կարօտ էին, իսկ իրեն օգնելու անկարող: Այդ թշւառները մայրն ու նշանածն էին, որոնք առանց Եղիկի ողբով ու կրծով գերեզման էին իջնելու և միայն Եղիկը կարող էր նրանց վրկել, երջանկացնել:

Երբէք Եղիկի աչքի առաջից չէր հեռանում Ասլիի պատկերը. նրա հրացայտ աշքերը մարած, արիւն արտասուրով լցցւած, գլուխը կախած, վշտի քողը դէմքը պատած, կանգնած էր նրա մտապատկերներում: Այնքան յափշտակւում էր, այնքան վրոգվում Եղիկը, որ կարծես լսում էր սիբեկանի անփերջ հառաջանքները, հեկեկանքները և ողբաձայն մանիներն ու երգերը: Մունչում էր այդպիսի ըովէներում վանդակում կապւած առիւծի նման, զարկւում էր պատերին, քաշշում էր չղթաները, փոքրիկ միակ աչքը չուելով շուռ էր տալիս շուրջը և սթափւելով, յուսահատ ընկնում զարձեալ սալայատակի վրայ անզգայ և անշունչ:

Տերունի բանտապետը, բէզի հարձերը նրա սոսկալի տանջանքները տեսնելով ցաւում էին նրա վրայ և ամեն կերպ աշխատում էին միխթարել, ծածուկ կերպուր էին

բերում նրան, թուլացնում էին տանջանքները և բանտապետը շատ անգամ գիշերները չէր շղթայում նրա ձեռքերն ու վիզը:

Փ.

Սի օր բաւական տաքութիւն ունէր Եղիկը, Բանտապետը ծածուկ բէզի հարձերից մէկն ասլովել էր հաւի ջրով, բրնձով մի լաւ ասլուր եփել, որ Եղիկը ուտելով բաւական կազդուրել էր, Երեկոյեան մի կարպետ և մի կտոր թաղիք բերել, գցել էր նրա տակը և իւր քեավալով (ոչխարի մորթից մուշտակ) ծածկել նրան, քբանեցրել էր բարեսիրտ բանտապետը: Այդ գիշերը նրա ձեռքերը և վիզը չէր շղթայել, միայն ոտքերի շղթայով էր թողել Եղիկին, Խնքը՝ բանտապետը մինչև կէս գիշեր հսկելուց յետոյ յոդնած, դադարած ընկել, քնել էր գոմի սէաքիւն (գոմի մէջ տախտակով կապած վերի յարկ):

Եղիկը մէջ գիշերից յետոյ բաւական կազդուրւած լինելով վերկացաւ, նստեց անկողնում, չորս բոլորը քննեց, հազար, խորիս և բոլոր ընկերներին ու բանտապետին խոր քնի մէջ գուաւ: Նա մի քիչ մտածելուց յետոյ իւր ծրագիրը կազմեց: Տասն և հինգ օրւայ ընթացքում նա լաւ էր ուսումնասիրել Մէդէդ բէզի տունը: Զգուշութեամբ ձեռքերը ոտքերը տարաւ և սկսեց փորձել մի կերպ շղթաներից ազատւելու: Նրա սրունքները շատ բարակ էին, ոտքերը մանր, դրա համար էլ, որքան որ փոքր շղթաներ էին ջոկել նրա համար, դարձեալ լայն և ազատ լինելով դարրնին կանչել փոքրացնել էին տեւել: բայց դարբինը նորից ծակ չբանալու, այդ սոխրա (անվարձ) գործը գլխից մի կերպ ուաղ անելու համար, մի քանի մուրճի հարւածներով

Նեղացրել, բայց երկարացրել ու զարկել էր Եղիկի ոսկերը: Բանտապետը՝ Եղիկի նիհար, վտիտ ու թոյլ կազմւածքը աչքի առաջ ունենալով, բաւականացել էր, վտահ լինելով, որ գեաւուրը փախչելու փորձ երբէք չի անիր:

Եղիկը մի բանի անգամ սրունքների շղթայի երկաթի ապարանջանը քաշելուց յետոյ բաւական լայնացրեց և ձախ սորքը լաւ թթուելուց յետոյ բաւական չարչարեց և դուրս հանեց: Այս աշխատութիւնը նրան քրտնեցրեց և նու ուժասպառու մի քիչ տարածւեց կազդուրւելու: Բայց ուրախութիւնից նա այնքան ոգեսրւել էր, որ էլ երկայն չ'սպասեց, մի կերպ միւսն էլ դուրս հանեց: Բանտի դուռը ներսից, դրսից հաստ երկաթէ կոխաբէքներով փակւած էր. պահապանները Մէդէդ բէզի դուան ծառաները չնից շատ յոյժ չկար բակերից անցնելու: պէտք էր շտապել և հետի ճանապարհ ընկներ, Եղիկը իւր թեկի ու ոտքերի շղթաները շալակած ճանկլատելով պատից բարձրացաւ և երթից դուրս եկաւ: Կտուրների վրայից մի քանի պատոյաներ անելուց յետոյ ճանապարհ ընկաւ դէսի ձորը: Այդտեղ քարի տակ դըրեց շղթաները, կոտրեց և կտորները ցըսեց, որպէս զի հետեւեալ օրը ջրի եկող կանայք գտնեն Մէդէդ բէզին, համոզեն, որ Եղիկը շղթայակապ է բանտից փախել, որպէս զի ծերունի բանտապետին չնեղացնէ:

Այդտեղից ճանապարհ ընկաւ դէսի լեռներին կրճերի ճանապարհով և չորս ժամեւայ ճանապարհը գնաց տասն ու չորս ժամում. գիշերը ուշ ժամանակ մտաւ գիւղը: Զարչի Միրզան և կինը շատ ուրախացան նրան տեսնելով, բայց հարսին՝ Ասլիին չբերելու իսկական պատճառը և Եղիկի զիսին անցած արկածները չկարողացան իմանալ: Եղիկը նրանց հարցերին վերջ աալու համար ինքն սկսեց հարցեր տալ.

— Հան, դուք ինչ արիք, ասլրանքը լաւ ծախւում է:

— Լաւ, լաւ, բայց...
— Ել բայցը մըն է, ասան, ինչ կայ:
— Մատօ քէհէն մեղ նեղացուց...
— Ինչպէս թէ... .

— Ասաց.—ինչ անենք, թէ Դանէլը ձեզ քրէհով է տւել իւր տունը. քրէհու էք, նատէք, բայց առուտուլ անելու չեմ թոյլ տալ... այստեղ առուտուլ անելու համար ինձնից պիտի իրաւունք ստանայիր: Նրա դարդն այն է, որ ուզում էր իրեն մարաքը տուն ու խանութ շինելով մեղ տալ: Տեսայ, որ ուզում է կապել խանութս և ինձ էլ Մէդէդ բէգի բով ուղարկել, երկար մտածեցի, վերջապէս կնիկս մի լաւ փիրուղ խզմա (քթի գինդ) ունէր, որ չէր բանացնում, տւի ձեւքը և ուղարկեցի նրա կնոջ մօտ խնդիրի: Այդ փիրուղ խզման արժէր յիսուն զրուշ, վեր առաւ, լեզուն քաշեց, և իրկիուն մի քանի մարդով եկաւ ութ տաս զուրուշի էլ առուտուլ արաւ, փողը չտւեց: Զուզեցինք, զլուխն ուտէ, թոյլ տայ ազատ առուտուլը շարունակեմ:

— Լաւ, լաւ, ասաց մոտածելով Եղիկը և սկսեց ծոծրակը ու զուխնը բորել. քիչ լսելուց յետոյ ասաց—Ռորիշ առուտուլներդ... .

— Փառք Աստծոյ լաւ է, բայց... .

— Էլի՞ բայց... .

— Ապրանքս քիչ է, թէ մի հազար զուրուշի ապրանք ունենամ, ես էլ դարդ չեմ ունենալ... .

— Կ'ունենաս, կ'ունենաս, դարդ մի անիլ, ութ-ոսան օր էլ սպասիր, ասաց Եղիկը յուսագրելով: Բայց աւելորդ չէ ապրանք աւելցնելու, էկուց էլի Մատօ քէհէն կը դայ առանց վճարելու կը տանի:

— Քու կեանքդ ողջ մնայ, դու որ իմ գիխի վրայ ես, էլ իմ ինչս կը պակսի:

— Ես գիշեր ցերեկ քեզ վրայ դարառու խօ չեմ կարող կանգնել. ախար դու էլ տղամարդ ես, զլիսիդ գդակ կայ դրած, ինչի՞ ես թողնում, որ քսոսա քէհէն գլխիդ նստի, այսօր տասը զուրուշի տանողը էգուց հարիւրի էլ կըտանի:

— Եյդ աչնչ, մէկ գիւղում հաստատւիմ, նրա տարածով չեմ քանդւի, Աստւած ողորմած է, էգուց մէկէլ օր նրան այնպիսի զնով ապրանք տամ, որ տարածից երեք անգամ աւելի վզին բեռ բառնամ: Դաւթարն իմ ձեռքս չէ:

— Դու զիէ դաւթարը. աղքատը վիզը ծռած, անձարացած ունեցած չունեցած քեզ պիտի բերէ պարտքից ազատւելու համար, բայց համփաների ու քէհաների յետևից ման արի, խնդրիր, աղաչիր, որ քեզ փող տան:

— Մի վախենալ, ես նրանց չեմ թոյլ տալ, որ փողս կու տան: Մէկ էլ որ, աշխարհի կարգն է, ով որ զօրեզ է, տկարին պիտի կու տայ: Դրսնց պիտի քիչ շահենք, պատւենք, որ մեր առաջը քալ չդնեն: Երեսանց որ ես առում եմ—Քէհա ջան, ես քոնն եմ, ինչ որ ունիմ քոնն է, թէ մի պատառ հաց էլ ուտում են իմ մանր ու խոչըրը, էղ էլ սկսում չնորհիւն է, միթէ մորովս էդ եմ ասում: Ի՞նչ անեմ, քու չնորհիւն է, միթէ մորովս էդ եմ ասում: Ի՞նչ անեմ, որպէս զի կաշիս ազատեմ, ես նրան կու չգնամ, քիչ չողոքորդում եմ, նա էլ ուռչում է տկի պէս. թող ուռի, մի քորդում կատար կծակեմ, որ իջնի, գետնի հետ հաւասարվի: Միրզան իր բանը գիտէ:

ՓԱ.

 Պակը նոյն գիշերը հանգիստ չկարողացաւ քնել: Մտածում էր առաւտօտ վաղ գնալ ստումանը անցնել և Ասլիին փախցնել մի կերպ Ծբնի, բայց գիւղի քէհէն, զկամ դրացիները, Շէօրադեալի Ղայմազամ Մէդէդ բէգը,

անապահով դրութիւնը, իւր հետքը փնտրողները նրան տատանման մէջ էին գցել. չէր իմանում ինչ ընթացք բռնելը: Թէկ սրբնթաց ֆարաշը փախել էր, բայց Եղիկի համար այդպիսի նժոյզներ ձեռք բերելը դժւար չէր. Շիրակի ամին մի մեծատան ախոռում այդպիսի քէօհաններ կարելի էր գտնել, բայց նա հաւատարիմ բարեկամ և չնախանձող ընկեր չունէր, որին հնարաւոր լինէր կեսանքը հաւատալ: Միրզայի շարժումները արտայայտում էր նրա հոգու ստորութիւնները և ամեն կեղտոտութիւն անելու ընդունակութիւնը, բայց չէր գտնում երկնքի տակ մի ուրիշ անձնաւորութիւն, որ նրանից նւազ վնասակար լինէր իրեն համար: Առաց մէկին փորձելու յիմարութիւն էր համարում անձնատուր լինելը:

Բայց ճանապարհորդութիւնը անյետաձելի էր. մըդդասի կիւրեղը և Մուքէն կարող էին դէպքից օգտել և Ըսլին տանջելուց ջոկ, իրենց ճիրանները գցել:

Թէկ մտածում էր նախ մի կերպ Մատո քէհից վրէժ առնել և նրան տափել, որ յանդգի Միրզի շւաքովն անգամ անցնելու, բայց ժամանակը չէր: Վերջապէս երկար մտածելուց յետոյ որոշեց դուրս գալ Մէդէդ բէզի վիճակից: Գիշերը վեր կացաւ Միրզային ձայն տևեց:

— Ախալքը, էգուց ելիր, դնա Քերս: Ապրանքից մի մաս տաք, տուն բռնէ, կարգի դիր, Մէլօին այնտեղ թող, յետոյ տունն էլ վերցրու տար: Եշաստիր գեղի ամենից ուժեղ քէհի տունը վարձել և տանտիրոջը շահել: Եթէ Ղազար քէհի ջրաղացի քովը տուն բռնես ամենքից լաւ է: Ես երեք օրից յետոյ կ'գամ Քերս, կարելի է նշանածու էլ բերեմ:

— Լաւ, բայց այստեղ տւածո քրէհը, քէհի կուլ տւածները:

— Ես նրա քթից կ'հանեմ, այդ քու բանը չէ:

— Լաւ, ինչպէս որ կ'իրամայես:

Միրզան գիմաղրելու ոյժ չունէր. նա Եղիկի կամքին երրէք չէր հակառակւել: Գիշերւանից սկսեց իւր պատրաստութիւնը:

— Դրանք թնդ, վերջն էլ կարող ես կարգի դնել, ձիգ թամբէ, լաւ թամբ զարկ, ասաց Եղիկը հրամայական եղանակով: Ես կերթամ, Զոշու ճանապարհին կ'նսաեմ, շուտ արի, հասի, թւանքը հետդ վեր առ. այնպէս բռնէ, որ մարդ չտեսնի:

Եղիկը կնոջ համար առած սոկին և չորեկը մի փոքր կապոց շնած, թիկ տակը դրած գիւղից գուրս ելաւ, ճանապարհ ընկաւ: Մի քանի ըսպէից յետոյ Միրզան նրա ետեից հասաւ, Երկուսով ձին քշեցին դէպի Գիւնէ լերան փեշերը, որտեղ արածում էր Մատո քէհի մատեանների իլիսին: Եղիկը ձիուց իջաւ, և իլիսիին մօտենալուց յետոյ սողալով մտաւ նրանց մէջ: Երկար սողալուց յետոյ լարը մի լաւ ձիու գզովը ցցեց, բռնեց ու շալակը թոշելով քշեց դէպի Միրզան:

— Ճուտ ձիու թամբը քանդէ և սանձը ինձ տներ, ասաց Եղիկը: Միրզան կատարեց, և անսանձ ու առանց թամբի իւր ձին նստած վերադարձաւ Շբնի: Եղիկը մտրակից Մատո քէհի իլիսիից ծոկած ձին և արշալոյսը չբացւած մօտեցաւ Անիկ աւերակներին, որոնց կողից ձին քշեց դէպի Տայլար և ձորն իջնելով Ախուրեանին մօտեցաւ: Այստեղ Մատո քէհի իլիսիից ընտրած ձին ցոյց տւեց իւր չնորհը, նա կոււեց վարարած գետի հետ և քաջութեամբ անցաւ, թէկ գետափից ջուր տանելու հկած Կարմիր-վանքը կանայք յոյսերը կտրած արդէն վայ տւին զոյշադ ձիաւորի տիրոջը:

Երբ անվնաս ափը գուրս եկաւ Օսմանցու սահմանից այդ բաջասիրտ տղէն, բարեսիրտ կանաքը չուրջը

հաւաքւեցին. ամենքն էլ սկսեցին նրան իրենց տուն հրաւիրել: Ամեն կին ուզում էր բաղդ ունենալ աւելի շատ ժամանակ տեսնելու այդ առանց բաշպորդի զոչազին, որին արիութիւնն ու բաղդը օգնել էին բարի լուսին: Ողջ օրը նրանց զլանում անցկացրեց Եղիկը, ամեն տեսակ պատիւ արին, որը կերուխումից յետոյ մի քանի ժամ էլ հանգստացաւ և յետինքի ժամանակ ձին նստաւ, ճանապարհ ընկաւ դէպի հիւսիս, դէպի իւր սէրը Ասլին, որը մագնիսի նման քաշում էր իրեն Եղիկի խւլը, միտքը, սիրտն ու հոգին:

Ժամ.

Եղիկի մղդսի Կիւրեղենց տանից Փարաշը, զէնքերն ու շորերը փախցրած առաւօտը Ըսլիին երադող դնդրոյ Մուքէն վաղ վեր կացաւ, քանդեց ֆարաշի ոտքից բիսովը չւանի կասլը, շորերն հազաւ, մտաւ ախոռը խոռ տալու իւր նժոյգին: Ահազին խուրձը զրկած մօտեցաւ Մուքէն—Փարաշ ջան, քէօնաւնա—կրկնելով և մսուրքում զետեղելուց յետոյ երբ ձին չդտաւ, մնաց ապշած: Բխովու չւանը քաշեց և երբ նկատեց, որ ալ ձիու ոտքն էր զարկած, իսկոյն կասկածեց և կանչեց.

— Մղդսի ապէր, Մատօ ամի՛, Պետօ ամի՛, Սէթօ, Համօ, Պարօ.

— Է՛յ, Բնչ է, Բնչ ես դալմազալ դցել, չես թողնում քննենք, ասաց Աէթօն պառկած տեղից. Բնչ ես դիւհարի նման մէջ զիշերին վեր կացել ու մարդու անուշ քունը հարամ անում:

— Տօ տղայ, ել, տօ, մւր է ֆարաշը:

— Ի՞նչ ես յիմար յիմար դուրս տալի...

— Մղդսի ապէր, քէօնաւն չկայ...
Իսկոյն թափւեցին, բրբրեցին, դոները բացին և նկատեցին ձիու քայլերի հետքերը: Արշալոյալ արդէն բացւել էր, զալմազալն ընկաւ տունը. պառաւները գերկացան, հարսները շորերն հագնւեցան, ձծկեր երեխաների ձայնն ընկաւ, կովկերն սկսեցին բառաչել, հորթերն արձագանք տւին իրենց մայրերին, նախրչիները թափւեցան և աղմուկը սկսեց սաստկանալ:

— Տօ, տղայ, վազեցէք, այս իգով գնացէք, գոռում էր մղդսի Կիւրեղը, ցոյց տալով ձիու սմբակի տեղերը իւր եղբայրներին և որդիներին...

— Աղջի Սանդօ, արէս բէր, գոռում էր Մատօ ամին իւր կնոջը:

— Տօ տղայ, Պետօ, չարխներդ հագիր, այնպէս գնա, գոռում էր պառաւ տատը իւր փոքր որդուն:

— Հաւար, համէք, էս կողմն արիք գոռում, կանչում էին ամեն կողմից, և այդ ձայնը միախառնւելով անթիւ անսառւների բառաչների, մայողների, կտկուցների և խրխինջների հետ, կազմում էր մի զիւղական մուղիկա, որը սովորական է ամեն գիւղերում, մանաւանդ գարնան սկզբներին, եայլա գնալուց առաջ: Զայները քանի գնում հեռանեն էին, աւելի նւազում և բաղցը տպաւորութիւն թողնում էին, նախիրները զիւղից բաւական հեռացել էին և Եղիկի ետեկից գնացողների ձայնը էլ չէր լսում:

Գիւղում խօսելու նիւթ գարձաւ, ամենքը իրար տեսնելիս գողութեան մասին էին խօսում և ամեն մարդ հետաքրքրութեամբ սպասում էր զնացողների վերապարձին Կանայք հետպատէ մտնում էին մղդսի Կիւրեղենց տունը միսիթարելու մտքով, նոր նոր հարցեր տալով նրանց սիրաը աւելի վրդովում էին և գողցւած իրերի պատմութիւնը լաելով գուրս էին գալիս և հազար ու մի վրադիրով

իրար պատմում: Կովկերը կթող հարս-աղջիկները կաթ փուելու համար մարաք գնալիս ու դառնալիս իրար հարցնում էին իրերի գրութիւնը և հաղար ու մի ծաղրալի ածականներով կնքում Մուռքէին: Ուրիշները քթոցով շալակած ախոռի աղբը թափեիս, զոմերի թրիքը թխելու համար դուրս կրելիս հեղնական հայեացքներով իրենց սիրելիներին, կամ մտքում ունեցած ջահիներին զգալ էին տալիս ամօթալի արկածը, մանիներով հազար ու մի նախատինք էին թափում անկար մարդու զլսին և վայ տալիս տիրոջը:

— Վայ, ֆողը գլուխոդ, մարդու սոքից քնած տեղը ձիու կապը քանդեն, ու չիմանայ, ասում էր մի կլն իւր հարեանին:

— Եղ ես ասում, վրայ էր բերում մի ուրիշը, հազի դանավոր արխալուխն հանին տանին, նա մեռելի պէս տէր չինի:

— Զաթի (արդէն) գնդրչկածի մէկն է, էն ինչ տղամարդ էր որ... ասում էր մէկ ուրիշ կին:

— Մդմի Կիւրեղի տղէն է, հօր մալը շատ է, ու տղի պակասութիւնները ծածկում է...: Գուք ձեր դարդը քաշեցէք, ասում էր մի ուրիշը, էղուց կերթայ Գիւրիի նոր չորեր կարել կը տայ, նոր ձի կառնէ... նրանից ինչ էր պակսի:

Մինչև կէս օր ընկան սարից սար, քարից քար, վերջապէս յետքը գտան, համացան, որ Եղիկն էր կատարել այդ աւագակութիւնը, որն անցկացել էր և սահմանը:

Տիրութիւնը պատեց մդմի Կիւրեղին, այս անպատճութիւնը և կորուստը նրա սիրուը այնպէս խոր խոցեց, որ նա քիչ էր մնում գժւի: Իսկոյն ձին նստաւ, զրալանը լցրեց արծաթ մանէթներով և բաջալի ոսկիներով ու ճանապարհ ընկաւ դէպի Գիւրիի՝ մովրովի դուռը. իսկ Մու-

քէն մի քանի ձիաւորով ընկաւ սարէ սար, անցաւ սահմանը: Գիւրիի նստած մովրովը մդմսի Կիւրեղի համար հարկ եղած թղթերը գրեց, ուղարկեց Երեան, այնտեղից էլ ուղարկեցին Թիֆլիս, որպէս զի կարգադրութիւն անեն Երգրումի կօնսուլին իմացնեն, որպէս զի Ղարս գրեն և գողը վինտրել տան: Մովրովի կանցելեարի գրագիրները և թարգմանները էգուց կ'գայ, միւս օր կ'գայ քու թղթերի պատահսանը—ասում էին մդմսի Կիւրեղին և բերած վայլուն բաջալիները և ցոլուն մանէթները մէկ մէկ կու տալիս, խեղճ մարդ, լեզու չէր հասկանում, որ անձամբ գլխաւորից կտրական պատասխան ստանար, գնար իւր գիւղը, իսկ կանցելեարի դուան քաղցած սպասաւորները ճօչյաւեցանում էին մդմսի Կիւրեղի գրագանը:

— Ազպէր, ես խօ ձիու և հինգ-տասը կովի գարդը չեմ, Աստած տւել, չէ խնայել, էլի տեղը կայ, էլի կարող եմ աւելացնել, բայց ինձ սպանում է այս արարքը, այն քնձրու Եղիկը, որ վիշես կը գլորի, մէկ զարկես ոսկորները կը խցի, նա իմ տնից ու գունից մալ փախցնէ: Այս տարածը ոչինչ, ապա թէ որ գործի պոչը բաց թողնես, էղուց էլի նոյն խաղը պիտի խաղայ իմ գլխին:

— Մի՛ վախենալ, մդմսի ամի, մովրովը այնպէս թուղթ է գրել, որ Ղարսի փաշան սատանի ծակից էլ գոնել կը տայ ու կուղարկէ քու մալն էլ, քու դողն էլ: Երբ ձեռքերս անցնի Եղիկը, այն ժամանակ դու տես ինչ զատաստան անել կը տայ սմտի դիլքանդը նրա գլխուն: Դու այսօր ինձ մի բաջալլու տուր, մէկ գնամ նշանածիս ուրախացնեմ, քեզ ուրախացնելը այս իմ վզիս պարտքը:

ՓԹ.

Սուքէն երեք չորս օր ման եկաւ Շիրակում։ իրենց ծանօթ բոլոր դիւղերը շվջեց, ամեն տեղի անցքերը հարց ու փորձ արաւ, լսեց և յուսահատ ետ դարձաւ։ Ճանապարհին նա մտածում էր, թէ ինչ ասէ գիւղում իւր ընկերներին, եթէ իրեն ծաղրածութեան առարկայ դարձնեն։ Վերջապէս զլիսակոր ձին առաջ էր քշում մոլորածի պէս և չէր իմանում ինչ ընթացք բունելը։ Որպէս զի դատարկածեռն ետ դառնալը չնկատեն գիւղացիք և չծաղրեն նրա անկարողութիւնը, նա իրկւան դէմ մտաւ թուրքի Ղարաբիլիւա և իջաւ իրենց ծանօթ և պարտական Մէշագի Մահմէդ Ալու տունը։ Մինչև կէս զիշեր նա խօսում էր նրանց հետ այդ օրերը պատահած արկածների մասին, որոնք գովում էին այն ճարպիկ երիտասարդներին, որոնք կարողանում էին հեռւից գնալ և գողանալ ընտիր նժոյգներ, ուժեղ եղներ, կաթնատու կովեր և այլն։ Գիւղացիք առանց քաշւելու և առանց ուշադրութիւն դարձնելու Մէշագի Մահմէդ Ալու զայրացկու ունքերին ու մրութներին գովում էին Եղիկի քաջարտութիւնը, որը կարողացել էր ֆարաշը փախցնել։

Մէջ զիշերին Մուքէն զինւեցաւ, ձին նստու և դիմեց իրենց գիւղը, ճանապարհին մինչև Արփաչայի ափո նրան ընկերացաւ Մէշէդի Մահմէդ Ալու կրտսեր որդին։ Հասանը։ Արփաչայը անցնելուց յետոյ շնորհակալութիւն տւեց, և Հասանը վերադարձաւ։ Դեռ շատ չէր հեռացած Արփաչայից, Մուքէն լսեց մի ձիու արագընթաց քայլերի ձայնը, որը Արփաչայի մ.ջ կանգնեց ջուր խմելու։ Մուքէն կարծեց, որ դաշախչի թարաքամա է, զգուշանալու համար ճանապարհից դուրս եկաւ և կազակների մարգերի

գլուխը մի թումբի ետևն անցաւ։ Քիչ յետոյ ձին անցաւ ջուրը և արագ քայլերով ճանապարհը ուղղեց դէպի Ղարաբիլիսա։ Թէն զիշերը մութն էր, ամպապատ ոչինչ չէր կարելի տեսնել, բայց Մուքէն նրա քայլերի ձայնից հասկացաւ, որ ձին բեռնաւորւած չէր։ Գուցէ, մտածեց, իրեն էին հետևում. գուցէ Եղիկն էր, գուցէ... այնքան մտատանջութեան մէջ ընկաւ, որ երկվաղից չէր համարձակւում հետևելու Վերջապէս սիրտ առաւ, մտածելով, որ իրենց գիւղի սահմանումն էր գտնուում։ և նստած ձին իրեն ամեն դէպօւմ կարող էր օգնել, առաջ գնալ։ Ձին ուղղեց գիւղ և գնաց կանգնեց մղպսի Կիւրեղենց դռան առաջ։ Այստեղ հասաւ Մուքէն էլ և ֆարաշը առանց թամբի, կտրտած սանձով արիւն քրափնքի մէջ կորած գտնելով ապշած մնաց։ Բայց իսկոյն ուրախութեամբ լցւեցաւ և սիրտը հրճանքով զեղուած դուռը սկսեց արագ արագ բաղսել։ Գիւղի շները ամեն կողմից հաջոց գցել էին և նրանց որոտման ձայնը զարթեցրել էր շատերին։ Պետո ամին ճրագը ձեռքը դուրս եկաւ և Մուքէի ձայնը լսելուց յետոյ դուռը բացեց։ Դուռդրացի իսկոյն թափւեցին և ամեն կողմից հարցնում էին Մուքէից, թէ ինչպէս կարողացաւ ֆարաշը ետ բերել։ Մուքէն առիթից օգուտ քաղեց և հաւատացրեց, որ Եղիկին պատահել էր մթանը, Քիւրակ-Դարայում սպանել, ձին առել ու վերադարձել։

Թէն շատերը չէին հաւատում ստախօս ու դնդրօշ Մուքէին, բայց ֆարաշի ներկայութիւնը մասամբ ստիպում էր հաւատալու նրա խօսքերին։

— Ախապէր, ասում էր մէկը, թէ եռ Եղիկին զիտեմ, նա հոգին բերանը դրան ձի չէր տալ։

— Տօ, ախապէր, ասում էր մի ուրիշը, դա ինչ թւանք գցող է, որ Եղիկին դարկէր, վար գցէր ու ձին ձեռքից խլէր։

— Ալսպէր, թէ ես ձանաչում եմ Եղիկին, դա նրա գիւրուի առաջից զլուխը պլքցնողը չէր, բայց մի բան կայ...

— Տնաշէններ, ասում էր մի ուրիշը, գնանք քնենք, վախենաք էզուց, էլ օր բանը չպարզէվ: Սափ մէնզիլը (տարածութիւն, երկայնութիւն) կարճ է, շուտ կը յայտնափի: Եղիկի արարքը շատերին ուրախացրել էր ներքուստ: Վերջապէս մղղափի Կիւրեղին վնասաւած տեսել էին, իսկ այս դէպքը շատ դուր չեկաւ:

Մուքէի մայրը առաջ եկաւ, իւր զոչաղ որդում ձակատը պագեց, ներս տարին, ձիերին հանգստացրին, խոտ, գարին տւին, և մինչև լոյս հանգստութիւն չտւին տանցիք և բարեկամները Մուքէին: Օրւայ կեղծ հերոսն էր և ամենքը ուղում էին արկածի պատմութեան հետ իսկութեամբ ծանօթանալ:

Լուրը հասաւ Ասլիին: Նրա մեծ եղբայրը լսել և տուն զարձել պատմում էր հօրը Մուքէի արկածը: Ասլին, որ զիւղում պատահած աղաղակներից զարթել էր, էլ չէր քնել, եղրօր տուն վերադառնալուց յետոյ ծածուկ մօտեցել էր լսելու հօր և եղրօր խօսակցութիւնը: Եղիկի մահւան պատմութեանը թէն նա չհաւատաց, բայց տիմրութեամբ լցւած գնաց պառկեց և սկսեց անկողնի մէջ անձայն լալ և աղի արտասուքով բարձը թուջել: Նախազգում էր, որ իւր սիրելուն վտանգ էր սպառնում և այդ վտանգի առաջն առնելու ճար չունէր: Հօրը յաղթեն հեշտ էր, բայց մեծ եղբայրն աւելի զօրաւոր էր, աւելի ազդեցութիւն կարող էր բանեցնել հօր վրայ և մտադրութիւնը դլուխ բերել: Գալո քէնէն թէն չէր համոզում որդու խօսքերով, բայց չէր էլ հերքում նրա ասածները:

Այնքան անկողնում լաց էր եղիկ, այնքան հեկեկացել էր և այնքան տանջւել, որ թմրել, քնել, մնացել էր:

Վրշալոյսին երբ նրա ընկերները բանի գործի էին, երբ նրան վինտրում էիր ոչխարը կթողները, մայրը մտաւ քիւլարը և նրան քնած դաւաւ: Քնած տեղը անդադար նա տնքում էր և հառաջում: Թշւառ մայրը զգաց, որ մի ցաւ ունէր աղջիկը, նրան չզարթեցրեց և հարսներին ու թոռներին հրամայեց նրա պարտականութիւնները կատարել: Տրտնջում էին հարսները սկսութիւնի դատաստանի վրայ, հայեացըներով իրենց գժգոհութիւնը յայտնում էին ամուսիններին, որոնք թէն անտեղեալ գործից, հայհոյում էին իրենց ամուսիններին:

Երբ ամեն մարդ իւր բանի-գործին էր, պառաւն էլ թնդիրը վառել, պրնձով ջուրը գրել, խմորի տաշտը մօտեցը էր օրական հացը թխելու համար, մինչև թնդիրի իջնելը, հարսի գալը, զրդնակն սկսելը, կրկին մտաւ աղջկայ մօտ և բռնելով նրա դատաստակն ասաց:

— Ասի ջան, աղջիկս, ինչ ունես, վեր կաց: Ասլին խկոյն թուաւ, եւաւ հազաւ,— Բան չկայ մայրիկ—ասելով գնաց իւր գործին: Բայց մայրը նրա գունատ գէմքը նկատած լինելով, թէն գնաց հացը թխելու, միայն անվերջ մտածում էր Ասլի վրայ:

Փափ.

Մուքէի Կիւրեղը Մուքէին ֆարաշի հետ դառնալու խաբարը առնելուն պէս, արդէն զգւած վնելով գրադների ձեռքից, վերադարձաւ գիւղ: Աչքի լոյսի եկան ամեն կողմից և Գալո քէնէն էլ շտապեց ուրախակցութիւնը յայտնելու: Մղգսի Կիւրեղը վերադարձին հետը մի տկար քիշմիշի արագ էր բերել: գալող գնացողին շահեց, պատւեց: անխնաց խմում էին հիւրերը: Ուրա-

խութիւնն ու խմիչը հարբեցրել էր մղդսի Կիւրեղին և նա արտայայտում էր ամեն թասին իւր անշափ ուրախութիւնը:

— Ես թասն էի, Գալօ քէհա ջան, բու ազիզ աղբրութեան կինացը. քեզ պէս դրկից, քեզ պէս բարեկամ և տանս լաւը կամեցող չունիմ այս գիւղում: Քեզ համար գրած է այս օջախը. ես չեմ տան տէրը, դու ես, քէհա ջան, հրամայէ, թող հրամանը կատարվի: Բայց չէ, ես կը հրամայեմ. այսօր իմ ուրախութիւնը միծ է. ձեր չնորհիւ, ձեզ պէս բարեկամների կամեցողութեամբ իմ կորուստով վերադառնաւ: Փարաշը քրեզ փէշքեաչ, Պետօ, տար քէհանը կապէ քէհէնց ախոռը, մի ձին ի՞նչ է, որ ես խօ ձիու դարդը չէի, ես ձախորդութեան դարդն ունէի, էն էի, փառք Ըստուծնյ, դէպի բարին փոխեց: Պետօ, Մատօ, մի ոչխար մորթէ, մատաղ արա, մենք էլ կ' ուտենք. թէզ, դանակի սրէ:

— Սղդսի ափար, Փարաշը ես տանեմ քէհէնց տունը, ասաց Մուքէն կակազելով:

— Հա որդի, տար, զմու տար, քու ձեռքով փէշքեաչ արա քու ախապրացուին, ախոռը կապէր ու արի:

— Զէ ախապէր, չէ, չնորհակալ եմ, ձին տիրոջը փէշքեաչ: Թող Մուքայէլը բարով վայելէ, մուրադն առնէ. տունը աչքի առաջ պահէ, որ միշտ յիշէ, որ տան դուշ մանի հախից ինչպէս պէտք է գալ:

— Մի խօսիլ, Գալօ քէհա, կը ցաւեմ, մի դէմ կենալ, բաշխածը—բաշխած է, վերջացած է. տար որդի, տար կապէր

— Մուքօ, մի տանիլ, ախապէր տեղը կապէր, դու ինձ լսիր, հայրդ ինձ բաշխեց, ես էլ քեզ եմ բաշխում, ասաց մօտենալով Գալօ քէհան:

— Տար, ասում եմ քեզ, ձայնը աւելի բարձրացնելով

մօտեցաւ մղդսի Կիւրեղը, տար կապէր, ետ արի:

— Ախապէր ջան, ինչի ես ամաշացնում Մուքօն, դու տեղը կապէր, դու ինձ լսիր, ասաց ու քաշեց գրկելով ներս տարաւ, մղդսի Կիւրեղին Գալօ քէհէն:

Մուքէն, երևակայական յաղթութիւնից յետոյ, ուզում էր մանել Գալօ քէհէնց տունը, Ասլի աչքին երենալու, նրա ուշը գրաւելու յօյսով, բայց հանգամանը չնպաստեց, ցանկութիւնը անկատար փորը մնաց:

Մղդսի Կիւրեղը քիշմիշի արազով հետզհետէ տաքացրեց գիւղի բոլոր քէհաների գլխները, մատաղները եփւեցան, նորուսիած, խաշած բաժանեցին, մինչև իրիկուն քէփ արին: Մղդսին Գալօ քէհին աջ կողմը նստեցրած, ամեն մի լաւ պատառը կիսում էր նրա հետ և ամեն մի թասին մի մի խօսք էր զցում, նրա հետ ժառանգական բարեկամութեամբ կապւած լինելու ցանկութիւնը արտայայտելով: Գալօ քէհէն հասկանում էր նրա մտադրութիւնը, բայց փախչելու, ազատւելու յօյս չունէր: Սեղանից յետոյ երբ արդէն հաւաքել էին ամեն բան, մղդսի Կիւրեղը ասաց.

— Ախապրտամնք, ես ուզում եմ քէժքը առաջ տանել. մինչև իրուկուն մեր տանը քէփ արինք, արիք այս տեղից երթանք զիշերս էլ աղբօրա՝ Գալօ քէհի տունը շարունակենք մեր ուրախութիւնը:

— Երթանք, երթանք, ձայն տիին ամեն կողմից:

— Արաղ, ախապէր, դեռ մեր տկնորը կիստած չի լինիլ չորս օր էլ որ խմենք չի պարպիլ, հինգ վերբո բան է. բաղար մարդ ուղարկելուց աւելի լաւ է մենք չալակենք տկնորը հետներս տանենք: Գիտեմ թէ Գալօ քէհա ջան, մեր մէջ իմ ու քու չպիտի լինի. քէհան չ' ընդունեցիր, արազու պիտի ընդունես...

— Կ'ընդունի, կ'ընդունի, աղաղակում էին ամեն կողմից:

— Տղերք, մաշալէքը վառեցէք:

Քսանի չափ միջահասակ և հասակաւոր համփաներ՝ շրջապատած մղդակ Կիւրեղին և Գալօ քէնին, դիմեցին վերջինիս տունը: Նրանց առաջից և կողքերից չորս հինգ մարդարաներ վառած երեխները տանում էին: Երդէն մի երկու ճարափիկ տղայ վազել ժամանակին հիւրերի գալուառը իմացրել էին քէնի մեծ որդուն՝ Թումասին: Երբ մօտեցան անկոչ հիւրերը քէնենց դռանը, թումասը հրամայեց մորթել մի գեր ոչխար: Նրա առատարտութիւնը գովեց մղդակ Կիւրեղը և եղրօյ Պետօի ականջին ասաց, որ գնայ Փարաշը Մուքէի հետ ուղարկէ քէնենց տունը: Սա մի կաշառք էր, որ տալիս էր մղդակին Թումասին, դիտենալով, որ նրա կամքից կախւած էր ամեն բան:

Օդան նստած ուրախութիւնները շարունակած միջոցին Թումասի ու Մուքէի լէճի ձայնը հասաւ Գալօ քէնի և մղդակ Կիւրեղի ականջը: Գալօ քէնան երբ ուղում էր դուրս գնալ, մղդակ Կիւրեղը նրա թեից բռնեց ու նստեցրեց քովը ասելով.

— Ախալէր, նստիր, քեր ի՞նչ:

Այս միջոցին ներս մտաւ մի երեխայ և քէնի ականջին մի քանի խօսք ասաց.

— Ախալ ինչի՞ այդակս բան էք անում, մղդակի, Փարաշն ինչի՞ են բերել:

— Այդ քու գործը չէ, ես բաշխել եմ Թումասին:

Ճարահատեալ Թումասը ախոռը կապեց քէօհլանը և եկաւ շնորհակալութիւնը տւեց: Հետզհետէ հրաւիրեալները շատանում էին: Այդ միջոցին Կարնի գաղթական աղաներից և սարբաֆներից մի քանիսը ապրում էին Վարարիսա: Գրւմրին քաղաք դեռ չէր դարձած. Նրանք էլ հրաւիրւեցին: Սրանց հետ եկան սազանդարները, որոք իրենց երգերով և նւազածութեամբն աւելի բորբոքեցին այդ

ուրախութիւնը: Այս միջոցին ուրախութեան լրումը պահանջեց մղդակ Կիւրեղը. նա խնդրեց Գալօ քէնի աղջկայ ձեռքը իւր որդու՝ Մուքէի համար: Երկար ձևական խընդրւածքներից յետոյ համոզեցին հօրը և Ապլիին նշանեցին Մուքէի հետ: Ճէր Մլէն, որ սեղանակիցների թւումն էր, նշանը օրհնեց և հանդիսականները հետ միջի լոյս շարունակեցին ուրախութիւնը:

ՓԵ.

Ապին նշանադրեքից յետոյ սկսեց օրից օր մաշւել: Նա քանի որ Եղիկին յիշում էր, աչքերը մթնառում էին, կրակ էր կարում և անընդհատ հառաչանքներով աշխատում էր մի կերպ սիրաը հովացնել: Բայց զուր, ոչ մի լուսէ ցերեկը Եղիկի պատկերը չէր հեռանում նրա մտապատկերներից և ոչ քնած ժամանակը՝ երազից: Հերլիքնազանը՝ պառաւ մայրը տեսնում էր, աղջկայ մաշւելը, բայց անճարացած էր՝ ոչ մարդուն կըսնար խօսք հասկացնել, ոչ էլ տղին:

— Այս կնիկ, ի՞նչ ես ասում, ի՞նչ, ուղում ես, որ ես գդակս վար գնեմ, թքածս լիզեմ, ասեմ, կնիկս համաձայն չէ, աղջիկս մղդակ Կիւրեղի տղին չի առնում: ասում էր ամեն անգամ Գալօ քէնին, երբ Հերլիքնազը մի կերպ բացատրում էր աղջկայ վիճակը: Ի՞նչ է, ուղում ես, որ ողջ Շեօրագեալում ծամօն դառնամ, ամենքը թքեն իմ երեսին, որ այդպիսի անկոտրում աղջիկ եմ մեծացըել. իմ օջախի անունը հողի հետ հաւասարեցնեմ, աշխարհ խօսի, թէ հերը տւեց, աղջիկը չառաւ:

Հերլիքնազանը լուսում էր և ուրիշ պատասխան չէր գտնում. միայն ասում էր միշտ, առանց պատասխանը լսելու:

— Փեղ ով ասաց, այդքան շուտ իմ աղջիկը նշանել; Գալօ քէհէն աւելի խօսակցութեան չբռնելու համար երեսը առնում փախչում էր. բայց իսկապէս նրա սրասովն էլ չէր Մուքէի նման փեսայ ունենալը, նամանաւանդ, որ նա էլ շատ բարեսիրտ մարդ էր. աղջկան այդ զրութեամբ նկատելիս սիրու կարուում էր: Բայց որ խօսացել էր, այն համբաների, Կարնեցի աղաների և քահանայի ներկայութեամբ, խօ չէր կարող խոսառումը ետ առնել:

— Աղջկս, ասում էր Հերիքնազը շատ անգամ, գաղտնի նրան արտասւելը նկատելով, լացով մեռելը կ'աւողջանայ, մեռելի ետեսից կ'ընկնեն, կ'մեռնեն: Խելքի արի, քու հայրդ, քու եղբայրդ, ես, միթէ քու գէշը կ'ուղենք: Մոռացէր ամեն բան և ծնողներիդ օրհնենքը ստացիր:

Ապին լրում էր և մի կերպ երեսը պահում մօքը չը պատասխանելու համար: Բայց իւրաքանչիւր անցած օրը նրա իրանից մի մի շապիկ հաստութիւն տանում էր, գոյնը թառամում, երեսը թոշում, աշխերը կարմրում ու կցկուում, նւազում էին: Որպէս նշանած աղջիկ, տանից էլ փի էր գուրս գալիս, որով աւելի գոյնը սկսեց գեղնել և այսերի վարդադոյնը թափւել: Նրա բարձր հասակը, երկար վիզը, առոյդ կազմւածքը, խրոխտ հայեացքը, սև ու հրացայտ աչքերը, սաթի նման մինչև ծնկնելը հասնող մազերը էլ այն գրաւիչ տապաւորութիւնը չէին թողնում. էլ ամեն բոսէ չէր լսում նրա քաղցր ձայնը, իւր ձկուն և ոլորուն ելեէջներով. նրա եայլիներով էլ չէին պարում գիւղի հարս աղջիկները. նա միայն առանձնութեան մէջ միճակն էր ողբում աղիողորմ մանիներով, որոնց հազարը միանգամից իրար ետեսից շարում, ասում էր, հառաջում, ճեկնելում և վայրէին մեռնելու էր, որովհետեւ ով պիտի օգնէր նրան մասն թշւառ և անոէր մարդուն, ով պիտի պաշտպանէր, ով պիտի վրկէր:

Թէկ լաց էր լինում, թէկ սգում էր, բայց Ասլիի հաւատալը չէր գալիս, որ Եղիկը մեռած լինի, որ իւր առիւծասիրտ և այնքան արագաշարժ Եղիկը գնդրչած Մուքէի գնդակից մեռած լինի: Այդ յոյսը նրան քաջալերում էր ասլրելու, մի օր Եղիկին կրկին համելու տենչանքով: Եկաւ վերջապէս որոշւած շարաթ գիշերը. հասաւ որշւած ժամը, բայց Եղիկը չեկաւ, չեկաւ, թէկ մինչև լոյս անքուն և անհանգիստ, սրտատրով սպասեց նրան Ապին: Այս թէկ բաւական մեծ հարւած էր, բայց նա խօստացել էր շարաթ կամ կիւրակի գիշեր գալ, հետևապէս սպասեց և հետևեալ գիշերը: Խոկ Եղիկը, ինչպէս տեսաւ ընթերցողը, այդ պայմանաւորեալ գիշերը անցկացրեց Մէդէդ քէզի ախոռում շղթայակապ, հառաջանքներով, այսպէս, ինչպէս նրան սպասողը:

Խոկ այդ գիշերն էլ անցկացնելուց յետոյ, Ասլիին տիրեց մի տեսակ յուսանատութիւն. նա եզրակացնում էր, որ Եղիկը կամ մեռած էր, կամ մի փորձանքի մէջ, որ չվերադարձաւ խոստացեալ ժամանակին: Երկու դէպըն էլ մահացու էր Եսլի համար, որովհետեւ եթէ մեռած էր, իրեն էլ ինչ հարկաւոր էր կեանքը. միթէ Եղիկի թշնամուն, նրան սպանող կարծւածին գգւելու, գուրդուրելու և հաճոյանալու համար: Եթէ փորձանքումն էր, շուտով դարձեալ մեռնելու էր, որովհետեւ ով պիտի օգնէր նրան մասն թշւառ և անոէր մարդուն, ով պիտի պաշտպանէր, ով պիտի վրկէր:

Այս մտքերը նրան սկսեցին օրից օր էլ սաստիկ մաշել և նա մահան դիմողի նման աշխատում էր աւելի շատ ժամանակ անցկացնել այն սիրելի վայրերում, որտեղ երկար ժամանակ էր անցկացրել իւր սիրեկանի հետ. աւելի շատ մնալ այն քիւրում, որը եղել էր նրանց առանձնարանը, որպէս զի մեռնելուց առաջ մի կարօն

առնի, յագենայ և այնպէս գնայ, մտնի սև հող։ Գալօքէհէնց քիլարը դարձել էր նրան ննջարան, առանձնարան, ամեն բան։ Թէև անկողնում չէր, թէև ֆիզիքասկը ցաւ չունէր Ասլին, բայց հոգով ակար էր, սրտով, մտրով հիւանդ էր։ Դարերից աւելի երկարացաւ այդ բան օրը Ասլիի համար. այդ օրերում շղթայակապ բանտարկեալ Եղիկը աւելի երջանիկ էր, բան թէ Ասլին, նա զիտէր, որ Ասլին ապրում էր և իրեն սպասում, բայց Ասլին արդէն սկսում էր կասկածել, որ էլ յաւիտեան վերադառնաւու չէր իւր Եղիկը։ Երազներով էր միայն միսիթարում, որոնք միշտ իրեն խաբում էին։

Վերջապէս մի գիշեր լուսամուտի տախտակի բացւելը նկատեց Ասլին, ճաց, բայց կարծում էր դարձեալ երազ է։ Վայրկենական արագութեամբ իջաւ Եղիկը, գլկեց նրան, բայց նա ուրախութիւնից ուշագնաց մնաց նրա կրծքի վրայ։

ՓՊ.

Սինչդեռ մութ քիլարում Եղիկը աշխատում էր մի կերպ սթափեցնել Ասլին, պառաւ Հերկքնազը, որ աղջկայ այս տանջանքների շրջանում քունը բոլորովին կորցրել էր, խարխափելով ներս մտաւ։ Թէև Եղիկի համար այդ տեղ մթնումը ելրորդ անձի ներս մտնելը կեանքի և մահու խնդիր էր, բայց նա իրեն անձը մուտացած գոռաց։

— Մի թաս սառը ջուր բեր։

Պառաւը ցնորածի նման ետ վագեց. տան (խոհանոց) միջով անցնելիս այնքան ուշը զլսին չէր, որ կոխելով անցաւ յատակի վրայ պառկած երեխաների վրայով, որոնցից մանրները ցաւից զարթեցին և սկսեցին բարձր

ձայնով լալ. Երեխաների ձայնը զարթեցրեց նրանց ծնողներին, որոնք հետաքրքրւեցան լացի պատճառն իմանալու։ Պառաւը մի կերպով ջուրը հասցըրեց Եղիկին, առանց բացատրութիւն տալու որդիներին և հարսներին. Բայց Թումասի կնիկը երեխաներին քննեցնելու պատրւակով վերկացաւ, որոնց դեռ չանդատացրած մօտեցաւ քիլարի դրանը, լրտեսելու կեսրոջ և տալի արարը։ Քիչ յետոյ մարդուն էլ կանչեց։

Պառաւը, առանց իմանալու թէ ո՞վ էր աղջկայ մօտ եկողը, մթնումը կատարում էր նրա բոլոր հրամանները. Նա օգնում էր աղջկան և չէր կարող երեակայել անզամ, որ երթիքից մտած մարդ կար քիլարում։ Ասլին վերջապէս սթափեցաւ և առանց գիտենալու մօր ներկայութիւնը կակազեց։

— Եղիկ, դժու ես, խօ չեմ երազում...

— Ո՛չ, ոչ, տես, ջուրը թրջեց քու չորերը. լսում ես իմ ձայնը։ Ասլին երազներով այնքան խարւել էր այդ օրերը, որ համոզելու համար զգուշութեամբ շկեց Եղիկի վիզը, դուռիս և երեսը։ Հերիքնազը լուռ, ապշած, շւարած մնացել էր, չէր իմանում ինչ անել։

— Եղիկ, տար ինձ, Եղիկ, աղատիր ինձ, ասաց հառաչելով Ասլին, այս անխիղճները ուզում են ինձ քեզանից խլել, գնդրչկածի ձանկը ցցել։ Եղիկ վրկիր ինձ...

Եղիկի անընդհատ կրկնութիւնը սթափեցրեց պառաւին, որը մօտեցաւ, գրկեց աղջկան, մի կողմ քաշելով ասաց։

— Տօ տղայ, տօ շան տղայ, դուրս ելիր, կորիր, գնա իմ դռնից, թէ չէ քեզ կտոր կտոր կանեն իմ տղերը։

— Գալա ջան, թող քու տղերքը ինձ կտոր կտոր անին, ասաց Եղիկը, քու տղերքը ինձ մորթեն, քերթեն,

ետև իրենց քուրը մուլազի ձեռքից խլեն, տան դնդրըշկած Մուքէին:

— Զէնդ կտրէ, նա իմ փէսէն է, դուրս կորիր, հիմի կըկանչեմ Թումասիս ու Բարսեղիս լէշդ փռել կըտամ. դուրս կորիր, ասաց, դուրս գալով, տանելով գրկում նւաղած աղջկան:

— Քնդ աւազակի տղայ, տղերը ելէք, Բարսեղ, Մարկնս, Մուրանդ, Համբօ, գող կայ ելէք, ելէք, աղաղակը բարձրացրեց Թումասուը և սկսեց չորերը հագնիւ: Մինչ նրանք արեթը և կայծաքարը գտան, Եղիկը տանիք բարձրացաւ և ողուելով միւս փողոցն անցաւ. ձին նստաւ, գէնքերը քննեց և պատրաստեց դիմադրելու իւր վրայ յարձակւելու պատրաստողներին: Ողջ գիւղը զարթեց այդ աղաղակից՝ շների ոռնոցն ու հաշոցը ոտքի հանեց բոլորին. և իւս ժամ չանցած քէհի և մղտու բարեկամ երիտասարդներից երեսուն ձիաւոր սկսեցին հալածել Եղիկին: Երբ ձիաւորները մօտեցան Արփա-չային՝ սկսեցին գնդակներ արձակել Եղիկի ետևից և իրենց բարձրացրած աղմուկը լսելով սահմանապահ կօզակները մօտեցան նրանց և իմանալով պատճառը՝ նրանց հետ ութ-տասը կողակ էլ միացած, անցան սահմանը և մի քանի ժամ զուր չարչար-ւելուց յետոյ դատարկաձեռն վերադաշան:

ՓԷ.

Առասդէմին Եղիկը անցաւ Ալաջա սարի լանջքերի վրայ ոչխար արածացնող քուրդերի մօտից: Սասարիկ յոգնած էր և սոված: Կողսւածի մօտ առաջի պատահած երիտասարդ չովկին ճանաչեց, որը իւր նախորդ տիրոջ որդին էր: Վերջինս մերժեց նրա խնդիրը, չուցեց նրան կաթ և հաց տալ, դեռ մի քանի նախատական

խօսքեր ասելուց յետոյ „մուրտար-դեալուր“ տիտղոսն էլ Եղիկի, երեսովիլ տւեց:

— Կթանները քուկդ են, հարցրեց հեգնութեամբ Եղիկը, թէ հօրդ:

— Իմ հօրս է, Դահար Բէզինն է, պատասխանեց գոռողութեամբ:

Քիչ անցնելուց յետոյ ետ դարձաւ հովիւը և աւելացրեց:

— Ինչի՞ ես մուրացկանութիւն անում, ինչի՞ թողի՞ր մեր գառները ու փախար, ծոյլ կենդանի, գիտես թէ չէմ ճանաչում քեզ, արի նորից գառները արածեցրու և՛ հաց, և՛ վարձք ստացիր: Չես ամաչում, ջահել տղայ ես, բայց ինչպէս սաել եմ, երեսիցդ երեսում է, որ մթքութ (մուրացկանի սերունդ) ես:

— Ես ոչ ծոյլ եմ, ոչ էլ մուրացկան, Անցորդ եմ սոված, որին ոչ որ չի խնայում մի փոր հաց... ինչ է, ուզում ես, որ զամ դարձեալ երկու տարի ծառայեմ ձեր դրանը մի փոր հացով, հախս էլ կտրէք, վոնդէք:

— Ասա խարեբայ եմ:

— Զէնդ կտրէ, մի ինձ բորբոքիլ...

— Թէ չէ... ասաց հեգնութեամբ քուրդը:

— Պատրաստւիր, ես չեմ ուզում անզէն մարդու վրայ գէնք բարձրացնել, ասաց Եղիկը և դարարինի բերանը բարձրացրեց:

— Կօրօնիր, գեավուրը ինձ վրայ տւեց, կօրօնիր, հասեք, սկսեց գոռալ քուրդը: Հեռափց երկու հովիւներ իրանց մահակներով վազեցին օդնութեան Դահար Բէզի որդուն, որոնցից մէկը մի քարի կողդ անցաւ և հրացանի փողը ուղղեց, որը Եղիկի կողքովն անցաւ: Եղիկը առանց ձիուց իջնելու հրացանը ուղղեց և քարի ետև անցածի ուղեղը ցըւեց: Միւս քուրդը սկսեց վազել դէպի չադիրները:

Եղիկը մինչև մի գնդակ էլ նրան հասցնելը, ետևից Դահար-
բէջի որդուն, ուրիշ երկու քրդեր էլ օգնութեան հասան,
որոնք դարաբինաներով յարձակւեցին Եղիկի վրայ: Յու դար-
ձաւ Եղիկը և զարարինան դատարկելով գետին փռեց
բէջի որդուն: Այս որ տեսան օգնութեան եկող քրդերը,
սկսեցին փախչել: Եղիկը աւելի մեծ խմբից չմշապատե-
լու համար նրանց հետեւց, բայց անկարելի էր շէջին ա նա
թւանքը լցնել. փողը տարացել էր, փանգաւոր էր իսկոյն,
երրորդ անգամ լցնելու: Մինչև հրացանի սառչելը նրանք
բարձրացան Ալաջի գագաթը, երկիւղից մինչև կէս օր
այնտեղ պահանջանան:

Եղիկը Դահար բէջի որդուն դաւալը վեր առաւ և
մի եղանակ ածելով հինգ հովհի կթանը հաւաքեց, որոնց
թիւը երեք հարիւրի մօտ էր, առաջը խառնեց և քշեց
Տիկորի կողքից անցաւ իջաւ ուղիղ Ծբնի: Մթան ժամա-
նակ նա այդ տեղից բարձրացաւ դէալի Եաղլուճա և այն-
տեղ եայլա գնացող հայերին բաժնեց ոչխարը կիսովի
պահելու: Այնտեղ գիշերը չկարողանալով հանգստանալ,
ելաւ հեծաւ ձին, քշեց դէպի Քերս:

— Այս տղերը, ասաց նրա զնալուց յետոյ Ծբնեցի
տէրտէրը. այս մարդը խելաւ էր, գող էր, կթան ոչխարը
տուանց գառի մրտեղից բերեց ու ցրւեց քիասումի (կտր-
ւածքով):

— Բան չունիս, տէրտէր, ամեն խեղճ տուն իրեն
համար հինգ տասը կթան ունի, նրանց գառներով դրանք
էլ կը կթւեն, թող աղքատ մարդիկ շահւին:

— Բան չեմ ասում, բայց...

— Երկի քեզ քիչ տւեց...

— Զէ, զուն էլ Գոգոր ամի, մենք մերը շատ շահե-
ցինք. բայց ես վախենում եմ, որ էգուց կթաների տէ-
րերը գան ու մերն էլ հետը ետ տանեն:

— Ո՞վ գլտէ, ո՞վ կարող է ճանաչել, գիշերս ամենքն
էլ կը խուզեն, էքուց քառասուն սատանայ գայ չի ճանա-
չի երանց:

— Աստւած տայ այդպէս լինի, բայց վախենում եմ...

— Ես ու գու թէ բան չըխօսենք, վախենալու ոչ-
ինչ չի մինիլ. ամենից մեծ վախը մեր լեզիցն է, ասաց
խօսքը կտրելով Գոգոր ամին:

— Գիտէք ինչ կայ, աէրտէր, մէջ մտաւ մի ուրիշ
ծերուկ, այդ մարդու նստած ձին, զիտես, թէ մեր Մատօ
քէնի իլիսից փախցրած ձին է:

— Ես հաւատացած եմ, որ այդ մարդը էլ ետ չի
գալ... կրկնեց մի ուրիշը:

— Է՞՞ն, լաւ կըշինէք մեր տունը, «զիտես թէ»,
«ինչի մնաց», «վախենում եմ», «ես հաւատացած եմ»...,
թողէք, Աստւած սիրէք, այդպիսի ենթադրութիւնները,
գործերիդ աշեցէք, ասաց նեշացած Գոգոր ամին: Զի գալ,
զլուխը քարը, թէ չի գալ, մենք վնաս խօ չենք ունենալ:
Փառք Աստուծոյ, մեր երեսուն աղքատ տանը, ամեն
մէկին տաս տաս կթան բաժնեց. էլ ինչ կուգէք: Գիտեմ
ձեր քէյֆով կը լինէր, եթէ բոլոր ոչխարը ձեր երեքին
տար ու գնար... բայց իշտահներիդ պրաս ջարդեցէք,
մարդը արդար դատաստան տեսաւ: Զտես մարդ էք, ինչ
պիտի լինի, փորերումդ մի գաղտնիք չէք կարող թաղել:
Այնքան ծակ աչք էք, այնքան նախանձ, որ էգուց գնա-
ցող եկող քուրդին ու թուրքին այսօրւայ բաժանած
կթանի մասին կըխօսէք, ձեր արմանքն ու զարմանքը
ցոյց տալով:

— Գոգոր ամին լաւ է ասում, մէջ մտաւ մէկը,
բերաններդ սրբեցէք, տներդ բաշւեցէք: Մի անգամ էլ է
փորձեցէք գաղտնիքը փորերումդ պահելու, տեսնենք խօ
չի ծակել, թափւել:

Սարը փախած երկու քուրդ հովիւները երկիւղից այնտեղից դուրս չեկան մինչև իրիկուն։ Գիշերը մթանը գնացին իրենց վրանները, և որպէսզի ընկերներից ու մեծերից չնախատիին, խարեցին, որ տասը-քսան ձիաւոր թէարաքեամա իրենց հետ կուել, ընկերներին գնդակահար արել և ոչխարն էլ քշել տարել էին դէպի Զըլդըր։ Փուրդերն հաւաքեցին, խորհրդի նստան և ձիաւորներ հանեցին դէպի Զըլդըր, բոլոքեցին փաշային ու դայմաղամին, բայց ոչխարի հետքը չգտան։

Ծբնեցիք մարսեցին կթանները։

ԺԼ.

Որնու եայլեցիք դեռ չէին ցրւել, յանկարծ մի աղմուկ բարձրացաւ և տասնի չափ ձիաւորներով Մարդ քէհի տղան՝ Վարդգէսը մտաւ եալա։ Բոլորը շրջապատեցին նրան, և նա առանց ձիուց իջնելու հարցրեց։

— Տէրտէր, մի ձիաւոր չորան այստեղ է եկել։ ո՞ւ է։

— Որդի, Վարդգէս, ասաց տէրտէրը, մի ինչ որ չորան իւր կթանները բերեց քեասումով բաժանեց ու գնաց։

— Ո՞ր կողմը գնաց։

— Զգիտեմ, բայց կէս ժամ հազիւ կայ նրա գնալը։ Ում բաժնեց կթանը։

— Խեղճերուն, որոնք չունէին, ասաց—չունեղուներին տամ, որ լաւ պահեն ապրանք։

— Ի՞նչ ձի էր նստել, տեսմու։

— Բաց կապոյտ ձի էր, լաւ չաշեցի։

— Վարդգէս ջան, մէջ մտաւ մի գիւղացի, գիտեսթէ ձեր քէօհանն էր։

— Տեսաք ու չբռնեցիք նրան, ինձ իմաց չտուիք։ Իմացայ, իմացայ տէրտէր, դու եղել ես եաթաղ (իջևան պահպանող) ամեն գող քեզ մօտ է վար գալիս։ Գիւղացու էլ բերանը կապելու համար տուն գլուխ տաս տաս կթան ես բաժանում։ Էզուց Մէդէդ բէգին դու պատասխան տուր։ Տղնրք, քշեցէք, Հելքէթ, տեսնող չեղաւ, որ կողմը գնաց։

— Մութ գիշեր, ո՞վ է իմանում. բայց այդ խօսքերդ լաւ միտքդ պահէ, զնա ձիդ տանողի ետեից, բայց մի մոռանար, որ ասածներդ հաստատելու ես. ասաց տէրտէրն ու հեռացաւ։

— Քեզ հետ Մէդէդ բէգի քով կըխօսեմ, տէրտէր։ տղերք, քաշեցէք, ասաց ու առաջ անցաւ Վարդգէսը։

— Մէդէդ բէգեր շատ է տեսել տէրտէրն ու Ծրնին, դու գնա նրա ոտքերը լիցէ, տեսնենք կարող է առանց ինձ հօրդ միշտ քէհա պահել, որ դու էլ բորդբրդաս։ Գնացէք աներդ, թէ մէկը մի խօսք կասէ, ասէք տէրտէրն առաւ ոչխարը մեզ պահ տւեց։

— Աստած կարքիդ հաստատ պահէ, տէրտէր ջան, ասաց մի ծերուկ, դու որ մեզ հովւես, հովանաւորես, էլ մեր ինչը կ'պակսի։

Վարդգէսը իւր ձիաններով ճանապարհի հովիւների մօտից անցնելիս հարցնում էր.— խօ չէին տեսել ձիաւոր։

— Վարդգէս ախպէր, ասաց մի Զոչեցի հովիւ, նոր մի ձիաւոր Բվիկի կողմը գնաց։

— Բվիկ, ասաց ու գուաց, տէրքք քշեցէք, բոնենք այդ անիծածին։ Ղաթար-ղալա աւերակների մօտ նրանք հասան Եղիկին։ Վերջինս հասկանալով, որ իրեն են հետեւում, մտաւ աւերակների մէջ և ձիուց իջնելով նրան մի պատի ետե կապեց, ինքը հրացանը առած անցաւ մի ուրիշ պատի տակ և մթնումը բաւական գիտելուց և նրանց

բարձրացրած ազմուկը լսելուց յետոյ նկատեց որ խմբով
մեծ արագութեամբ գնում են ճանապարհով: — Տղերք,
գոռում էր Վարդգէսը, հասէք, շտապիցէք հասնենք:

— Կ'հասնէք, գոռաց Եղիկը և հրացանը դարդկեց:

— Վայ, գոռաց մէկը, ընկաւ ձիուց: Մի քանիար
նրան շրջապատեցին: Վարդգէսի խումբը շւարեց և չըկա-
րողացաւ խմանալ, թէ որ կողմից եկաւ գնդակը: Մինչ
նրանք շփոթութեան մէջ էին, Եղիկը սառեցրեց, լցրեց
թւանքը, և տեղը փախելով երկրորդ գնդակը արձակեց
իրեն յետք փնտրող մի ուրիշ խմբի մէջ:

— Վայ, մեռայ, գոռաց մի ուրիշը ընկնելով: — Տղերք,
այս գիւղիւէն սւրիշ տեղից եկաւ, ասաց մի ուրիշը, այս
խարաբում շատ բարդ կայ, փախչենք: Եղիկը տեղը փո-
խեց և կրակեց լեզու փշտօֆը, որը նոյնպէս վիրաւորեց
մի երրորդի:

— Պարակեցէք, գոռաց Վարդգէսը: Չորս հրացանա-
տորներ միասին կրակեցին և գնդակները թաղւեցան Ղա-
թար-ղալայի աւերակների որմերի մէջ: Եղիկի ուզածն
այդ էր. նրանց հրացանները մինչև կրկին անգամ լցնելը,
նա կարող էր չորս կրակ էլ անել. ուստի համարձակ
գոռաց:

— Մի վախենաք, վախկնաներ, ձեր դէմ մի հայ է,
ձեր ասաւ ձիաւորի դէմ դնողը Ղարաբիսեցի Եղիկն է:

— Տղերք, վրայ տւէք. գոռաց դարձեալ Վարդգէսը,
տօ մեր մշակն է, տօ այն սաստկած Եղիկն է, ձայնից
ճանաչեցի, վրայ տւէք:

— Տղոց արիւնը մի մանիլ, դու առաջ արի, Մատօ
քէհի տղայ, մի թուլանալ, քու դէմ կանգնած է այն մշակը,
որի մի տարւայ հախը կուլ տիր, ասաց և հրացանը ուղ-
ղեց Վարդգէսի կողմը. Վարդգէսը հրացանը դարդկելու
չմնաց, ձեւրից ընկաւ, ինքն էլ ձիուց վար ընկաւ. Մի

ուրիշ քաջասիրտն առաջ անցաւ և գոռաց.

— Թէ դոչաղ ես, դուրս արի, խարաբաների ետևից
անսիրտ կնկալիքն են կուռում:

— Քսան հոգով մի ապանի դէմ էլ որ դուրս գան,
նա էլ կը փնտրէ իրեն համար մի ապահով անկիւն, ա-
ռաց, և երբ պատասխանում էր առաջինը, հրացանի
գնդակը նրան էլ գլորեց: Նրբ մղկտում էր վիրաւորւածը,

— Տղերք, գոռաց մի ուրիշը, որ մինչև այդ ժամա-
նակ նախկին ընկնողի քովն էր, դարձէք, ետ դարձէք, և
ինքը ձին մարակեց:

— Զիերդ թողէք, թէ չէ մէկդ չէք ազատւիլ իմ
գիւղւկեց, գոռաց Եղիկը:

— Ըրի տար, գոռաց փախչողներից մէկը:
Եղիկը մի գնդակ էլ հասցրեց: Նրանց խումբը մեծ
էր, մէկն ու մէկին հասնում էր գնդակը:

— Քեցէք, տղերք, քշեցէք, մի վախենաք, գոռում
էին իրար սիրտ տալով և փախչում մնացեալ երեքը, ա-
ռանց խուները մտիկ տալու:

Եղիկը ձիերը հաւաքեց, իրար կապկակեց, միուածնե-
րի զէնքերն ու զարդերը նրանց վրայ բարձեց, առաջը
խառնեց և մինչև արշալոյս մտաւ Քերս, առանց դժւարու-
թեան գնաց մտաւ Միլզայի տունը՝ ջրաղացի մօտ:

ՓԹԱ.

Եղիկը գիշերը սաստիկ յոգնած լինելով ընկաւ և
խորդալով քնեցաւ, նէր օրից մի երկու ժամ
անցնելուց յետոյ նա դարձեալ խուկում էր: Միրզան ջրա-
ղացի ներքնատանը որդու հետ երկար աշխատանքով հա-
գիւ կարողացան մի կերպ թագցնել ու ծանկել Եղիկի բե-

րած գէնքերն ու զարդերը, իսկ ախոռի երթիքը լաւ կապել էին, որ եթէ յանկարծ մարդ ներս մտնէր, ոչինչ չնկատէր։ Ողջ օրը հսկում էր Միրզան ճանապարհները և ամեն անցորդ նրա սիրտը խոռովիցնում էր, հազար ու մի կասկածներ բարձրացնելով։ Նախկին վաճառական—չարչին մաքովը հաշում էր ձիերի գինը, զէնքերի արժեքը և նրանց գտնուած ոսկու և արծաթի կշիռը։ Նրանց վաճառելու եղանակը, ձեռք բերելիք դրամը և դրանով ձեռնարկելիք նոր նոր գործերը, որոնք խոստանում էին մի քիչ բարւոքւած ապագայ։ Միրզան անհամբեր սպասում էր գիշերւայ գալուն, բայց արեգակը յամառւել, ծանր էր հեռանում։ Մելօն՝ վաճառականի որդին զէնքերով էր զբաղւած, նա արդէն նրանց միջից ամենալնտիրները իրեն բաժին էր դուրս բերում և երևակայում էր դրանցով զարդարւած, գլուխը գոյնզգոյն ազլուխներով կապւած քոլոր դրած, ձեռքին երկար նիզակ, քէօհլանը տակին։ սարերի և ձորերի մէջ ազատ, ինքիշխան և քուրդն ու զարիթը (ոստիկան) առաջը խոնարհած։ Նա երևակայութիւնով գնում էր Բիթիղ, և պատրաստում էր հօր տունը քանդող բէզերից և էֆէնդիներից լրէժ լուծել։

Այդ միջոցին հեռաւից երևեցան երեք ձիաւոր հայեր, որոնք ուղարկի դիմեցին գիւղ քէնի սունը։ Միրզան դողում էր, նրա կեանքը մազից էր կախւած, բաւական էր, որ նրա տունը մէկը քննէր, այդ ժամին, բաւական էր, որ ջրազացում ազացողները լտէին մի որևէ ձիու ոտնաձայնը կամ խրխնջոցը։ Բարեբազդարար ջրազած եկողներից նչ ոք չէր հեռանում իւր ցորենի կամ ալիւրի պարկի մօտից, իսկ աղօրիքների բարձրացրած աղմուկը խլացնում էր նրանց, ուրիշ ձայն լսելու անկարող էին։

— Տօ տղա, Մելօ, գնա քէնենց տուն, տես այս ձիաւորներն ինչ կ'խօսեն, ասաց Միրզան որդուն և ու-

դարկեց լրտեսելու։ Մելօն սլացաւ։ Հինգ վայրկեան չանցած նա մտաւ քէնի օղէն, երբ դեռ նոր էին ձիուց ցած գալիս ճանապարհորդները։

— Բարի յաջողում, խէր է, բարի հրամեցէք, ասելով քէնէն վեր հրամցուց ձիաւորների առաջնորդին։

— Խէրն ու շարը Աստուած գիտէ, քէնա ջան, ով գիտէ, իրիկուն մի մեծ փորձանք է պատահել, մեր մի քանի տղերըն ընկել են, մէկ երկուսը զլխներն հազիւ են ազատել։

— Զիաւորները առաւոտ մեզ էլ իմացուցին, բայց տեղով չհասկացանք ինչ բան է։

— Մի ինչ որ աղաղակ, մեր Մատօն քէնէնց անցած տարւայ մշակը, մի նիհար, կարճ, քոռ, սատկած լակոտ փախել է ուռուսի հողից, ընկել է սարէ սար, գիւղէ գիւղ, չարած փչութիւնը չմնաց։

— Ախար մէկ ասա՞ ինչ է արել։

— Երեկ մեր տղերը տեսել են նրա տակը խնամուու Մատօն քէնի քէօհլանը, որը սրանից ութ տասն օր առաջ իւխից փախցրած է եղել. ընկել են ետևը, բերել նեղն են գցել Աաթար-դալայի մօտ։ Սնիծածը մի աչք ունի, բայց որ մթնումն էլ է տեսնում, մէկ մէկ վեց եօթ մարդ կոտորել թողել է, քէնի տղէն՝ Վարդգէսը, ընկել է։ Ողջ գեղը սուդ ու շիւան է ընկել, անիծում են ամենքը մեր քէնին, որ իրենց տղերանց մեռնելու պատճառ է դարձել։

— Ո՞վ է այդ զոչազը, թէ հողիդ սիրես։

— Մի լորւղ լակոտ, տեսնես, երեսը չես թքի. ձեռիդ վրան, բարձրացնես, հոգին կ'տայ։ Մի քաղցած խոզարածի մէկը։ Տօ, մարդս էլ մարդ լինի, տղամարդու շնորհը ունենայ, ցաւ չի գալ, եղիկ է անունը, բայց Գողեղիկ են կանչում։

— Հերիք չեր մինչև օրս եղած դաշտները, թարապեամաները, բրդերն ու բէզգաղները, այդ էլ աւելացաւ:

— Այդաէս սատկած մի դաշտ, այն էլ հայ... Ֆօ, թէ դա մի կատարեալ տղամարդ լինէր, աշխարհ պիտի քանդէր:

— Սխալ ես, խնամի Ասատուր, դու միշտ վախեցիր կորերից, կալերից, չոլախներից, կամբուրներից, քաշալներից... այդպիսի մարդիկ հտզար անդամ աւելի ճարպիկ են, քան քու սովորական տեսրով մարդիկը:

— Այս կողմերը, խնամի, այսօր եկող, կամ այդպիսի ձիաւորի տեսնող կամ ձիաներ բերող չէք իմացել:

— Ոչինչ, ոչ մի բան: Դու խօ գիտես, Քերսում մի ճնճղուկ էլ որ թռչի, խարարը իմ ականջին իսկոյն կ'հասնի: Ուղիղ է ես մեր տան կտորին եմ միշտ նստած լինում, բայց եօթը սարից այն կողմը քրդերի չափրներում ինչ էլ որ պատահի, խկոյն իմանում եմ:

— Սկի ճնճղուկ ունիմ, ինձ խարար է բերում: Ձեր գեղը այս խարարը չիմացած, ես արդէն ամեն բանից տեղեակ էի: Եգուց կամ մէկէլ օր ինձ տեղեկութիւն կ'բերէն, թէ մըտեղ են ձեր նժոյգները, եթէ ուռուսի մէջ չանցնին: Տղնը, հաց բերէք խնամիներուն:

Մինչ աղերքը պատրաստում էին սեղանը սալքելու, Մելօն լուրը տեղ հասցեց: Միրզան որ լսեց, երկիւղից շրթունքները ճաքեցան. նա գժուում էր մտածելով: Մելօն ուրախ էր, և նախանձում էր իրենց բարերար փոքրահասակ, կոյր ու վմիտ Եղիկի վրայ: Ողջ գիւղը նրա արկածներն էր խօսում, ամեն բերան նրան էր գովում. ամեն տեղ հետաքրքրում էին այդ հարցով, որ յանդզնել էր քուբդերին գնդակահար անել, կթան ոչխարները յափշտակել, հայերին բաժանել, կապւած ախոռներից բխոված քէօհաններ վախցնել, իւր անունով սարսափ գցել: Մե-

լօն իսօ դեռ չատ բան էլ էր լսել. նա գիտէր Եղիկի հովիւ ժամանակ պատահած արկածները, կրած զրկանքները:

ի.

—  Եղիկ ախպէր, ինձ էլ հետդ տանես, ես զգել եմ, էլ չեմ ուզում տանը նստել. ասաց Մէլօն իրիկւայ հացից յետոյ, երբ առանձնացած նստած էին: Եղիկն էլ նոյն պահուն մտածում էր իւր մենակութեան մասին և չէք իմանում ինչպէս ճար գտնելը: Մելօն խօպերը նրա մէջ նոր մտքեր ծնացրին, բայց նա կասկածում էր պատանու վրայ, որը գեռ տասն ութ տարեկան էր: Նա շարած մնաց. չէք իմանում ինչ պատասխանել:

— Մի վախենալ, Մելօն վախկոտ չէ, երեխայ չէ, այսպէս ապրելը չապրելուց աւելի վատ է ինձ համար:

Եղիկը խօրասուզւած, կարծես բոլորովին չսեց այս վերջին խօպերը, Մելօն աչքերը յառած նրա երեսին, պատասխանի էր սպասում:

— Այս սրտիս վրայ այնքան վէրքեր կան, այնքան խոցեր կան, որ երեք հարիւր տարի էլ գեղ անեն՝ չի բուժվի. միայն սարն ու թւանքը կ'հովացնեն, կ'հանգստացնեն: Տար ինձ քեզ հետ, յետոյ լաւ կ'ձանաչես Մելօնին: Այնքան լացով ու հառաջանքով ողջ գիշերներ քաղցած եմ անցկացրել, պատառուստած շորերով գիշերները բաց օղում, որա նրա մարաքում կամ հովանոցում այնքան զնդզնդացել եմ, այնքան ծխանձերից նմ իջել մի փար հացի համար, որ ամեն նեղութիւնների դիմանալու սովորել եմ. մարդու բեռ չիմ դառնալ, ոչ հարստանալու աչք ունիմ, ոչ էլ վաշա դառնալու եմ. մէկ այս բորբոքւած սրտիս կրակը մարեմ, նրանից յետոյ մեռնելը մեծ դարդ չէ:

Եղիկը ապուշ ապուշ նայում էր Մելօի երեսին և չէր կարողանում պատասխանել: ‘Նա լսածները և իւր ծրագիրը կազմելու հետ էր: Մելօն էլ լսեց և մոքովը զայրանում անդամ, որ Եղիկը իրեն արհամարտում էր, իրեն խակ տղի տեղ էր դնում: Բայց բարկութիւնից երկար չկարողացաւ գսայել ինքն իրան, առաջ վրդոված:

— Ինչի՞ չես պատասխանում, Եղիկ ախպէր, կասկածում ես ինձ վրայ:

— Ոչ կասկածում եմ, ոչ էլ մերժում քու խնդիրը, ուզում ես կարող ես գալ. դու ինձ բեռ չես դառնալ: Բայց թո՞յ ինձ, ես դեռ քիչ էլ մտածեմ:

Մելոն ուրախութիւնից գրկեց նրան, այնպէս սեղմեց կրծքին, որ կարծես իւր պաշտած սիրականը լինէր, որի կարօտը եօթը տարի քաշելիս լինէր։ Եղիկին թէկ Միրզան իւր վշտերը պատմել էր, բայց նա նկարագրել էր իւր տեսակէտով՝ փողերի, միւրերի, և այգեստանների կորուստն էր ողբացել, որոնցից իրենց զրկել էր մի անգութ զադի. բայց Մելօի խօսքերից երևում էր, որ գետքութ չադի. բայց Մելօի խօսքերից երևում էր, որ գետքատ նեղ օրեր էլ տեսած էին եղել, որոնք այնքան չէին վրդութել ոսկեպաշտ չարչուն։

— Ի՞նչ է գիտաւորութիւնդ, ի՞նչի ես այդքան ուղղում ինձ հետ գալ, ասաց Եղիկը քեզ յետոյ:

— Ես մի ժամ առաջ լսեցի քէհի օդայում, թէ ինչպէս էին խօսում քու քաջութիւնների մասին. ինչպէս էին ծաղրում այն սուստ քէգերին, որոնք ոչխարը թողել փախել էին քու առաջից: Իմացայ թէ դու ինչպէս վլէժդ լուծում ես թշնամիններից: Ինձ էլ այդ է հարկաւոր, ես էլ, մենք էլ ունենք թշնամիններ, մի օր, մի ժամ ֆըրսանդ ընկնէր ձեռքս, Զաւօք բէզին, Աբդուլլահ էֆէնդուն և Բէքիր աղայի արիւնները խմէի, նրանց տղերքն էլ մեր օրը քաղցած, մերկ, ուրիշների գուները գցէի, յետոյ մեռնէի:

Այդ մարդիկը ձեզ ի՞նչ են արել

— Հօրս, պապիս, հաւիս օճախները քանդել են, մեզ բոլոր կարդղութիւնից զրկել... թողել ենք մեր պապերու գերեզմաններ, մեր տներն ու մեր այգիք, եկել ընկել ենք Դարս, ողորմութիւն մոռալու, Գիշու հէլք...

— Οὐρῆι τελένει,

— Զասւելու, չխօսւելու շատ ու շատ բան, որոնք
քեզ ձանապալիին կասեմ։ Ողջ հայ, թուրք նախանձում
էին մեր ունեցածին, հօրս ապրանքների բարւանների մէկ
ծայրը Տրավիզոն էր, մէկէլը Թաւրիզ, մեր սուրբիներն
Հալէք ու Շամ էին. Նախիրներն Ղայսարի ու Անդիրի.
այդ բոլորը տարան, այդ բոլորի մասին երեկ էլ չեմ
մտածում, բայց երբ միտքս է գալիս մօրս գլուխն խաղ-
ցած խաղերն, ինձ տւած տանջանքները...

Եղիկը դառն մտածութիւնների մէջ ընկաւ. նա զգաց, որ Մէլօն էլ, եթէ ոչ իրեն չափ, ոգնէ իրեն նման տանջւած էր և անհաշտ իշխամի էլ էֆէնդիների, աղանձների, բէտերի, որոնք ժուռնաւորել էին չարչու ընտանիքի կեանքը:

ԱՌՈՅ — ԱՌՈՅ, մէկ Բիթլիզ ընկնէխնք, մէկ ես այդ անօս լէխններին ձեռքովս կտրատէի, նրանից յետոյ...:

— Լաւ, Մէջօ, մի վախենալ, քանի որ հաստատապես միտքդ դրել ես վրէժդդ լուծել, կ'հասնես նպատակիդ.

այդ մասին խօսելու դործը կ'իսանդարէ. գործողը գործը
կ'կատարէ, անելիքը չի խօսի. Ձիերը պատրաստ են, թամ-
քերը զարկ, գէնքերից լաւերը ջոկէ քեզ համար, կէս զի-
շերին ճանապարհ ընկնենք:

սիօծ յարացեմ ով նորախց ու նորմաժնու ով միջու
լուսն ով մատեռուսն խոնդակ նորմայու մայմառու
մազք նորմ յարառ ով մաշք մաշք մայմ են և մասու

ԱՅ.

Երեք օր յետոյ Եղիկն ու Մէլօն Երգումում ձի-
երը ծախսերոց յետոյ ճանապարհ ընկան Հա-
սան-դալայի վրայով դէպի Ալաշկերտ: Ուրախ գնում էր
Մէլօն: Նա ըզձալի ասպարիզի վրայ էր Կանգնած: զար-
դարւել էր Երգումում ձեռք բերած զէնքերով ու շրե-
րով և աղատ գաշտերում, ձորերում ու սարերի վրայ մըտ-
րակում էր ձին:

Եղիկը մտախոհ նրան հեռնեռում էր: Ձ՛չ մի բան նրա
աշխից չէր հեռացնում Ասլիին: գիշեր ցերեկ Անլիի մօտ էր:
Ո՞ւր տանէր Ապիին: Քիրսում նրան արդէն կարող էին
մասնել, Ծէօրագեալում նրան բոլոր ճանաչում էին: ո՞ւր
գնար, որ կարողանար երևակայած խաղաղ իեանքը գտնել:
Այս մտածմունքները ժամերով նրան տանջում էին և ա-
պահով կեանքի մի ապահով անկիւն նաև չէր գտնում աշ-
խարհում: ամեն տեղ երևակայում էր ճարատահարողներ,
կեղեցիներ և թշւառի վարձը կուլ տողներ:

Նա չէր կարող գողանալով ապրել, նա չէր ցանկալ
ուրիշի վաստակածը յափշտակել, նա գիտէր, թէ որքան
ցաւալի է աշխատաղի համար իւր ամեն մի կոպէկից զըրկ-
ւելը, նա գիտէր, թէ ինչ անտանելի վիշտ է դատողի հա-
մար տեսնել իւր դառն աշխատութեան ձեռք բերած բա-
րիքներով իրեն կողոպազի արած շոայլութիւնները, զե-
խութիւնները: Այդ կասկածները իւր կաշու վրայ էր փոր-
ձել և այդ վէքքերի ապիները սրտի վրայ թարախոտուում,
մաղձուուում էին: Քանալ հինգ տարեկան էր, բաննը հինգ
տարին էլ տանջանքով ու զրկանքով էր անցկացրել: եօթը
տարեկան հասակում վարձով ծառայութեան էր մտել,
տարեկան հասակում վարձով ծառայութեան էր մտել,
տասն և ութ տարի ուրիշի դրան էր ծառայել, տիրոջ իրեն

վարձողի դարդ էր քաշել ու միշտ զրկւել, անարգւել, հա-
ռաչել և ցանկացած վայելըների կարօտը քաշել:

Եղիկը մտածում էր՝ ինչպէս ապրել այնպիսի դրա-
ցիների հետ, որոնք գիշեր ցերեկ աչք ունեին մէկը միւսի
ստացւածքի վրայ, իրարու շողոքորդում էին, ոտքերը լի-
գում, օրական հազար անգամ երդուում իրենց անկեղծ
բարեկամութեան մասին: մէկը միւսի համար կեանքերը
զոհելու պատրաստականութիւն էին ցոյց տալիս, բայց
ամեն բովէ պատրաստում էին իրար գլուխ վշշելու, փո-
րը թափելու և արիւնը ծծելու, պատեհ առիթ ձեռք ձգե-
լուն պէս:

Դա, որ ոչ կարդ էր շողոքորդել, ոչ խաբել, ոչ էլ
զրկել, ինչպէս եօւա երթար այգախիսի դրացիների հետ:
Այս մտածութիւններից երբեմն երբեմն նրան սթափեց-
նում էին: Ելու գնդակները, որոնք որոտալով դրում էին
այս ու այն կողմը զանազան բոսեր:

Ո՞ւր էր գնում Եղիկը, ինքն էլ չգիտէր, միայն նրա
բոլոր մտածմունքները կենդրոնացած էր Ասլիով, որը
մագնիսի նման իրեն էր վաշում: Երգումից նրա համար
զարձեալ նոր նոր զարդեր ու շորեր էր առել: դրանք
մտածում էր մի կերպ տեղ հասցնել: Բայց չէր կարողա-
նում վճռել հեռացնելու Ասլիին հօր բնակարանից, որտեղ
խղճալին ալեկոծւած նաւի նման տատանւում, ծփում էր
ամեն ժամ ապառաժների բախւելու զարհուրելի երկրողով:

Երբ Ալաշկերտի գիւղն անցան, մտան Գէլձոր,
նրանք պատահեցան մի յիսուն ձիուց բաղկացած կարա-
ւանի, որը Տրապիզոնից ապրանք էր տեղափոխում Պարու-
կաստան: Ամենանեղ կիրճում նրանք դիմաւորեցին:

— Բարի յաջողում, ասաց Եղիկը, ձին առաջ քերով
դաթրջի բաշուն (կարաւանապետին):

— Աստծու բարին, պատասխանեց դաթրջի բաշխն,
ձեզ էլ բարի յաջողում:

Երր քսան բայլի չափ հեռացան, Մէլօն ասաց Նղե-
կին.

— Նա է.

— Ո՞վ է:

— Այն փուչ Օսման-Ղաւազը, որ միանալով Զավօ
բէզի, Բէքիր ալայի հետ մեր հարիւր բեռ ապրանքը
կուլ տւեց և սուտ վկաններով հաստատեց, որ իրեն
կողովահել են:

— Ի՞նչ անենք:

— Զոհի փոխարէն գոհ, կողովտենք ապրանքը:

— Գուցէ ապրանքը թշւառ և բարի մարդկանց է
պատկանում, որոնք յաւիտեան կ'տանջւին, եթէ կորցնեն
այս կարողութիւնը. Բայց գուցէ սխալում ես, լաւ տեսար:

— Միթէ քեզ չեմ ճանաչիր, եթէ սրանից տասը
տարի էլ անցնի. Կ'ուզես խօսեցնեմ, Մէլօն ետ դարձաւ,
մօտեցաւ դաթրջուն:

— Օսման-Ղաւազ, ասաց, այս ապրանքը մերը խօ չէ:

— Ես քեզ չեմ ճանաչում. ապրանքը Հիւսէին Ալի
խանին է, Իրան ենք գնում: Ո՞րտեղացի էք, ո՞վ էք
դուք, աղա:

— Որ չես ճանաչում, էլ ինչի՞ ասեմ, միթէ մեր ապ-
րանքը աւելի քիչ անգամ էք կրել, քան թէ Հիւսէին Ալի
խանինը, ասաց ձին մտըակելով:

— Ծանօթս գալիս էք, բայց չեմ յիշում պատաս-
խանեց դաթրջին, որի բառերը հաղիւ թէ լսեց Մէլօն:

— Եղիկ, ասաց մօտենալով Մէլօն, ապրանքը թաւ-
րիցի Հիւսէին Ալի խանին է եղել. Ճանաչմաւ ես այս
մարդուն:

— Լսել եմ. մի ժամանակ դաշտ-աւազակ է եղել

Գեանջա, Ղարաբաղ. Հարստացել, փախել է Թաւորիկ
թուջէր (վաճառական) ու խան է դարձել. Զիդ քչէ, գնանք
իւչքիսէի (ս. Յովհաննէս) վանքը անցնենք, բարձրանանք
Դիագինու ետեր ձորի մէջ ճանապարհները կտրենք:

Օսման-Ղաւազը զինւած ձիաւորները տեսնեիս
սկզբում թիչ կամկածեցաւ, բայց երբ նկատեց և իմացաւ
նրանց հայ և մանաւանդ վաճառական լինելը, աներկուղ
առաջ գնաց: Յետինքը անցել էր, երբ կարաւանը սկսեց
մտնել ձորը: Ղ.աթրջի բաշխն՝ Օսման-Ղաւազը պաշարով
բեռնասորւած ձիու վրայ նստած, հրացանը ուսին, չիրու-
խը ծիսելով առաջ էր վարում կարաւանը, երբ Մէլօն
գնդակը նրա գլուխը ցրւելով ձիուց վար գլութեց:

Գոռում-գոչում ընկաւ տասնի չափ սէխսներու
(ձիադարման) և ծառաներու մէջ. կարաւանը ակամայ
կանգնեց: Ծառաներից որը լաւ էր համարում ճանա-
պարհը շարունակելու, որը փախչելը և լուր տանել Դիա-
գին, որը միացած կուլ մղելը. Վերջապէս ծառաներից
մէկը քաջութիւն ունեցաւ տիրոջ ձին նստել և ետ քշել
Դիագին, օգնութեան կանչելու յոյսով: Մէլօն ժայռի
ետեր մի երկրորդ գնդակով գլութեց այդ արիստիրոտ ծա-
ռային էլ: Ծառաները բողորովին թուլացան, երբ իրենց
ընկերն էլ գլութեց:

— Որքան գէնք որ ունիք, բերէք թափեցէք ջուրը,
գոռաց Նղեկը, եթէ չէք ցանկանում բոլորդ էլ կոտորւել:
Խակոյն գէնքերը ածեցին վտակը:

— Կարաւանի գլուխը դարձրէք գէպի Սարիբէգ,
հրամայեց Նղեկը երկու ծառաների. խալ մնացեալներին
մտցրեց վտակը և ջուրը լքցրած գէնքերը դուրս հանելով
դրեց բեռների վրայ: Յետոյ մացրեց նրանց ապաւաժի
մէջ մի այր, բոլորի ձեռքերը կապկացին, թողին և

— Աստծու բարին, պատասխանեց դաթրջի բաշին,
ձեզ էլ բարի յաջողում:

Երբ քսան բայլի չափ հեռացան, Մէլօն ասաց Նղե-
կին.

— Նա է.

— Ո՞վ է:

— Այն փուչ Օսման-Ղաւազը, որ միանալով Զափօ
բէգի, Բէքի աղայի հետ մեր հարիւր բեռ ապրանքը
կուլ տւեց և սուտ վկաներով հաստատեց, որ իրեն
կողոպատէլ են:

— Ի՞նչ անենք:

— Զոհի փոխարէն դոհ, կողոպատէնք ապրանքը:

— Գուցէ ապրանքը թշւառ և բարի մարդկանց է
սպատկանում, որոնք յաւիտեան կ'տանջւին, եթէ կորցնեն
այս կարողութիւնը, Բայց գուցէ սխալում ես, լաւ տեսամբ:

— Միթէ քեզ չեմ ճանաչիլ, եթէ սրանից տասը
տարի էլ անցնի. կ'ուզես խօսեցնեմ, Մէլօն ետ դարձաւ,
մօտեցաւ դաթրջուն:

— Օսման-Ղաւազ, ասաց, այս ապրանքը մերը իո չէ:

— Ես քեզ չեմ ճանաչում, ապրանքը Հիւսէին Ալի
խանինն է, Իրան ենք գնում: Ո՞րտեղացի էք, ո՞վ էք
դուք, աղմա:

— Որ չեմ ճանաչում, էլ ինչի ասեմ, միթէ մեր ապ-
րանքը աւելի քիչ անգամ էք կրկը քան թէ Հիւսէին Ալի
խանինը, ասաց ձին մորակելով:

— Ծանօթս դալիս էք, Բայց չեմ լիշտմ պատաս-
խանեց դաթրջին, որի բառերը հազիւ թէ լսեց Մէլօն:

— Եղիկ, ասաց մօտենալով Մէլօն, ապրանքը թաւ-
րիզցի Հիւսէին Ալի խանինն է եղիկ: Ճանաչում ես այս
մարդուն:

— Կսել եմ. մի ժամանակ դաշաղ-աւաղակ է եղիկ

Գեանջա, Ղարաբաղ. հարստացել, փախել է Թաւրիկ
թուջէր (վաճառական) ու խան է դարձել: Զիդ քչէ, գնանք
իւզբիլիսէի (ս. Յովհաննէս) վանքը անցնենք, բարձրանանք
Դիագինու ետեւը ձորի մէջ ճանապարհները կտրենք:

Օսման-Ղաւազը զինւած ձիաւորները տեսնելիս
սկզբում քիչ կասկածեցաւ, բայց երբ նկատեց և իմացաւ
նրանց հայ և մանաւանդ վաճառական լինելը, աներիլուզ
առաջ գնաց: Յետինքը անցել էր, երբ կարաւանը սկսեց
մտնել ձորը: Ղաթրջի բաշին՝ Օսման-Ղաւազը պաշարով
բեռնաւորւած ձիու վրայ նստած, հրացանը ուսին, չիբու-
խը ծխելով առաջ էր վարում կարաւանը, երբ Մէլօն
գնդակը նրա գլուխը ցրելով ձիուց վար գլուխց:

Գոռում-գոչում ընկաւ տասնի չափ սէխսներու
(ձիագարման) և ծառաներու մէջ. կարաւանը ակամայ
կանգնեց: Ծառաներից որը լաւ էր համարում ճանա-
պարհը շարունակելու, որը փախչելը և լուր տանել Դիա-
գին, որը միացած կրիւ մղելը. վերջապէս ծառաներից
մէկը քաջութիւն ունեցաւ տիրոջ ձին նստել և ետ քչէլ
Դիագին, օգնութիւն կանչելու յոյսով: Մէլօն ժայռի
ետեից մի երկրորդ գնդակով գլուխց այդ արիստիրոտ ծա-
ռային էր: Ծառաները բոլորովին թուլացան, երբ իրենց
ընկերն էլ գլորւց:

— Որքան գէնք որ ունիք, բէրէք թափեցէք ջուրը,
գոռաց Եղիկը, եթէ չէք ցանկանում բոլորդ էլ կոտորւել,
իսկոյն գէնքերը ածեցին վտակը:

— Կարաւանի գլուխը դարձրէք դէպի Սարիբէգ,
հրամայեց Եղիկը Երկու ծառաների: իսկ մնացեալներին
մացրեց վտակը և ջուրը լքցրած գէնքերը դուրս հանելով
դրեց բեռների վրայ: Յետոյ մացրեց նրանց ապառաժի
մէջ մի այր, բոլորի ձեռքերը կապկացին, թողին և

այրի բերանը մեծ քարով ծածկելուց յետոյ դնացին, մէջ
գիշերին մոտան Սարիբէզ:

Այդաւել Եղիկի մի ծանօթ ընկերը, որ դաշաղի էր,
(կանտրաբանտիսա) մեծ ուրախութեամբ ընդունեց նրանց,
ձիերը և ապրանքը ասպահով տեղ տեղառորելուց յետոյ,
խոստացաւ նրանց օգնել գիւղի մի բանի ուրիշ երիտա-
սարդների միջոցով ապրանքը անցկացնել ուռափ հողը:

Ի՞Բ.

Ինչ ասել կ'ուզէ, որ Եղիկը իշխանավայել առ-
ատութեամբ վարձատրեց ոչ միայն իրեն օգ-
նող, ապրանքը ուռասաց ուհամանը անցկացնող երիտասարդ-
ներին, այլ գիւղի բոլոր աղքատ, թշւառ և կարօտ դասա-
կարգը անխնայ լիացաւ աւարի առատութիւնով Խգդիրում
կարգը անխնայ լիացաւ աւարի առատութիւնով Խգդիրում
տոյ մի մասը երկու ձիարեռն ընտիր կտորները բարձած
Եղիկը երեք ընկերներով գիմեց դէպի Գեօկայ. Եղիկը
սովորած էր մեծամեծների գուներում ծառայելիս կաշա-
ռելու ձեւերը. Նա միահամեստ յարկի տակ իջևանելուց յե-
տոյ, ապրանքից մի խալաթացու ընտիր կերպաները
Հին-Բայազէզի աղաներին փեշընաշ տարաւ և միջոցները
ձեռք առաւ ոչ միայն նրանց հայեացքին հաճոյանալու,
այլ մինչև անդամ նրանց շրթունքները քաղցրացնելով
իրեն գործիք և զէնք շնեց:

— Այ տղայ, գու ոբաւեղից ես, հարցրեց այդ հին
հաջի աղաներից մինը, որն իրեն ամիրաների, մելքների
ժամանակ էր համարում և արդէն ազնւականների մա-
ժամանակ էր արձանագրել տեկ իւր տոհմանունը, հին
հայաստանի իշխանական անուններից մինը Հայոց պատ-
մութիւնից գողանալով:

— Փեղ ծառայ, ասաց Եղիկը, Հին-Բայազէզից,
Մլույենց Սգօփ տղան հմ:

— Հան, զիտեմ որ այս թայ մարդ չես, չէնք,
չնորհք, մարդավարութիւն համկացող էլ ո՞րտեղից, եթէ
ոչ Բայազէզից: Ե՛հ, ինչ կայ, ինչ չկայ մեր Բայազէզում,
յաջող էք, լաւ էք:

— Լաւ, փառք Աստծու, ամմա անօրէն քրգերից
ապատեկիք չունենք: Տուն էլ լաւ էք, տեղս էլ, գործս
էլ, բայց ինչ օգուտ, Ծէլս Սլոփ հետ թշնամացայ, քանդեց,
աւերեց, թէ չփախչէի՝ տնով տեղով ինձ կործանելու էք:

— Աստւած անիծէ այդ անօրէններին, լաւ ես արել.
Ես քեզ այստեղ կամերալ գըել կըսամ, եղիք մեղի ժո-
ղովուրդ, պլծիք, ետոյ, թէ կնուզես, էլի գնա Բայազէդ,
առուտուրդ արա, բայց երբ պասպորտ ունենաս, քու շա-
քիդ չեն կարող մօտենալ:

— Իմ էլ խնդիրքս այդ է, հաջի տղա:

— Լաւ, լաւ, այդ հեշտ է, անունդ ինչ է:

— Պազար, քեզ ծտուայ:

— Պազար ջան, այսօր ես պիտի մոլովի քոլ եր-
թամ, գու միամիտ եղիք, քեզ պատեմ:

— Սեպէ թէ, հաջի աղա, ինձ եսիրութիւնից ես
զնում աղատում:

— Դու մի վախենալ, ինչ որ պէտք է, աղան իսօ
մոռած չէ, իրեն ժողովրդին ինչի պիտի թողնի տանջւի:
Հա, ամիր ապրանք ես բերել ծախելու:

— Հրամերես, աղա, քիչ բան, մի չորս հակ Փրանկի
ապրանք:

— Դու միտք ունիս այստեղ խանութ բանալ, թէ..

— Ո՛չ, իմ ինչ բանս է, աղա ջան, այստեղ ձեղ պէտ
աղաների առաջ ոտք ձգել... այնպէս բոլորը միասին միտք
ունիմ թողնել մի տեղ ծախելու:

— Խաւ է, ևս մեր Բաղդօին կ'ասեմ, թող գին
դնեն, վերցնեն:

— Աման, աղա ջան, մարդ չիմանայ, մաքսից փախց-
րած եմ, գլխիս փորձանք չըերեն, ասաց Եղիկը տւելի
հրապուրելու համար աղային:

— Զայնդ կարի՛ր, չարն ու բարին ևս նո՞ր եմ սովո-
րելու: Դու քու բանիդ գնա, դու էլ իմս ես, ապրանքդ
էլ... Ես խօ քու երկու զրուշ-հարիւր փարայիդ վնաս կը
թողնեմ հասցնեն: Ամբողջ կայքս կըկրցնեմ, չում թողնի,
որ իմ շւաբռումս թառող թուչնի մի ֆետուրը թափի:
Գնա, գնան բանիդ և հանգիստ կաց:

Քիչ յետոյ Եղիկը Բաղդասար աղայի և ետ գնաց
Հաջի աղայի խանութը, որտեղ կամաց կամաց ցուցակ
կազմեցին, և երկու հազար մանէթից աւելի արժէք ունե-
ցող ապրանքը ճինգ հարիւր մանէթով տւեց: Հաջի աղան
այնքան բարի եղաւ, որ երկու հարիւր մանէթը կանիդկ
վճարեց, իսկ երեք հարիւր մանէթի էլ վեց ամիս ժամա-
նակաւ որոշեցին: Բայց սրա փոխարէն Եղիկը Գեօգչեցի
գրեց և դրանից յետոյ ամեն տեղ սկսան նրան Գեօլչեցի
Ա.աղար կանչել:

Երբ այդ բոլորը կարգի դրեց, Եղիկը մնացեալ ապ-
րանքներից մի մասն էլ Իգդիրից Երևան փոխադրեց, ծա-
խեց, և մի հազար ըուրիկ կանչիկ փող ձեւք ձգելով, Մէլօի հետ Երևանից քշեցին ձիերը, Ապարաններով երկու
օրում հասան Ա.արաքիլսա:

Մինչ այդ՝ Եղօն կարաւանից կեր առած աւարի մի
քառորդն անգամ չէր բաժանել, այն ինչ դրանով հարիւր
մարդու բաղդաւորիւ էր, մի քանի վաճառականների մեծ
մեծ պատառներ էր նւիրել, համարեա գիտութեամբ և
գրպանում բացի հազար ըուրլուց մի երկու երեք հարիւր
ըուրլու ոսկի, գոհար, մարդարիտ անէր, որը նշանածին

Ասլիին էր տանում, բայցի հագուստի համար զեր առած
աթլասն ու խասր, ընտիր ոսկէթել դիալակները: Խրկու
նժոյգ էին նստած Եղիկն ու Մէլօն, երկուսն էլ լաւ
զինւած թարաքեամի կարդ ու սարգով, զէնքով ու զրահով:

Գիշեր էր երբ նրանք հասան Ա.արաքիլսա: Ճիերից
իջան խրամատում, և Մէլօն ձիերի հետ այստեղ մնաց,
իսկ Եղօն վաղեց դէսպի Գալօ քէնենց տան կողմը: Մո՛թ
գիշեր էր, աշնանային: ցուրտը թէկ զգալի էր, բայց
Եղօն ներսից այրում էր, ցուրտը նրան երբ կ'ապդէր:
Մօտեցաւ սովորական կտուրին, վերցրեց տախտակը և
սողալով վար իջան: Բայց սիրեկանին՝ Ասլիին չդտաւ այն-
տեղ, ոչ էլ անկողին: կար այնաեղ տարածւած: Եղիկը
մնաց շարած: Նա լսել էր, որ նշանել էին Ասլիին դնդրոց
կած Մուռէի վրայ, բայց հարսանիքը պիտի բարեկենդա-
նին անէին: Կօթը շաբաթները չմտած աղջիկը խօ չէին
տանիլ: Մօտեցաւ դրանը, որ մտնի տուն (խոնանոց),
բայց դուռը դրամից կողապած էր:

Նախորդ դէպքից յետոյ, Թումասը՝ Ասլիի եղայրը
այլ ևս չէր թողնում, որ Ասլիին քիլարում քնի և քիլարի
զրանը պինդ ախ էր զարկել տւել ապահովութեան համար:
Եղիկը գիտէր, որ չէր կարելի որեւէ աղմուկ բարձրացնել,
հակառակ դէպքում տնեցիք կըզարթնէին և նա ոչ միայն
չէր կարող Ասլիին փախցնել, այլ նրան տեսնելու էլ չէր
արժանանալ: Նա տան ամեն ծակը-ճիւղը ճանաչում էր,
իրենց տան նման: Իսկոյն դուրս եկաւ և իջաւ մեծ ախո-
ռը, որտեղից ուղեւեցաւ Գալօ քէնի ննջարանը, համոզւած
լինելով, որ ծնողները իրենց աղջկան իրենց սենեակից
գուրս չէին թողնիլ: Նրա ենթալրութիւնը սիսալ չէր:
Ասլիին այն սենեակումն էր: Գուռը սովորաբար բաց էր,
բայց ծերուկն ու պառաւը արդէն վաղուց իրենց հանգիստ
քունը կորցրած էին: Եղիկը պատից իջնելը և բարձրա-

յրած աղմուկը լսեցին, բայց կարծելով, որ մատակ գոմէշ-ները իրենց եղջիւրները խփեցին պատերին, տեղերից անդամ չարժւեցան, Եղիկը թաթերի վրայ առաջ գնաց, սողալով ներս մտաւ, մթնումը միակ աչք չուց և ոտքով շփելով Ասլի անկողինը գտաւ: Եղիկը գիտէր, որ ծերուկն ու պառաւը իրենց սովորական տեղը ցմահ չէին փոխիլ, ուրեմն չնշառութեան հետելով, իւր շունչը խեղիելով հասաւ Ասլի մօտ:

Խեղձ կոյր բնած էր, գուցէ երազում էր: Յոյսը կտրած, արդէն իրեն գերեզմանի ճանապարհին մօտեցած էր զգում կրյուկորնի սիրուհին: Մոլորւկ էր Եղիկը. մի սովորականից բարձր աղմուկ, պառաւները կարող էին խալոյն սիրափւել, իսկ այդպիսի տարտամ դրութիւնն անտանելի էր: Ալեորի հանգստութիւնը կարծես կտրւած էր. նա անդադար հազում էր, իսկ իւրաքանչիւր հազի ձայնը չնշասպառ էր անում Եղիկին: Պառաւը խոկում էր, խորմ փում, նրանից շատ երկիւղ չկար: Քիչ խաղաղելուց յետոյ Եղիկը կամաց շրթունքները մօտեցրեց և մի համբոր դըոշմից ևսլիի ճակատին: Անմող հրեշտակ, բոլորուին չիմացաւ էլ: Գուցէ երազեց, և երազում երջանկութիւնը գոնէ վայելելու տենչով չէր ցանկանում սիրափւել: Խրախուսւած սիրահարը աներիւղ երկորդ համբորը դրոշմեց, կարուն առանելու և փափագն յադեցնելու տենչով: Բայց խեղձ աղջիկն ամբողջ օրը այնքան էր հոգս քաշել, այնքան էր չարչարւել և այնքան սղացել իւր վիճակը, որ բոլորուին չդդաց:

Դողդողալով կամաց կուրքը հրեց և ձեռքը կուրծքին դրեց. բայց զոր, տարբերութիւն չարաւ. նա անվրով շարունակում էր իւր բունը, իւր հանգստութիւնը: Քիչ մտածելուց յետոյ Եղիկը իւր դաշոյնի արծաթեայ սառը պատեանը դրեց Ասլի կըծքի վրայ, որը սրսփալով վեր

թռաւ և—վայ օձ, վայ օձ կայ—գոռազբուաց: Եղիկը մինչեւ նրա ականջում—մի վախինալ, ևս եմ—փսըբտալը, ծերուկ Գալօ քէհան անկողնից վեր կենալով ասաց.

— Այ կնիկ, քուքուրդն մւր ես գըել, այ կնիկ: — Մարդու չես թողնի դադարի, ասաց պառաւը տրտնջալով. էլի չիբուխիդ համար քունս կտրեցիր:

— Կնիկ, քուքուրդը, ձայնդ կտըիր, աղջիկը գոռումէ, օձ կայ, ինչ կայ, դու բուքուրդի տեղն ասա:

— Օջախի թարաքի վրայ է, ձեռքը երկարացրու, վեր առ:

Մինչ այդ Եղիկը դուրս թռաւ ախոռը և անմիջապէս, երբ Գալօ քէհան լուցկին խփեց ու վառեց, նա պէս, բարձրացաւ կտուրը մրմնջալով.—մրտեղից այդ գիւտը բարձրացաւ կտուրը մրմնջալով.—մրտեղից այդ գիւտը բարձրացաւ կտուրը մրմնջալով, որ խալոյն լուսաւում է և չի թոյլ տախիս մարդկանց մթնումը իրենց գործերը տեսնելու:

Ասլին շատ ցաւեց, բայց արդէն ուշ էր. հայրը ճրագը վառելուց յետոյ ասաց.

— Ի՞նչ կայ աղջիկս, ինչ կայ Ասլի ջան:

— Բան չկայ, տացու, բան չկայ, կակապեց դողդողալով Ասլին. բայց դէմքն արդէն ցոյց էր տալիս, որ տարօրինակ դէսպէ էր պատահել:

— Ի՞նչ օձ էիր գոռում, ինչ էիր ասում:

— Բան չկայ, երազումն էր, տացու, վախեցայ և զալթեցի:

Բայց ծերուկը չհանգստացաւ, նա ճրագը ձեռքը դուրս եկաւ ախոռը, բակը, հիւրանոցը, ամեն կողմը քննեց, երբ ոչինչ չնկատեց, սկսեց աւելի ուշադրութեամբ կտուրի լուսամուտները քննել: Եղիկը շտապել էր ախոռի կտուրի լուսամուտի տախտակը ծուռն էր դըել: և աղջիկ կտուրի լուսամուտի տախտակը ծուռն էր դըել: գագալով քէհան խալոյն հասկացաւ՝ բանն ինչումն է, ու գագալով քէհան խալոյն հասկացաւ՝ բանն ինչումն է, ու գա-

— Ասիր, այն շան կաթ ծծածը խօ չէր:

— Ի՞նչ ես ասում, տացու:

— Եղիկը խօ չէր քեզ զարթեցնողը. ասաց Ասլիկն մօտենալով և երբ նկատեց Եղիկի թողած կապոցով գոռարն ու ապրանքը, կանչեց—աղա Թումաս, Բարսեղ, տօնելէք, տօն բարձրացէք, տօն արուռներս տարաւ այս նիւսիւրաթր, տօն հասէք է: Եղմուկը գցեց ծերուկը և մի բանի վայրկեան յետոյ ողջ գլուզը զարթնեց: Ընկան Եղիկի ետե, որը ձիով, որը հետի, չներն ակսեցին հալածել, բայց Եղիկը Մէլօի հետ նստան ձիերն ու դիմեցին դէպի Մօլու-Մուսա, լոյսը չբացւած անցան Զովին և կէս օրին մտան Քէրս, Միրզի ջրադացը և հանգատացան:

Ի՞՞.

Հետեւեալ առաւօտ վաղ ձիեր նստան Եղիկն ու Մէլօն, և ճանապահն ընկան: Մութնուլոյաը դեռ չէր զանազանում: Մէլօն հետեւում էր Եղիկին, բայց թէ առաջնորդի միտքը ո՞ր կողմն էր, նրան յայտնի չէր:

— Գիտնս, Եղիկ աղքեր, Ի՞նչ կայ, ասաց Մէլօն.

— Ի՞նչ, ասաց մտախոհ Եղիկը:

— Իմ ձիս չի քայլում, բռուկդ էլ մի բանի նման չէ. մեզ լաւ խարեցին անօրէնները: Բեռկիրը քէօնանի տեղ տիխն մեզ: Ես այն ժամանակ զգացի, բայց միջամտելն ինձ չէր վերաբերում:

— Դու գիտես ես չճանաչեցի. խօսելու ժամանակ չկար: Ի՞նչ ես վախենում, կարծես այսօր լաւ ձիաներ ձեռք չերենք: Դու առաջ գնա:

Մի ժամանակ երկու ձիաւորներն էլ լուռ առաջ էին գնում, երկուսն էլ մտախոհ, ծրագիրներ էին պատրաստում: Արշալոյսին նրանք անցան Ետալուման, բարձրա-

ցան Հաջի-վէլի սարահարթը, երբ նոր արեգակը ճառագայթները հօրիզոնից սկսեց արձակել:

Երկուսն էլ մտախուն: Կօրդա ձիերը տակները, քշում էին արագ արագ, Եղիկը երկար բարակ դիտելուց յետոյ, հեռուն, սարի ստորոտում արածող ջոկը, ասաց:

— Մէլօ, քանի մարդ ես նկատում իլսիի քով:

— Ո՞ր ելսիի, ասաց Մէլօն աշքերը չորս կողմ յածելով:

— Այս սարի տակը, ասաց մասով նշան տալով Եղիկը:

— Է՞յ, այն Մէլէդ բէզի իլսին է, կաշի կը բէրթէ, յետոյ Շէօրազեալի տէրը: Զգոյշ պէտք է լինել, այդպիսի կծանների պոչը կոխելու չէ:

— Երեխայ ես, դեռ չգիտեմ թէ իմ նպատակս ինչ է, ես ինչ մտքի եմ ծառայում: Քչէ, քչէ գնանք:

Զոկին չմօտեցած Եղիկը հրացանը լքցրեց և ուղղեց ջոկի պահապաններից մէկի վրայ, որն իսկոյն ընկաւ: Երկրորդ պահապանը ընկերոջ վրէժը լուծելու և կերանքը փըրկելու յոյսով անցաւ մի քարի ետե և գնդակն ուղղեց Եղիկի վրայ, բայց զնդակը նրա կողքով անցաւ: Մէլօն նկատած լինելով ջոկի պահապանի քարի ետե պահելը, հրացանը պատրաստեց և երբ լերջինս լքցնում էր կրկին անդամ գարդկելու, արձակեց, որի զնդակը ցրեց պահապանի ուղեղը: Մնացած երկու պահապանները այդ նկատելով խոյս տւին և պահեցին: Իսկ Եղիկը յարձակեց նրանց վրայ և մէկի ականջները կտրելով՝ ասաց,

— Գնա, Մէլէդ բէզիդ ասա, որ Քոռ-Եղիկը նրա իլսիից երկու բէօնանի պէտք ունենալով, եկաւ ջոկեց և տարաւ վոլսարէնը երկու ձի թողնելով:

Իսկոյն երկու ընտիր նժոյգներ ջոկեցին և իրենց ձիերի սարքը նրանց վրայ դնելով հեծան, ճանապահն ըն-

կան դէպի Զրպի, որտեղից ջուրը զարկելով անցան ռուսաց սահմանը արել մայր մտնելուց քիչ յետոյ: Զիերն ընտիր էին և օրւայ մեծագոյն մասը՝ Աշավանքի ձորում արածել էին, այնպէս որ Եղիկը որոշեց այդ իրիկուն և Տարձակւել Գալօ քէհի վրայ և Ասլիկն փախցնել:

— Անխոհեմ է, ասաց Մէլօն, մտերմութիւնդ—երկու դիշեր առաջ դուրս եկանք մենք՝ Ղարաքիլիսից անպատճութեամբ, ուզում ես կրկին անպատճելու գնանք:

— Առաւօտն էլ եթէ քու խօսքով գնայի, Մէդէդ բէզի իլիսից ձի չէնք դուրս բերելու. բայց տեսամբ ինչ քէօհաններ ձեռք բերինք:

— Բերելը բերինք և ես վատահ էի բերելու մասին, միայն հետևանքը վատ է. այժմ Մէդէդ բէզը կատաղեց քեզ վրայ. եթէ մի օր ճանկն ընկնես, խեղդել կը տայ:

— Թէ կընկնեմ, թ՞ո՞ խեղդել տայ, ասաց Եղիկը ձին մտրակերով. գնանք:

Նրանք ուղղեցին Ղարաքիլիսա. և մէջ գիշերին հասան գիւղի սահմանը: Մէլօի սրտովը չէր, բայց Եղիկի կամքից դուրս գալ երբէք չէր էլ ցանկալ. Հասան աւելի մօտ և երբ ուզում էին դէպի խրամատը ծռւել, մի քանի տեղից չերեն սկսեցին հաջել:

— Հաւաք, հասան, օգնեցէք, Եղիկը վրայ տւեց, հասէք, եաման հասէք, տղայ հասէք, քառասոն տեղից ձայն դուրս եկաւ. Գիւղացիք գիշերւայ պահապաններ էին դրել Եղիկի ահից, և նրանք իսկոյն ողջ գիւղը ոտքի հանցին:

Երկու հոգով գիւղի վրայ տալ և հարիւրից աւել զինւած պատրաստած մարդկանց դէմ դնելը խելքի բան չէր. նրանց ճանկից փախչել ազատելն էլ մեծ չնորհք էր: Մութ գիշերը նապատեց, և Եղիկը այնպէս վարժւել էր խրամատի անցքերի հետ, որտեղ ինչ քար մինելը գիտէր

և դրա համաձայն առաջ էր վարում ձին, իսկ նժոյգները իրենց յատուկ ընդունակութեամբ այնպէս սահեցան, թռան, անցան, որ ոչ մի ձիաւոր նրանց առաջը կտրել չկարողացաւ: Մթնումը մի քանի գնդակներ արձակեցին Ղարաքիլիսեցիք, բայց ապարդիւն, միայն աղաղակը սատկացրին այդ գնդակները և ստիպեցին շուտով հեռանալ Եղիկին: Երբ արդէն հանդը դուրս եկան, Եղիկը շուռ եկաւ և մի գնդակ աղղոց գիւղացիներին, յուսալով, որ դրանով հրաւիրէ գիւղացոց իրեն հետեւելու, բայց նրա ցանկացածը չեղաւ. գիւղացիք չեմքից դուրս չեկան: Երդէն նրա ցնդակի գիշերը գործած հրաշքների մասին առասպեկներ էին պատմում Եփրակի բոլոր գիւղերում:

Զուր ըիչ դէս ու դէն տատանելուց յետոյ Եղիկը գէպարանները ուղղեց իւր ձիու զլուխը: Արեածագին նրանք հասան Բաշ-Արարան և ուղւեցին դէպի Աշտարակ ու Իգիւր: Արդէն ունեցած - չունեցածը ցըւել էր Եղիկը, որը Միրզին էր տւել առեստուր կարգի բերելու համար, որն էլ պատահած թշւառին: Իգիւրում դարձեալ մի չորս բեռն մահուդ և ընտիր ապրանքներից բեռնաւորեց ու ճանապարհ ընկաւ դէպի Գեօգչայ: Այնտեղ այս անգամ մի տուն ևս գնեց, քիչ կարգի սալքի գնելուց յետոյ ապրանքների ծախսից ստացած գումարները քիչ քիչ հաւաքելով պատրաստում էր մի ուժեղ յարձակմունքով առնել ու փախցնել Ասլիին:

Բայց կրակն առել ու բորբոքում էր Գալօ քէհին ու մղդսի Կիւրեղին: Նրանք շւարել մնացել էին այս անմղդսի ղաշաղի ձեռքին: Գիտէին, համոզւած էին, որ Ասլիի զուսպ ղաշաղի իրենց հանգիստ չէր թողնելու Եղիկը և անպատճառով մնած մնած վտանգների էին ենթարկւելու: Գայօն պատճառ մնած մնած վտանգների էին իսպարկւելու: Գայօն պղջացել էր, որ աղջկայ կամքի հակառակ, կնոջ խօսքը կղջացել էր, որ աղջկայ կամքի հակառակ, կնոջ խօսքը կոտրելով, որդու Թումասին հետևելով մնած վտրձանքի մէջ

Էր զցել իր օջախը, բայց արդէն ուշ էր... աէքտէլը նշանն աշխարհի առաջ օրհնելուց յետոյ ի՞նչպէս կարելի էր գեղի մէջ, դաշտի մէջ խաղը ու խայտառակ լինել, տած էր ու պրծած... թող այս աղջկն էլ զոհ գնար հօր անունի և նամուսի համար: Բայց այնքան աղջկայ համար չէր մոտածում, որքան խորհում էր տան զլմին դալիք որմէ փորձանքի համար: Եղիկն ու նրա կոյր գնդակը, յանկարծ կարող էր Գալօ քէչի տան սիւներից մէկն ու մէկն վորել, սարի նման կարիչ որդիներից մէկը կարող էր նրա անգութ վրէժին զոհ դառնալ և յաւիտեան իրեն սգի, հարաներին, թուներին ողբի և թշւառութեան մատնել:

Մղոսի Կիւրեղն էլ պակաս չէր տանջւում, նա համուեց, որ Ասլին իրեն տուն հարս չի դառնալ, դեռ ո՛վ գիտէ, գուլպի քանդուցքի նման իւր այնքան տարւայ աշխատած կարողութիւնը ետ պիտի քանդէ: Նա էլ մտածում էր, որ սիսալ էր այդ իրեն արած քայլը, օձի պոչը կոխելու չէր, բայց բանը բանից անց էր կացել, արդէն Եղիկն սրտից էր խոցել, այժմ պէտք էր պաշտպանութեան մասին մտածել: Գիւղի ջահիները շատ ուրախ էին Եղիկի արարքի մասին, ոչ ոքի սրտովը չէր, որ Ասլին նման մարալ աղջկը դնողը կած Մուքէի բաժին դառնայ և ամենքի աշըը նրա վրայ էր, իսկ Եղիկի նման ողջաղին շատ չին տեսնում:

Բայց ոչ ոք չէր հետաքրքրուում, թէ Ասլին սրտում ի՞նչ էր կատարուում: Խեղճ աղջկը վայ էր կարդում իւր գլխին, որ երկու անգամ իրեն քնածութեան պատճառով խանդարել էր Եղիկի ձեռնարկութիւնը: Դրանից յետոյ էլ զգաստ էր, ցաւը, մտածութիւնը նրան ստիպել էին, որ աշքը հաւաքէ: Վիշտը կորցը էր նրա քունը, նա գիշելու ընթացաւալի աշքերով լուսացնում էր, հալւելով,

մաշւելով, բայց ուշ էր—տունը, տեղը, ամեն կողմը ամրացրել էին, պահապան չներով դուռ ու երդիկ ապահովել: իրենք էլ տնով-տեղով աչք ու ականջ էին դաշնել, որ սե երես չմնան դուռ-դրկցի առաջ: Եւ այս բոլորի մասին տեղեկութիւն հասցեր էին Եղիկին, այնպէս որ այլ ես այդպիսի յարձակումից օգուտ չինելը նա հասկացել էր:

Ասլին սէրը օրից օր բորբոքւել էր, օրից օր նրա առաջ աւելի հզօրացել էր իւր սիրեկանը և բարձրացել: Եղիկի արարքների պատմութիւնը գիւղից գիւղ, գտառից գաւառ ամեն տեղ տարածւել էր. ամեն ախոսի օդայում, ամեն եկեղեցու բակում ու ամեն կալի մէջ, որտեղ որ գիւղացիք հաւաքէին, քաղաքացիք բոլորւէին, Եղիկի արարքները մէջ տեղ կ'գար: Սրախօնները, շաղակրատները ամեն մինը մի մի յաւելածով և զարդարանքով կ'սկսէր պատմել:

— Աղա ջան, անցած օր անիրաւը մտել է Մէկէդ բէզի իլսիի մէջ, տառմ էր Գիւմրի զայֆախանում աղաներից մէկը,—արան կըհաւանես, թէ նրան, մէկ ժամ ջոկով ջոկովէլ, հինգ—տասն քէծնան է դուրս բերել, որ ամեն մէկի գինը երկու-երեք հարիւր մանէթ, ախսէրն ախսօրը չի տալ: Ութ—տասը մարդ զարկել, կոտորել, անցել է:

— Տօ, մարդն էլ մարդ լինի, մի աչք ունի էն էլ թքնես կըբոռանայ, վրան հալ չլայ, միկս գետին կ'ընկնի, բռնած գործերը... արմանք ու զարմանք է աշխարհի բաները:

ԻՊ.

Դնում էին երկու ձիաւորներ՝ Եղիկն ու Մէկօն Աշտարակից դէպի Օշական. յանկարծ ձորում

նրանց առաջը կտրեցին երկու ձիաւորներ, որոնցից մինը կանչեց.

— Զէնքերդ թափեցէք, թէ չէք ուզում գիւլիւլա պաղեցնել:

— Արի տաք, գոււաց Եղիկը անվրդով ճանապարհը շարունակելով. թէ քաջ ես՝ առաջ անցիր, մի մէկ կողմը քաշւած կանգնիլ տամարդու նման:

— Առաջ մի գաք, թէ չէ Եղիկի գիւլէն գուր չի անցնիլ:

— Ախալէր, թէ գու Եղիկն ես, յանձնւում ենք, խղձալի կերտով պատասխանեց Եղիկը և կանգնեց, ծիծաղը չկարողանալով զապել:

— Եղիկ ախալէր, լաւ է, քու անունով քեզ ուզում են վախեցնել, ասաց Մէլօն:

— Լաւ է, թող շարունակին, հիմի որաեղ ինչ աւազակութիւն, մարդասպանութիւն կատարւի՛ Եղիկի անունը կը խօսւի:

— Դեռ շատ էք մեզ սպասեցնելու, ասաց կեղծ Եղիկը, զէնքերդ, զարդերդ թափեցէք:

— Այդ դոչաղ, դու շատ ես լեզվու տալիս, առաջ արի, ահա այս գնդակը քու գդալիր, գլուխդ մեղք է, ջահել ես, կարելի է մեծանաս, պէտքական մարդ դառնաս:

Եւ իրաւի Եղիկի գնդակը կեղծ Եղիկի փափախը իսկոյն ծովկեց ու անցաւ. Մինչ նա ծխի մէջ կոլոււած, յանկարծակի եկած ուզում էր հրացանը ուղղել, Մէլօն գուաց շտապ շտապ.

— Տղայ մեղք եւ, տղայ, զէնքերդ թափէ, արի անձնատուր եղիր Եղիկին:

Սրա վրայ ձիաւորը վրա իջեցրեց թւանքը, թևերը թուլացաւ և միւս ընկերը պատասխանեց.

— Լուիից Եղիկին գտնելու ենք եկել, նրա գե-

րին ենք, յանձնւում ենք. Եղիկը թող մեզ առաջնորդէ, կ'ուզէ իւր ձեռքովն սպանէ:

— Մօս արիք, մի վախենաք, գուաց Եղիկը և գրկեց, համբուրեց նրանց:

Լուեցիք մօտեցան. Եղիկի խումբը ուժեղացաւ, չորս հոգի դարձան. Չորսն էլ զիւներից անցած, չորսն էլ վրէժի ծարաւ, չորսն էլ հարստահարւած, հածւածւած, զըրկւած և անարդւած. Բոլորի սիրտը միւնոյն կրակով էր բորբոքւել:

Լուեցիների մեծի անունը Գրիգոր էր, փոքրինը Մօսօ, երկուսն էլ Թսեղիցի էին. Երբ ծանօթացան և ընկերական դաշն ուլսեցին, Եղիկն ասաց.

— Տղէլք, ձիերդ քեցէք, մինչև Եղիկի դեռ շատ ճանապարհ ունենք, գնանք, դեռ գործեր շատ ունենք:

Այնպէս էին գնում, կարծես անցած սարերն այդ խմբերն ստեղծած լինէին, իսկ դաշտերը իրենց սեպհականութիւնը, իրենց հարկատուները լինէին. Ալանում էին սրաթև թռչունի նման և ամենի երիվարները մըքան գնում էին, կարծես էլ աւել բորբոքւած առաջ անցնել էին փափագում:

Եղիկն անչափ ուրախ էր. արգէն խումբը պատրաստ էր. նպատակը իրագործելու սկզբնաւորութիւնն էր, կատարելագործութեան ծրագիր էր պատրաստում. Երիկւան զէմ Նգդիրի մօտերքին պատահեցին մի քանի հայ գիւղացիների վիրաւորւած, արիւնշաղաղ, գնում էին մովրովի մօտ:

— Այդ տղէք, էդ ինչ է պատահել. ասաց Եղիկը գիւղացիներին:

— Վայ, ես քեզ մատաղ, Վազար ախալէր (այդ սահմանում Եղիկին Գեօգչեցի Վազար անունով էին ճանաչում), ոչխալա քրտերը տարան, անցկացըին Օսմանլիի

կողմը. ինչքան դէմ ընկանք՝ հնար չեղաւ, երկու էլ դադախի սպանեցին. Պազախի ափիցարն էլ չթողեց անցնենք Օսմանլիի կողմը թուղթ գրեց, տևեց, ահա տանում ենք մովրավին, ինքն էլ գիր գրեց իրեն մեծաւորին:

— Ամօթ չէ, գետին չմտաք, որ թողիք քրդերին ձեր կթանը տանելու, անաբուռ մարդիկ էք, դլխներիդ կարծես կնկայ լաչակ զցած լինիք:

— Պազար ախապէր, արդար է խօսրդ, բայց ի՞նչ օգուտ, ուշ իմացանք, ուշ հասանք .. մէկ էլ որ անօրէնները առանց արդեւքի անցան իրենց սահմանը, բայց մեր դադախի մեծը չթողեց անցնելու, թէ չէ կըբերէինք:

— Լաւ. լաւ, հասէք, ուշ է, շտապեցէք:

— Եղիկը ձին քշեց, նրան հետևեցին ընկերները, անցան: Նոյն գիշերը Եղիկը չկարողացաւ քննել. ամբողջ գիշերը բորբոքած մտածում էր և ծրագրում: Մէջ գիշերին ասաց. — Մէջ, Մոսօ, ելէք ձիաների գարին կախեցէք:

Դիւռ երկու ժամ լուսանալուն մնացած՝ ճանապարհ ընկան, և արշալոյսին անցան Պալակցիս լճի մօտով. Այն հրաշալիքներով զարդարւած լիւներն ու լիւնագագաթները իրենց ձագարով արեագալի ժամանակները սրանչացնում էին անցորդին իրենց գոյնզգոյն տեսարաններով; բայց Եղիկը բոլորովին ուղիւ բանով էր հրապուրւած: Սահմանը շրջերուց յետոյ արդէն քրդական ու վրանները և քարուքանդ խարաբանները նկատւեցան: Աշուն էր, բայց մեղմ եղանակներին դեռ ոչխարն ու կթանը սարի միջին լանջերում, տեղ տեղ ձորակներում ու արև կողերում հանդարտ ալրածում էին: Հովհանները հարիւրներով առաջները խառնած՝ մագլցեցնում էին իրենց հօտերին քարափիներից, ապառաժներից և հասցնում ճարակ եղած տեղերը:

Արդէն խաչները դուրս հանած էին, երբոր Եղիկի խումբը գարիմար էր իջնում, աւախկին փորձաւու հովիւը

աչքերը շուրջն ածելուց յետոյ, ձիու գլուխը դարձրեց, որին անմուռն հետևեցին ընկերները: Աչս ժամ յետոյ արդէն երկու հազար քայլ հեռաւորութեան վրայ կանգնած էին մի ընտիր հօտի մօտ, որը հինգ վեց հարիւր գլուխ կթանից էր կազմւած: Եղիկը գիտէր, որ քուրդը մինչեւ ոյժ չուսնի, չի զիջանիլ. այդ պատճառով մի գնդակ ուղղեց հովիւ մահակին, որը ձեւքից ընկաւ:

Հովիւը փոխանակ անձնատուր լինելու, հրացանը ձեռք առաւ, և ընկերներին օգնութեան կանչեց: Գրիգորը, որպէս զի լւր ճարտարութիւնը ցոյց տայ, ասաց.

— Իմ թւանք պատրաստ է. մինչև քու լցնելու քրդին գլորեմ, միջոց չունենայ շարժւելու և առանց պատասխանի սպասելու՝ արձակեց:

Քուրդը գլորեց. ընկերը մկնեց գոռալ.

— Աղա, մի սպանէք, ես ձեր ստրուկն եմ, ու անձնատուր լինելու նշան ցոյց տւեց: Եղիկը մօտեցաւ, անշնչացածի չին առաւ և մկնեց նւազել ու ոչխարը հաւաքել. քուրդը մնաց շւարած, կարծեց, որ Եղիկը քուրդ է ու ասաց քրդերէն.

— Տնւնդ չինւի, Կասկանցի Փրդօ բէզի եղբօրն սպանեցիր, շուտ արա, հեռացիր, թէ չէ հիմի Կասկանցիները կըթափւին ու գու գլուխդ չես ապատիլ նրանց ձեռքից:

— Հա, քու Կասկանցիներդ էլ կոտորւին, Հայդարանցիներդ էլ: Զէնքերդ տոնւր, Այնպէս մտքուր քրդերէն էր խօսում Եղիկը, որ քուրդը մնաց շւարած, չէր կարուցանում բացատրել, թէ ինչպէս մի քուրդ՝ մի քուրդ ելլերի բէզի եղբօրն սպանելուց յետոյ, լոյս ցերեկով նրա ուպրանքն էլ ուղում էր քշել տանել:

— Ահա զինքերս, բայց կուռօ, լաւ բան չես անում, ասաց տատանւելով հովիւ օգնականը:

Զէնքերն առնելուց յետոյ ասաց.

— Դէհ, ոչխարը բարձրացրով դէսի սարը, Քուրզը հնազանդւեց։ Մօսօն նրա հետ սկսան բարձրանալ, իսկ Նղիկը ընկերներով գառների հօտի ետեից գնացին։

Առանց ընդդիմադրութեան գառներն էլ յանձնեցին և Եղիկը չփն առած, ձիու վրայից ածելով հաւաքեց բոլորին և կամաց հասաւ ոչխարին։ Երբ արդէն բաւական հեռացան, ասաց քրդի հովին։

— Մօս արի՛ Քուրզն հնազանդւեցաւ։ Յետոյ Գրիգորին աչքով արաւ, որ քրդի ականջները կտրեց առանց դժւարութեան։

— Դէհ, այժմ գնա՛, քու Կասկանցիներիդ, քու Հայդարանցիներիդ բէգերին ու աղաներին, օջախներին ու շէլսերին պատմիր, թէ մի հայ՝ Քու-Եղիկը նրանց կթանն ու գառները տարսւ։ Այս նրանց խրատ, ուրիշ անդամ մեր սահմանը չգան ու մեր ժողովրդին վնաս չհասցնեն։

— Աղա ջան, բէզը մեղք չունի, այդ անօրէն Սլօն էր ձեր ոչխարները բերողը։

— Թու խարարը ամար, թօղ Սլօնն ու Մլօխն խելքի բերեն, հայի ապրանքի չմօտենան։ Դէհ, բարի ճանապարհ։ Երբ ուրախ ուրախ մօտենում էին սահմանին, յանեկարծ մի մեծ խումբ ձխաւորների նկատեցին, որոնք շտապում էին իրենց հասնելու։ Եղիկը անտարբեր սկսեց աւելի դանդաղ շարժւել, ոչխարն արածեցնելով բարձրացնել։ Քրդերը մօտեցան ապահով գնում։ Եղիկը հոգից կարելի էր հասցնել, ուրիշ մարդ նորից զլորեցին։ Քրդերը պատասխանեցին, բայց միայն Մօսօի ձիու զլուխը կերան, իսկ մնացեալները ազատ, ձևովները տարան լակզու մշաովներին։ Թւանքները նորից լքցնել չէր կարելի, պէտք էր մի քանի բողէ սպասել։ Քրդերի մէջ վլիոցն ընկատ, եօթը հոգի, այն էլ առաջւորները ընկել էին։ Նրանք կանգնեցին։ Եղիկը առաջ էր գնում անընդհատ ընկերների և հօտի հետ։

— Ժամանակ է, ասաց Գրիգորը, դառնանք։

— Սպասիր, թող էլ մօտենան։ Քրդերը պատրաստութեան մէջ էին և զարմացած մնացել էին, որ չորս հոգին քառասուն ձիաւորին մարդա-

տեղ չէին դնում։ Վերջապէս աւելի երկիւղից քան թէ մի ուրիշ բանից՝ զրդւած քրդերը գոռացին։

— Եյդ ուր էք առանում Փրդօ բէդի կթանը, ամարդիններ, անզէն հովկին ինչի՞ սպանեցիք։

— Սուտ էք առաւմ, գոռաց Եղիկը, ահա Փրդօ բէդի եղբօր թւանքը, որն աւար առայ։

Մինչ այս մի գնդակ հասցրին քրդերը։ Եղիկը ձին մեզմ առաջ քշելով ինքը ետ դալձաւ ձիու վրայ և մի գնդակ ուղղեց քրդի ձխաւորների առաջնորդին, որը իսկոյն զլորւեց։ Գրիգորը չուզեց ետ մնալ և մի գնդակ էլ նա հասցրեց, որը տապալեց մի երկրորդի։ Քրդերը բասերեսուն զնդակ իրար ետեից արձակեցին, բայց բոլորը դուր անցաւ։ Մինչ այս Եղիկը ոչխարը չվիտով առաջ էր քշում, ինքն էլ թիկունքը ձիու կողմը, երեսը քրդերին դարձրած կամաց կամաց առաջ էր գնում։ Մինչ քրդերի երկրորդ անգամ շշխանաները լցնելը, չորս ընկերները նորից կրակեցին, և երեք մարդ նորից զլորեցին։ Քրդերը պատասխանեցին, բայց միայն Մօսօի ձիու զլուխը կերան, իսկ մնացեալները ազատ, ձևովները տարան լակզու մշաովներին։ Թւանքները նորից լքցնել չէր կարելի, պէտք էր մի քանի բողէ սպասել։ Քրդերի մէջ վլիոցն ընկատ, եօթը հոգի, այն էլ առաջւորները ընկել էին։ Նրանք կանգնեցին։ Եղիկը առաջ էր գնում անընդհատ ընկերների և հօտի հետ։

Քրդերը երկար չհամբերեցին, մի քանիսը ողիակների մօտ մնացին, միւսները կատարած առաջ եկան։ Մօսօն ուսուի էր գնում, դեռ զէնքերն էլ շալակը։ Նա մի քարի ետե անցաւ և հրացանը ուղղեց եկողներից մէկի վրայ, որի անակընկալ ընկենելու վրայ քրդերը թուլացան։ Մինչ այդ Եղիկն ընկերների հետ մի մի գնդակ էլ արձակեցին, որ բրդերին յուսահատեցրեց։ Երեք քրդեր նորից ընկան,

այն ինչ նրանց և ոչ մի գնդակը նպատակի չհասաւ:
Տղերքն այնպէս արագ էին շարժւում, այնպէս այս ու
այն կորմն էին ձգձգում, որ քրդերը շւարեցան:

— Հրացաններդ լքցրէք, ասաց նղիկը, նրանց միտքը
մօտենալ և սրի կուլ սկսելն է: Պատրաստ կացէք, սրի
կուռում մենք նրանց չենք կարող յաղթել, նրանք շատոր են:

Մինչ այդ քարի ետեկից Մօսօն մի ուրիշի էլ գլորեց,
որը սարսափ ազդեց քրդերի մէջ. նրանք կարծեցին, թէ
շատոր են ասլաստանած քարերի մէջ. Քրդերը կանգնեցին. ոչ առաջ կարողանում էին դնալ, ոչ ետե, երկիւղն
ու ամօթը կուռում էր նրանց մէջ, բոլորը կըսախչէին,
եթէ մէկը միւսից չ'ամաչէր և ոչ ոք առաջին փախչողը
չէր ուզում լինել. Մի գնդակ էլ արձակեցին. քրդերը
բազմութիւն՝ խոռնած, մէկն ու մէկին դնդակը դիպչում
էր, այն ինչ հայերը երեք հոգի և ցրւած, խոյս էին տա-
մա քրդերի նշաններից: Եակ վերջին դնդակների վրայ
քրդերը սկսեցին պատրաստութիւն տեսնել փախչելու:
Արդէն քրդերը ընկնողներին իրենց ձիերի վրայ էին
դնում կապում: Հրացանները մի մի անդամ ևս լցրին,
պատրաստ ձեռքերին հեռանում էին:

— Գրիգոր, Մօսօն առանց ձիի ինչպէս պիտի գայ,
նրան ձի է պէտք, ասաց Եղիկը:

— Հաւատացէք, ես ձեզ հետ չեմ դառնալ, ասաց
Գրիգորը, պէտք է Մօսօի համար մի ձի վեր առնել քըր-
դերից: Այսքան վառողն ու գնդակը միւֆթա խօ չէր:

— Մէլօ, դու կամաց կամաց ոչխարը առաջ տար,
ասաց Եղիկը:

— Հաւատա՛, ես ոչխարի հետ գլուխ չեմ կարող
դնել, ասաց Մէլօն, այդ իմ բանը չէ:

— Մօսօ, արի ոչխարը դու քշէ, ասաց Գրիգորը,
ոչխար շատ ես արածեցրել, այդ քու փէշակն է:

Ճարահատեալ Մօսօն ոչխարն սկսեց քշել, իսկ երեք
ընկերները ետ դարձան: Քրդերի ձիաւորներին մի մասը
փախել, առաջ էր անցել, միւս մասը սպանւածներին էր
տանում: Սարսափելի էր կացութիւնը. նրանք, որոնց հետ
կարելի էր ազատ կոււել, փախել էին, իսկ դիակներով
բեռնաւորւածներին ձեռք տալ տմարդութիւն էր: Եղիկը
քիչ մտածելուց յետոյ քրդերէն գոռաց:

— Մի ձի փոխ տւէք, մեր ընկերներից մէկն առանց
ձիու մնաց: Պարտքս լինի, մի ուրիշ անդամ նրա փոխա-
րէն ձեզ երեք ձի վերադարձնեմ:

Քրդերը մնացին շարած չէին իմանում ինչ պա-
տասխան տալ:

— Ես ձեզ վրայ գնդակ արձակողը չեմ. դուք առա-
ջին անդամ եթէ գնդակ չարձակէիք, այդ զոհերը չէիք
տալ Մարդկութիւնով մեզ մի ձի տւէք մեր ձիու փո-
խարէն:

— Արի տար, գոռաց քրդերից մէկը:

— Փախչողները դուք էք, հետեաբար մեր ծառայու-
թիւնն էլ պիտի կատարէք, բերէք մեզ մօտ:

Քրդերը բաւական վիճելուց յետոյ մի ձի ետ դարձ-
րին, ուր Գրիգորը մօտեցաւ, բոնեց և ետեկ բաշելով
բերեց:

— Մարդավարի, քաջի վայել, թէ որ մարդ տեսնէք,
գնացէք և այնպէս խաբարը տարէք Փրդօ բէզին: Ասէք
մի կոյրհայ էր ձեզ հալածողը:

Երիկնադէմին, երբ ոչխարը մօտեցրին սահմանին,
դագախները հակառակեցան, չէին ո: զում ընդունել սահ-
մանից ներս: Եղիկը ձին առաջ քեց, գնաց դագախների
գորականի մօտ, ասաց.

— Երեկւայ քրդերի տարած, փախցրած ապրանքն

է, գնացինք բերինք. լսնդրում եմ թոյլ տաք ներս անցկացնելու:

— Որ այդպէս է, ապրիք, անցկացրէք:
Բայց երբ զօրականը նկատեց հինգ-վից հարիւր կթանը իրենց գառներով, ասաց.

— Երկրացի, լաւ տոկոսով էք վերադարձել, վաժտուն ոչխարի փոխարէն վեց հարիւր. ապրիք, լաւ է, թող այդ անօրէնները խելքի գան և մեր սահմանին չմօտենան. Դեռ ևս նրանց փաշաշին կախել պիտի տամ, նրանք իմ երկու կտպակիս երեկ սպանեցին:

¶Ե.

Երբ ոչխարը տեղաւորեցին, ցրւեցին պլծան,
Նվիկի նգդիրցի բարեկամն ասաց. Ղազար,
վատ հոտ է գալիս, սլարմիկ փաճաւականը եկել է նրեան,
ապրոնքի նմուշները ճանաչել է, քեզ փնտրել է տալիս:

Հետեւեալ առաւոտ Եղիկը ընկերներով անցաւ Օսմանցու սահմանը, և այնտեղից քշեց գէպի Ալաշկերտ:
Ճանապարհին ամեն տեղ մէկի կարողութիւնը կողոպտելով, անձարին հասցնելով, երկու շաբաթ սարսափ տարածեց Ալաշկերտում և Բասինում: Աերջապէս յոդնած, դադրած նամանաւանդ Ասլիին կարօտած՝ մտաւ Արաքսի ձորը
և գիշերով հասան Քերս, Միրզի ջրաղացը: Այդ ապատանում երկար հանգստանալ չէր կարելի. գիշերը քիչ քնելուց յետոյ դուրս եկան գէպի Շիրակ, Երբ բարձրացան Ալաջի կողքերը, նրանց պատահեց մի ծերուկ, որ գալիս էր Թամստից և պիտի անցնէր Արփաշայը: Ռերուկը ողորմելի պարկ ունէր ուսին և մի նեցուկ դաւազան:
Եղիկը հետաքրքրւեց, թշւառի վիճակը ուզեց իմանալ:

— Սփի՛, ո՞րտեղից ես, հարցըեց.

— Աստւած էլ կորցրել է իմ դաւթարս, զիտեմ որտեղից եմ. մի ժամանակ Արզումցի էի, յետոյ Ախալցիսցի դարձայ, հիմի էլ եկել Գիւմրի ենք ապրում:

— Ո՞րտեղից ես գալիս, ասաց Եղիկը:
— Արզումցից գնում եմ Գիւմրի:
— Ինչպէս երևում է, ընտանիքդ մեծ է:
— Աստւած տւել, չէ խնայել. եօթն աղջիկ ունեմ, գնում եմ մեծին կարգելու:

— Երզումցից փող չատ բերած կը լինիս ափ...
— Քանդուի այն Արզումը, ինչպէս քանդել է, հարիւր քէսայ առնելիք ունեմ, քան դուրուշ չկարողացաց ստանալ. ունեցած չունեցածս էլ թողի, գնում եմ խայտառակ, չեմ խմանում ինչ երեսով դուրս պիտի զամանը ու խոչըրիս առաջ:

Մինչ այդ Եղիկը քսակը հանեց և երկնցուց ծերուկին ասելով.

— Աստւած մեծ է, ինչ ևս չատ դարդ անում, կը հասցնէ:

— Աստւած մէկին հազար վարձատրէ, ասաց ծերուկը լացակամաց, ձեռքն երկնցուց և քիչ էր մնում Եղիկի ձեռքն համբուրէ, բայց նա չթողեց:

— Ե՞ն, ուրիշ ինչ կայ, ինչ չկայ, ասաց Եղիկը ծերուկից բան իմանալու մորքով:

Կռւի տարին Օսմանցու զօրքին հարիւր բեռն Երևանու բրինձ տւի, տասն անգամ փաշաների մօտ գնացի և փողիցս, գտնէ մի ողորմութիւն անդամ չստացայ: Բանակի հրամանատարի մուբհաւկն եմ ներկայացնում, ինձ տուում են—գնա, նրանից ստացի, ևս այն գուրէզոսի թաղած տեղն անդամ չդիմէի, որ մի գնայի և միրտա հովացնէի:

— Ուրիշ ինչ են խօսում. կռիւ խօ չկայ:

— Այդպէս բան չկայ, բայց չեմ իմանում, թէ ինչի Ստամբօլից Ղարս փող են դրկում, մի ծածուկ բան կայ, բայց ես չհասկացայ:

— Ի՞նչից խմացար, որ փող են բերելու Ղարս:

— Պարտէզում յիսուն ձիաւոր սպասում են, որ Երզումից եկող չափարին առնեն տանեն: Դեռ խօսք եղաւ, թէ մի ինչ որ զաշաղ է դուրս ընկել Եղիկ անունով, նրանից վախենում են, այդ պատճառով էլ պատրաստութիւն են տեսել վազօրօք:

Եյս որ լսեց Եղիկը՝ վիասաւորւեցաւ, և ընկերները ժալտացին:

— Ափօ, ասաց Եղիկը, ի՞նչ տամ որ ինձի տաս օսմանցու բանակի վաշացի հարիւր բեռն բրնձի մուրհակը:

— Որդի՛, ինչին է պէտք, առ քեզի. ոչ հաց կտայ, ոչ ջուր:

— Քու ինչին է պէտք, ես վաշաների հետ գործ ունիմ, հաշիւներ ունիմ մաքրելու, կարելի է պէտք դայ:

Եղիկը մուրհակը ծալեց զրպանը դրեց և աչքով արաւ Մէլօլին, որը հարիւր մանէթ փող տւեց ծերուկին. և Եղիկը մնաս բարով անելով ծերուկին, ետ դարձան դէպի Թափիթ: Եղիկը նպատակը չյայտնեց ընկերներին, բայց նրանք նկատեցին, որ հոգեկան ծանր մտածմունքի մէջ էր իրենց առաջնորդը: Երբ Սուրբաթանի մօտով, նահնիների կողքից անցան, հեռւից երկու ձիաւոր նկատեցին, որոնք Ղարսից էին գալիս: Եղիկը ընկերներով մի կողմ քաշւեցաւ, Մօսին ճանապարհի վրայ թողեց, որ լրանէ անցորդներին: Ճանապարհորդները դիւզականներ էին, որոնք ուուսների սահմանի մարդկի էին, Ղարսից բան-ման առել վերտառում էին դէպի իրենց բնակավայրերը: Երբ սովորական հարց-բարեները վերջացրին՝

— Ուր էք գնում, հարցրեց Մօսին:

— Այն կողմը, Երփաչայից դէնր՝ պատասխանեցին: Մեր գիւղում այս կիրակի հարսանիք կայ, թիզ ոռու, շարար, ային-օյին ենք տանում:

— Ի՞չը է, ինչ հարսանիք է:

— Մեր գիւղի համփան՝ քէհի աղջկան, Ասլիկն՝ Եղիկի նշանածին, տանում է իւր տուն: Այս Եղիկ, մրտեղ ես:

Մօսօն նկատեց, որ դրանք Եղիկի բարեկամ տղէրք էին, բայց չէր իմանում ի՞նչպէս վարւի: Քիչ մտածելուց յիտոյ՝

— Արիք գնանք Եղիկի մօտ, ասաց Մօսօն և ճանապարհորդները, թէս տատանեւելով, վախենալով հետեւցին Մօսին, բայց երբ հեռակաց նկատեցին Եղիկին, հանգստացան: Նրանք գիւղական ընկեր տղէրք էին և Եղիկի հետ միասին մեծացած: վստահ էին, որ նրանից իրենց վնաս չի հասնիլ, իսկ տեսնել այդ հերոս դարձած ընկերին, վաղուց վափագում էին:

Եղիկը փաթաթւեց նրանց, կարծես հարազատ եղրայրները լինէին... խեղճ սրտակցից, հարազատից գալար փար չունէր. ինքը մօրը մինումարն էր, հայրն էլ մամի մինումարն է եղել: Բոլոր գիւղական դործերը մէկ-մէկ քննելուց յետոյ նրանց հետ բարեկամ-ծանօթներին շատ բարե ուղարկեց, և ինքը մնաց մողոււած: Զգիտէր՝ դառնար դէպի: Ղարաբիլսա, թէ շարունակէր իւր ուղին:

— Գրիգոր, այսօր ի՞նչ օր է, հարցրեց նա:

— Հինգշաբթի, ասաց Գրիգորը:

— Լաւ է, ասաց, քշեցէք ձիաներդ դէպի Պարտէզ: Նոյն գիւղը հասան, բայց գիւղ չմտան, այլ առաջ գնացին դէպի անտառ: Մինչի լոյս անտառի լսորքում կրակ վառեցին ու հանգստացան: Կունաղէմին ճանապարհին նշանաւոր կէտերում զետեղելուց յիտոյ կարևոր

հրամանները տւեց ընկերներին Նղիկը և բարձրացաւ Հարամ-Վարդանի բարձունքներից դիտելու ճանապարհների անց ու դարձը: Երկար չսպասեցին, տնանկլ վաճառականի ասածն ուղղի էր և Արզումից մասնաւոր չափարը (սուր-հոնդակ) մեծ ձիւորների խմբով դալիս էր: Նղիկը ետ դարձաւ և ընկերներին հաւաքելով, անտառում մի կրճի մէջ որոշ տեղերում իրենց դիրքը բռնած նստան: Բաւական ժամանակ անցնելուց յետոյ, առաջաւոր երեք ձիւորներ եկան անցան, որոնց հետևում էին երկու հազար քայլ հեռու ևս երեք ձիւոր: Սրանց թոյլ տւին անցնելու և Խակ սրանից քառորդ ժամ յետոյ եկան մօտ երեսուն ձիւորներ, ծանր քայլերով, հետևները չորս ջորի, բեռնաւոր-ւած փողով: Նղիկը նշանը տւեց և չորս գնդակները չորս գլաւորների գլարեցին: Առանց սպասելու չորս էլ վշտափի գնդակ արձակեցին, որոնք նոյնպէս իրենց գոհերն ունեցան: Զափարների գլխաւորներին գլորելով արդէն հետեղները շւարեցան: Ահազին անտառ, ծառերի միջից դալիս է գնդակը. մի գիտէ, մրտեղ են ապաստանած և քանի հոգի են: Մի քանի գնդակ արձակեցին չափարները, բայց զուր, ծառերի բներում մնացին այդ գնդակները: Դրութիւնը սոսկալի էր: Եղիկը երկրորդ, երրորդ անդամ լքրեց հրացանը և ամեն անդամ ճիւաւորների գրայ էր ուղղում գնդակը: Գրիգորը, Մէլոն ու Մօսոն նոյնպէս կրակ դարձած, իրար ետեից կարկուտի նման գնդակ թափեցին չափարի ճիւաւորների վրայ, այնպէս որ սրանք կարծեցին, թէ անտառում առնւազը քան երեսուն մարդ է թագնւած: Դրամից յետոյ մի քանի գնդակ էլ հասցըրին ջորիներին, որոնք թաւալեցան իրանց գանձով: Ճար չկար, միայն փախուատը կարող էր չափարի ճիւաւորներին գրկել այդպէս էլ արին, բայց Նղիկին և ընկերների գնդակները նրանց չին թողնում խօս տալով

մահից ապատւելու: Երբեք ըեք հոգի մնացին սաստակած ջորիների զիսին, ասաց Նղիկը.

— Սյդ ջորիների բեռները բարձեցէք ձեր ձիաներին, եթէ մեռնի չեք ուղղում: Խոկոյն հրամանը կատարեցին:

— Դէս, ձեր զինքերը թափեցէք այդտեղ և բեռ-նաւորւած ձիերը քեցեցէք այս կողմը: Այդ էլ կատարեցին, և երբ բաւական հեռացան, ասաց Եղիկը.

— Այս օրդու միւշիւրի (բանակի հրամանատար) սէրքին տարբէք Ղարս, փաշալին տւէք և ասէք. կուի տա-րին զօրքին արւած հարիւր բեռն բրնձի փողը եկաւ, տարաւ Փոռ-Եղիկը: Այս սպանութիւններն էլ նրա համար կատարեց, որ փաշաները տասն տարի է, հարիւր ան-գամ նրանց խնդիր տրւեց և չկատարեցին աղքատի, թը-ւառի խնդիրը: Թո՞յ ուրիշ անդամ ժողովրդին չկողոպտեն և անմեղների կոտորածի պատճառ դառնան:

Չափարները ետ դարձան հետի, խակ Նղիկը իւր ըն-կերների հետ Սողանլու անտառների խորքերից առաջ գնացին դէպի Փանակի կողմերը, որտեղ երեք ձիաբեռն ոսկին թաղելուց յետոյ, մի ձիաբեռը լըցրին մաս մաս չորս ձիու խորջինները և Գէօլայի անտառով Արդահանի վրայով դիմեցին դէպի Ախալքալաք:

Կիւրակէ առաւոտ Ախալքալաքից դուրս եկան, եղա-նակը ամպամած էր և երբեմն մանր ձիւն էր բրդում, երբեմն էլ քամին մոլորեցնում էր: Արփա լճի մօտ քիչ մնաց նրանք մոլորէին, ճանապարհից արդէն դուրս էին ընկել: Վերջապէս զանդերու ժամանակ հազիւ հասան նիշթափա: Թէ նոյեմբերի սկիզբն էր, բայց Կուգալքի սարերն ու սարահարթները հոկտեմբերից ծածկւում են սպիտակ սաւանով: Անհրաժեշտ էր, ձիաներին հարկաւոր էր կեր տալը: Իջան, զիւղ մտան, և մի երկու ժամ ձիերին կերակրելուց և երեքն էլ հանգստանալուց յետոյ, մութը

լաւ ընկած էր, դուրս եկան: Աշնանային մառախչապատ մութ գիշեր և երկար ճանապարհ, հազիւ մէջ գիշերին նրանք հասան Գիւմրի:

— Տղերք, քշեցէք, ասաց Եղիկը, քշեցէք, թէ չէ հարսը տարաւ Մղդով Կիւրեղը: Եւ ուղիղ: Հարանիքը բռնել էին այդ գիշեր: Ողջ Դարաքիլիսան հաւաքելու էր Մղդով Կիւրեղենց տունը. Էլ դափ, Էլ գուռնա, Էլ դահալ, Էլ մէջ, ձայն ձայնի էին տւել երկինք թնդացնում: Մղդով Կիւրեղը Արգրումցի աղաներին էլ էր կանչել, որոնց համար սաղքեամանչայ (ջութակ), աշղներ ու ասողներ, մի խօսքով իրար էին խառնել:

Մինչև Երգրումցի աղաներին քաւասուն տեսակ կերպով, աշբազով ու չէրկզբացով (խոհարար և կարկանդակործ) ծանր ու բարակ հիւրասիրել էր Մղդով Կիւրեղը, մինչև ահազին բազմութիւն զիւղացիներին կշտացրել էր, մինչև խնամոնց և խաչախազօր դասին շահել էր, արդէն կէս գիշերն անցել էր: Մինչև դուրս եկան, մինչև հասան խնամոնց տունը, մի ժամ էլ այդաեղ կորցրին: Ասլին էլ մի ժամ աւել տանջեց տալցուներին և ներցուներին, որոնք հազար ու մի տանջանքով, մօր, քրոջ, հարսի և մօր, քրոջ աղջիկներին հազիւ զիջաւ և մի կերպ հազնւեցաւ հարսանեկան զարդերը: Լաց էլ լինում, մանջում էր, կատաղում էր Ասլին, բայց ճար չուներ:

— Մենք էլ նազ անելով ենք հագել այդ շրերը, մենք էլ լացել ենք, բայց երկու օրից յետոյ ոչ միայն մուտացել, այլ անչափ ուրախացել ենք. ասում էին ապգական տիւ կինները:

Գերջապէս Ասլին երկար մտածերուց յետոյ մնուից մորումը՝ պատակել, գնալ Մղդով Կիւրեղենց տունը, բայց ոչ նրանց հարս դառնալ, ոչ Մուքելին կնիկ: Նա համոզ-

ւած էր, որ երբեք Նղիկը իրեն չէր մուտանալու և թողնելու ուրիշի զբան:

Էլի փողերը հնչեցան, էլի դուրս եկաւ հարսները և թագաւորն ու թագուհին թափորավ կողք կողքի գնացին եկեղեցի: Մուքելն երանութեան մէջ էր զգում իրեն, իսկ Ասլին չարչարանքի: Շատ յոյս ուներ Ասլին, որ մինչև եկեղեցի մասնելը մի ճար կըհասնի, բայց զուր: Երբ երգերն ակսեցին, երբ տէրտէրն Ասլու ձեռքը յանձնեց Մուքելին, սարսաց խեղճ կոյար, բայց ակամայ ձեռքը բաց չէր թողնում Մուքելին:

— Աշքարոյս, հա, աշքարոյս, գուռում էին ամեն կողմից: Յափորը ետ շարժւեց: դուրս եկան եկեղեցուց և նոյն եղանակով սկսեցին դիմել Մղդով Կիւրեղենց տունը: Յանկարծ, երկու, երեք, չորս վշտովի կըակ իրար ետենց: Բոլորը կարծեցին, թէ հասնուրներն են ջիրիդ խաղացող ձիաւորները: Ասլին ցնցւեց, զգաց, հոտ առաւ որ մի բան պիտի կատարւէր, բայց սաստիկ զայրացել էր, որ այնքան ուշացել էր:

Մէկ էլ գուռացին – Եղիկը, Եղիկը, զէնք առէք, հասէք, օգնեցէք... Մէլօն մի քանի բուռը սոկի սփառեց հարսներին: Հարսնուրները խառնւեցան, վաղեցին սոկին ժողովելու, տակ ու վրայ եղան: Եղիկը ձին քերց, Ասլին թեկից բռնելն ու թարքը զցելը մէկ եղաւ: Ջին մարակեց ու առաջ անցաւ: Գրիգորը, Մօսոն ու Մէլօն նրա քամակից հեռացան: Գրիգորը գուռում էր.

— Գիւլս սպաղեցնող չկայ, հրամեցէք: Մէլօն կանչում էր, սոկի ժողովողներ, եկէք, թալան է: Բայց ուշ էր:

Երբորդ օրը Նղիկը խը Գէօհչայի տանն էր Ասլին հետ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0153096

